

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
ՄԵՆԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԻ ԴԱՍԵՐ

ԴԵՄՔԵՐ ԵՒ ԴԵՊՔԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՊԱՏՄՈՒԹԵՆԷՆ

Է. Գ Ի Ր Ք

Զ. ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՄԱՐ



Քաղեց եւ պատրաստեց՝
ՆՈՒՊԱՐ ՍՐԿ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ՏՊԱՐԱՆ ՄԵՍՐՈՊ

ՊԵՐՈՒԹ

1967

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Բարեշնորհ Նուպար Աւգ. Սրկ. Պերպէրեան այս դասագրքով կուգայ նոխացնել ԿԻՐ. ԴՊՐՈՑԻ ԴԱՍԵՐ դասագիրքերու շարքը:

Մեծապէս գնահատելի կը գտնենք իր այս աշխատութիւնը, որուն միջոցաւ հայ պատանիներ հեշտիւ պիտի կարենան հազարդըւիլ, մեր դարաւոր Ս. Եկեղեցւոյ Սրբազան հայրերու կեանքին ու գործունէութեան:

Բարեշնորհ Սարկաւագին այս դասագիրքն ալ, պարզ եւ դիւրահասկնալի լեզուով պատրաստուած է, միւսներուն պէս: Վստահ ենք որ իր այս հանգամանքով, կրօնի դասը դիւրամատչելի եւ հետաքրքրական պիտի դարձնէ ան, հայ պատանիին:

Կիրակնօրեայ Դպրոցի Զ. դասարանի իւրաքանչիւր աշակերտ, պարտի ունենալ անկէ հաստ մը, որպէսզի կարելի լիւրջիւնը ունենայ կանոնաւոր կերպով մասնակցելու դասաւանդութեանց:

Կը հաւատանք որ, այս դասագիրքը մեծապէս օգտակար պիտի ըլլայ, հայ պատանւոյն մօտ արթնցնելու սէր եւ յարգանք, հանդէպ՝ Հայց. Առք. Ս. Եկեղեցւոյ Սրբազան հայրերուն եւ քաջարի վկաներուն:

5 ՕԳՈՍՏՈՍ 1967

ԱՆԹԻԼԻԱՍ

ՏԻՐԱՅՐ ԱԲԵՂԱՅ ՓԱՆՈՍԵԱՆ

ՎԱՐԻՉ-ՏՆՕՐԻՆ Հ.Ե.Կ.Դ.-Ի

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Սոյն դասագիրքը «Կիրակօրեայ Դպրոցի Դասեր»ու շարքին եօթներորդ քիւն է եւ պատրաստուած է Հայց. Եկեղեցւոյ Կիր. Դպրոցներու Զ. դասարանի աշակերտներուն համար: Կը պարունակէ երեսուն դասեր, որոնք առնուած են Հայց. Եկեղեցւոյ պատմութեան:

Մեր հորահաս սերունդին հայեցի դաստիարակութեան համար յոյժ կարեւար է Հայց. Եկեղեցւոյ պատմութեան ուսուցումը: Մեր պատանները իրենց Մայրենի Եկեղեցին սիրելու եւ անոր փարելու համար պէտք է իրագրել դառնան մեր նախնեաց սուրբ հաւատքին, կենցաղին, նուիրումին եւ մարտնչումներուն:

Սիրելու համար պէտք է նանչնալ, եւ սիրուելու համար պէտք է նանչցուիլ: Հայ պատանին ու երիտասարդը իր Մայրենի Եկեղեցին անցեալը որքան սերտէ, այնքան աւելի պիտի սիրէ գայն ու պիտի ջանայ հետեւիլ իր սուրբ հայրերու օրինակին: Այս մտադրութեամբ ձեռնարկեցինք սոյն դասագիրքի պատրաստութեան, այն յոյսով որ դոյզմ օգտակարութիւն մը պիտի կրնանք ունենալ մեր մատաղ սերունդի կրօնաբարոյական դաստիարակութեան:

Սոյն դասագիրքի պատրաստութեան ատեն օգտուած ենք հետեւեալ աղբիւրներէն.—

- «Ազգայնութիւն» — Մաղափա Արք. Օրմանեան,
- «Աշխարհի Լոյսն ի Հայս» — Գարեգին Եպս. Տրապիզանի,
- «Պատմութիւն Հայ Եկեղեցւոյ» — Գեորգ - Մեսրոպ,
- «Պատմութիւն Երուսաղէմի» — Սարալանեանց,
- «Հայոց Պատմութիւն» — Փաւստոս Բիւզանդ,
- «Վարդանանց Պատմութիւն» — Եղիշէ,
- «Պատմութիւն Կաթողիկոսաց Կիլիկիոյ» — Բարգէն Կաթողիկոս
- «Դասեր Աւետարանէն» — Բարգէն Կաթողիկոս,
- «Յուշիկք» — Հ. Ղեւոնդ Այիշան:

Ինչպէս մեր Ե. Դասագիրքի յառաջաբանին մէջ ըսած ենք, հոս եւս կը կրկնենք, — «Յաջող դասաւանդութիւն մը ունենալու համար ուսուցիչը լաւ իւրացուցած ու պատրաստած ըլլալու է դասը...: Իր մանկավարժական մեթոտներուն միացնելու է հաւատք, աղօթք եւ օրինակելի կեանք: Քրիստոնէական կրօնի դասաւանդութիւնը առանց աղօթքի եւ Աստուծոյ գորութեան չի կրնար հասնիլ իր նպատակին»:

ՆՈՒՊԱՐ ՍՐԿ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Ա. ԴԱՍ

ՀԱՅՈՑ ԱՌԱՋԻՆ ԼՈՒՍԱԽՈՐԻՉՆԵՐԸ

Ա.

ՍՈՒՐԲ ԹԱԴԷՈՍ ԱՌԱՔԵԱԼ

.....

Յիսուս իր յարութենէն ետք իր աշակերտներուն պատուիրեց երթալ աշխարհի ամէն կողմերը ու քարոզել փրկութեան Աւետարանը:

Առաքեալներ Յիսուսի պատուիրին համաձայն ցրուեցան աշխարհի ամէն կողմերը ու իրենց քարոզութիւններով բազմաթիւ հեթանոսներ քրիստոնեայ եկեղեցւոյն անդամագրեցին զանոնք մկրտելով Հօր, Որդւոյն եւ Ս. Հոգւոյն անունով:

Յիսուսի տասներկու առաքեալներէն Թադէոս եւ Բարթողիմէոս Հայաստան դալով տարածեցին Քրիստոսի Աւետարանին լոյսը եւ հիմնեցին Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին:

Առաջին անգամ Հայաստան այցելեց Թադէոս առաքեալ եւ մեր երկրին զանազան կողմերը պտրտելով քարոզեց ու հրաշքներ դործեց: Շատեր անոր քարոզներէն աղագւելով Քրիստոսի հաւատացին եւ մկրտուեցան:

Թադէոս առաքելի քարոզութենէն առաջ մեր պապերն ալ ուրիշ աղբերու նման հեթանոս ըլլալով կուռքեր կը պաշտէին, որոնց մէջ նշանաւոր էին Անահիտի, Աստղիկի, Վահագնի եւ Արամազդի արձանները: Միւս հեթանոս աղբերու պէս Հայերն ալ չէին զիտեր Աստուծոյ օրէնքներն ու կանոնները եւ կ'ապրէին մեղաւորից կեանք մը հեթանոսական խաւարին մէջ:

Թադէոս առաքելի գործունէութեան պիտուոր կեդրոնը եղաւ Վասպուրական Նահանգի Արտաղ գաւառը, որուն Շուարշան զիւղաքաղաքին մէջ կը գտնուէր Հայոց Սանատրուկ Թադաւորին պալատը: Առաքելը կրցաւ թափանցել նաեւ Թադաւորական պալատէն ներս եւ ունետարանել զՔրիստոս: Հոն եւս զանուեցան մարդիկ որոնք ընդունեցան Աստուծոյ լոյսը:



Ս. Թադէոս Առաքեալ

Թադաւորին ազջիկը՝ Սանդուխտ կոյս, Թադէոս առաքեալի քարոզութիւններն ու հրաշքները խմանալով, ուզեց անձամբ տեսնուիլ անոր հետ եւ լսել Յիսուս Քրիստոսի մասին: Գիշեր մը դադաւազողի գնաց առաքեալին մօտ որ կը քարոզէր բազմութեան: Առաջին հանգիստին իսկ Աստուծոյ լոյսը թափանցեց Սանդուխտի սրտին մէջ եւ Քրիստոսի հաւատալով մկրտուեցաւ: Նոյն պահուն լուսեղէն խաչ մը երեւցաւ սուրբ կոյսին զլիտուն վերեւ եւ երկնային ձայն մը լսուեցաւ որ կ'ըսէր, «Զուարճացիր եւ ուրախ եղիր դուստր գովելի



Ս. Սանդուխտ կոյս

եւ բարի հարս երկնաւոր Փետային»: Ներկաներէն շատեր այս լոյսը տեսնելով եւ ձայնը լսելով քրիստոնէայ դարձան:

Այնուհետեւ Սանդուխտ կոյսին սուջեւ բացուեցաւ կեանքի նոր շրջան մը՝ սրբութեամբ լեցուն: Ան սկսաւ ապրիլ Աստուծոյ համար ու հետամուտ ըլլալ երկինքի արքայութիւնը ժառանգելու: Իր հօր պալատին ճոխութիւնն ու փարթամութիւնը այլեւս զինք չէին հետաքրքրեր եւ ոչ ալ՝ հեթանոսական զեղխ ու մեղսալից խնջոյքները, որոնցմէ կը խորշէր:

Սանդուխտ կոյս յարաբերութեան մէջ մտաւ նորադարձ հայ քրիստոնէաներուն հետ: Կը քաջալերէր դանոնք՝ Քրիստոսի սիրոյն մէջ հաստատելու համար: Կ'օգնէր անկեալներուն ու կը սփռփէր զանոնք՝ դառնալով աջ բազուկը Թադէոս Առաքեալին:

Քրիստոնէաներուն թիւը հետզհետէ կը բազմանար Հայաստանի մէջ: Նոյնիսկ կարգ մը իշխաններ ընդունած էին նոր կրօնքը ու

կ'ապրէին քրիստոնէական մաքուր կեանք մը՝ զերծ ամէն տեսակ մեղքերէ ու ապականութիւններէ: Սակայն այս նորօրինակ շարժումը հաշտ աչքով չէր դիտուեր քուրմերուն եւ թագաւորին կողմէ: ուստի հալածանքը սկսուեց նորադարձ քրիստոնեաներու դէմ եւ բազմաթիւ հաւատացեալներ բանտարկուեցան:

Թագաւորը իր ազնկան քրիստոնէութեան յարիւն իմանալով նախ խրատեց ու ջանաց համոզել զայն, որպէսզի ուրանար քրիստոնէութիւնը եւ վերադառնար իր հին կրօնքին: Սակայն Սանդուխտ անդրդուելի մնաց իր սուրբ հաւատքին վրայ եւ չուրացաւ իր Տէրը որուն որդեգիր եղած էր մկրտուելով:

Սանատրուկ իր ազնկան ընդդիմութեան վրայ զայրացաւ եւ հրամայեց բանտարկել զայն ուրիշ քրիստոնեաներու հետ:

Թաղէոս առաքեալ պահապանի մը թոյլտուութեամբ բանտ մտաւ: Ողջունեց բանտարկեալները եւ ապա Սանդուխտ կոյսին մօտեանալով համբուրեց անոր շղթաները: Մխիթարեց բոլորը, աղօթեց եւ քաջալերեց զանոնք որ ամուր մնան իրենց հաւատքին վրայ, որպէսզի կարենան արժանի ըլլալ երկնքի արքայութեան: Բանտապահներէն ոմանք Թաղէոս Առաքեալի խօսքերէն ազդուելով դարձի եկան ու քրիստոնեայ մկրտուեցան:

Թագաւորը առաքեալին բանտ այցելութեան լուրը առնելով սաստիկ բարկացաւ եւ հրամայեց սպաննել բանտապահները: Ազար իր առջեւ բերել տուաւ Սանդուխտը: Շատ աղաչեց ու թախանձեց որ ազնկը ուրանար իր նոր կրօնքը: Սակայն ան ամուր կարչած էր իր նոր հաւատքին: Անցան օրեր եւ կատարուեցան նոր փորձեր: Թագաւորը անոր մօտ զրկեց աղբեցիկ իշխաններ՝ զայն ետ հեթանոսութեան բերելու նպատակով: Բայց ի դուր անցան իր բոլոր ջանքերը: Սանդուխտի մօտ դացող իշխանները չկրցան շեղեցնել զայն ճշմարտութեան ճամբէն. ընդհակառակը՝ իրենք անոր խօսքերը լսելով հաւատքի եկան եւ քրիստոսի հաւատաւով մկրտուեցան:

Սանատրուկ այս բաները իմանալով սաստիկ բարկացաւ ու կոտորել տուաւ բազմաթիւ քրիստոնեաներ, ի մէջ այլոց Սամուէլ իշխանն ու իրեն ազգական Չարմանդուխտ իշխանուհին: Ի վերջոյ հրամայեց սպաննել նաեւ Սանդուխտը: Դահիճները կատարեցին թագաւորին հրամանը եւ Սանդուխտ կոյս նահատակուեցաւ:

Երեք օր ետք Սանատրուկ ձերբակալել տուաւ նաեւ Թաղէոս Առաքեալը եւ սոսկալի չարչարանքներու ենթարկելէ վերջ հրամայեց սուրով սպաննել զայն: Դահիճները դղեակէն դուրս հանեցին Առաքեալը եւ ձորակի մը եզրին խողխողեցին զայն:



Ս. Սանդուխտ կոյսի նահատակութիւնը

Ս. Թաղէոս առաքեալի քարոզութեան շնորհիւ Հայաստանի մէջ Քրիստոսի հաւատացին 3400 անձեր, որոնք եղան առաջին անգամները Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցիին:

Ե Զ Ր Ա Կ Ա Յ Ո Ի Թ Ի Ի Ն

1) Իւրաքանչիւր հայ քրիստոնեայ պէտք է վառ պահէ իր սրտին մէջ Ս. Թաղէոս առաքեալին յիշատակը: Ան ամէն տեսակ նեղութիւններ ու գրկամեներ յանձն առնելով լուսաւորեց Հայաստան աշխարհը, որպէսզի միւս հեթանոս ազգերու նման հայերն ալ Քրիստոսի հաւատաւով բօքափէին իրենց հեթանոսական մեղսալից կեանքը եւ արժանի ըլլային երկինքի արքայութիւնը ժառանգելու:

2) Իւրաքանչիւր հայ քրիստոնեայ, մահաւանդ հայուհիներ օրինակ պէտք է առնեն Ս. Սանդուխտ կոյսին ամուր հաւատքէն եւ քրիստոնէական մաքուր նկարագրէն: Ան հետամուտ եղաւ ժառանգելու երկինքի արքայութիւնը եւ արիամարիեց աշխարհի սին փառքերն ու մեղսալից հանոյքները:

Հ Ա Ր Յ Ո Ւ Մ Ն Ե Ր

- 1) Առաջին անգամ ո՞ր առաքեալը Հայաստան եկաւ:
- 2) Թաղէոս առաքեալի քարոզութենէն առաջ հայեր ի՞նչ կը պաշտէին:
- 3) Ո՞վ էր հայոց թաղաւորը Թաղէոս առաքեալի ժամանակ:
- 4) Ի՞նչ էր անունը Սանատրուկի աղջկան:
- 5) Սանատրուկ ինչո՞ւ համար բանտ նետել տուաւ իր աղջիկը:
- 6) Թաղէոս առաքեալ բանտ երթալով ի՞նչ ըրաւ:
- 7) Թաղաւորը առաքեալին բանտ այցելութեան լուրը առնելով ի՞նչ ըրաւ:
- 8) Սանատրուկ ինչո՞ւ համար սպաննել տուաւ իր աղջիկը:
- 9) Ո՞վ սպաննել տուաւ Թաղէոս առաքեալը:
- 10) Թաղէոս առաքեալի միջոցաւ քանի՞ անձեր քրիստոնէութիւնը ընդունեցան Հայաստանի մէջ:



Բ. ԴԱՍ

ՀԱՅՈՑ ԱՌԱՋԻՆ ԼՈՒՍԱԽՈՐԻՉՆԵՐԸ

Բ.

ՍՈՒՐԲ ԲԱՐԹՈՂԻՄԷՈՍ ԱՌԱՔԵԱԼ

.....

Թաղէոս առաքեալի քարոզութիւններուն ատեն Հայաստան եկաւ նաեւ Բարթողիմէոս առաքեալ, որուն բուն անունն էր Նաթանայէլ: Յիսուս իր առաջին հանդիպումին Նաթանայէլին համար ըսած էր, «Ահաւասիկ ճշմարիտ իսրայելացի մը՝ որուն մէջ նենդութիւն չկայ»:

Բարթողիմէոս առաքեալ Յիսուսի Աւետարանին քարոզութեան համար դնաց Պարսկաստան եւ հասաւ մինչեւ Հնդկաստան: Իսկ վերադարձին անցաւ Հայաստան եւ առաջին անգամ մտաւ Սիւնեաց Նահանգը:

Անոր քարոզութեան պիտաւոր վայրերէն մէկը եղաւ Գողթն գաւառը, որուն Շար ունունով իշխանը Քրիստոսի հաւատալով իր տունովը մկրտուեցաւ:

Բարթողիմէոս առաքեալ Գողթն գաւառէն անցաւ Արտաշատ քաղաքը, ուր հանդիպեցաւ Թաղէոս առաքեալին եւ ողջագորուեցաւ անոր հետ: Այս հանդիպումէն ետք՝ գնաց պարսկահայոց Հեր եւ Զարեանդ գաւառը, ուր քարոզեց եւ Աստուծոյ զօրութեամբ կատարեց հրաշքեր, բժշկութիւններ ու նշաններ եւ պատճառ դարձաւ շատերու քրիստոնէայ ըլլալուն:

Ապա իր ճամբան շարունակելով մտաւ Անձեւացեաց գաւառը: Հոն կը գտնուէր «Դարբնոց Քար» կոչուած քարայր մը ուր կը պաշտուէր Անահիտի կուռքը՝ որուն քուրմերը դարբիններու դեր ալ կը կատարէին: Այս քուրմերը քարանձաւներու մէջ մեծ կրակ կը վառէին եւ քարի ու երկաթներ իրարու դարնելով ահռելի ձայներ կը հանէին, որոնց արձագանգը անձաւներու մէջ տարածուելով սարսափ կ'ազդէր պարզամիտ ժողովուրդին: Մարդիկ կը կարծէին թէ այդ որսառնները զեւերու եւ ուղիներու ձայներ են:



Ս. Բարթողիմէոս Առաքեալ

Բարթողիմէոս իր քարոզութիւններու ընթացքին պայքարեցաւ այդ քուրմերուն դէմ, որոնք լերան մը կատարը բարձրացած՝ քարեր կը նետէին վար՝ սուր ճիշեր արձակելով: Սուրբ Բարթողիմէոս իր աղօթքին զօրութիւնովը յաջողեցաւ կործանել ու փչրել Անահիտի արձանը եւ Աստուծոյ աջակցութեամբ հալածեց քուրմերը: Կործանած կուռքին տեղ կանգնեց Քրիստոսի Սաչը եւ այդ վայրը վերածեց եկեղեցիի: Հոն տեղաւորեց Սուրբ Աստուածածնի պատկերը, զոր իր հետ բերած էր Երուսաղէմէն:

Բարթողիմէոս առաքեալ իր քարոզութիւնները շարունակելով

անցաւ Աղբակ դուռը: Հոն հանդիպեցաւ Սանատրուկ Թագաւորի քրոջ՝ Ոգուհի իշխանուհիին: Ոգուհի առաքելին միջոցաւ հաւատօքի գարավ մկրտուեցաւ ու սկսաւ տարիլ քրիստոնէական սրբութեամբ՝ հետո մնալով հեթանոսական զեղխութիւններէ եւ ապականութենէ:

Սանատրուկ տակաւին չէր յաղեցած քրիստոնէաները շարգելէ: Իր քրոջ քրիստոնէայ գառնայն իմանալով շատ դաշտացաւ ու Տերենտ հազարապետը զրկեց անոր մօտ, որպէսզի պահ համոզէ եւ ստիպէ եւ կոտորաշտութեան դառնալու: Սակայն Տերենտ իշխանը չկրցաւ Ոգուհիին համոզել: Ընդհակառակը՝ ինք ազդուեցաւ իշխանուհիին իսուքերէն եւ քրիստոնէայ մկրտուեցաւ:

Սանատրուկ այս լուրը առնելով սաստիկ դաշտացաւ, եւ իսկոյն իր քով բերել տուաւ Ոգուհիին, Տերենտ իշխանը եւ Բարթողիմէոս առաքելը: Երկար հարցաքննութենէ մը ետք անտանելի չարչարանքներու ենթարկելով մորթազերծ ընել տուաւ Բարթողիմէոս առաքելը: Իսկ անոր նահատակութենէն վերջ դահիճները սուրով խողխողեցին Ոգուհիին, Տերենտ իշխանը եւ ուրիշ հաւատացեալներ:

Սուրբ Թագէոս և Սուրբ Բարթողիմէոս առաքելներ Հայաստանի մէջ ձեռնադրեցին Եպիսկոպոսներ, Քահանաներ ու Սարկաւազներ, որոնք շարունակեցին Քրիստոսի Աւետարանին քարոզութիւնը հայ ժողովուրդին մէջ: Իսկ Սանատրուկ Թագաւորին կողմէ ի դորձ զրուած հալածանքները չկրցան կասեցնել Քրիստոսի լոյսին տարածումը մեր երկրին մէջ:

Ե Զ Բ Ա Կ Ա Յ Ո Ի Թ Ի Ի Ն

1) Ս. Թագէոս եւ Ս. Բարթողիմէոս առաքելները եղան Հայոց առաջին Լուսաւորիչները: Անոնք հիմնեցին Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին որպէսզի Աւետարանի անշէչ լոյսը միշտ վառ մնայ մեր երկրին մէջ ու դարեր շարունակ լուսաւորուին հայ սրտերը:

2) Մեր պարտականութիւնն է մօտեմալ այդ լոյսին, հաւատարիմ մնալ Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցիին եւ կատարել անոր օրէնքներն ու կանոնները, որոնք աւանդուած են մեզի Յիսուսի առաքելայնրէն եւ անոնց յաջորդող սուրբ հայրապետներէն:

Հ Ա Ր Ց Ո Ւ Մ Ն Ե Ր

- 1) Ս. Թաղէոսէն ետք ո՞ր առաքեալը Հայաստան եկաւ:
- 2) Գողթն գաւառի Շար իշխանը ի՞նչ ըրաւ:
- 3) Ո՞ր կուռքին արձանը դրուած էր Դարբնոց Քար կոչուած քարայրին մէջ:
- 4) Հեթանոս քուրճերը ի՞նչ կ'ընէին հոն:
- 5) Բարթողիմէոս առաքեալ ի՞նչ ըրաւ այդ քուրճերուն դէմ:
- 6) Առաքեալը Անահիտի կուռքին տեղը ի՞նչ կանգնեց:
- 7) Բարթողիմէոս առաքեալ ի՞նչ բանի վերածեց Դարբնոց Քար քարայրը:
- 8) Ո՞վ էր Ուլուհի:
- 9) Ուլուհի որո՞ւմ միջոցաւ քրիստոնեայ դարձաւ:
- 10) Սանատրուկ ինչո՞ւ համար Տերենտ իշխանը Ուլուհիին մօտ ղրկեց:
- 11) Տերենտ իշխանը Ուլուհիի խօսքերէն ազդուելով ի՞նչ ըրաւ:
- 12) Սանատրուկ Տերենտ իշխանին դարձը իմանալով ի՞նչ ըրաւ:
- 13) Ինչպէ՞ս նահատակուեցան Բարթողիմէոս առաքեալը, Ուլուհին եւ Տերենտ իշխանը:



Գ. ԴԱՍ

ՈՍԿԵԱՆՔ ԵՒ ՍՈՒՔԻԱՍԵԱՆՔ

.....

Թաղէոս առաքեալի քարոզութեանց միջոցին հռովմայեցի հինգ արքայազուն իշխաններ դեսպանի պաշտօնով Հայաստան եկան: Միջագետքի սահմաններուն վրայ անոնք Հանդիպեցան Թաղէոս առաքեալին եւ անոր քարոզներէն ու հրաշքներէն ազդուելով քրիստոնեայ դարձան: Իրենց գլխաւորին անունն էր Խրիւսոս որ կը նշանակէ Ոսկի: Անոր անունով ալ խումբը կոչուեցաւ Ոսկեամբ:

Թաղէոս առաքեալ քահանայ ձեռնադրեց Ոսկին, և այնուհետեւ անոնք իրենց ունեցած ինչքերը ծախելով հետեւեցան առաքեալին ու անոր գործակիցներ դարձան:

Թաղէոս առաքեալի նահատակութենէն վերջ Ոսկեանք առանձնացան Եփրատ գետի ափուքին մօտ Ծաղկեայ կոչուած լեռը եւ վարեցին ճգնաւորական կեանք: Սակայն յաճախ իրենց ճգնարանէն իջնելով կ'երթային Հայաստանի Արտաշատ մայրաքաղաքը՝ Քրիստոսի Աւետարանը քարոզելու համար:

Ոսկեանց քարոզութիւնը անպտուղ չմնաց: Անոնք յաջողեցան մուտ գործել նոյնիսկ Արտաշէս Թաղաւորի պալատէն ներս եւ Յիսուս Քրիստոսը քարոզել շատերուն:

Հայոց Սաթենիկ Թագուհիին Ալան ազգականներէն տասնրեօթը պալատականներ Ոսկեանց քարոզութիւնովը քրիստոնեայ դարձան եւ օրին մէկն ալ անոնց հետ լեռ քաշուեցան ճգնաւորական կեանք վարելու համար:

Նորագարձ Ալաններու գլխաւորին անունն էր Բահադրա, որ Ոսկի քահանայէն մկրտուելով անուանուեցաւ Սուրբաա եւ իրենց խումբն ալ անոր անունով կոչուեցաւ Սուրբաաւամբ:

Տասնրեօթը Ալաններու պալատէն հեռացումէն ետք, փնտրուողներ եղան անոնց հետքը դտնելու համար: Սակայն անոնք ժամանակ մը կրցան անյայտ մնալ Ոսկեանց հետ:

Արտաշէս Թագաւորի որդին՝ տասնըվեցամեայ Արտաւազը, օր

մը իր եղբայրներուն հետ որսի ելած տոկն, պատահամբ հանդիպեցաւ Ոսկեանց եւ Սուքիասեանց ճշնարանը: Արքայորդին յորդորեց իր Ալան ազգականները որ թսղուն այդ վայրը եւ իրենց հաւատքը ուրանալով վերագառնան պալատ:

Սուքիասեանք մերժեցին կատարել արքայորդին հրամանը: Անոնց մերժումին վրայ Արտաւազը բարկացաւ եւ հրամայեց Ոսկեանց որ խրատեն իրենց աշակերտները՝ այդ ճշնարանէն հեռանալու համար:

— Իրենք թող ընտրեն իրենց օղուտը, պատասխանեցին Ոսկեանք:

Անոնց այս պատասխանը աւելի զայրացուց Արտաւազը, որ խփոյն խփոյն տուաւ Ոսկեանները եւ հեռացաւ: Արքայորդին Ոսկեանները սպաննելէ վերջ խնայեց Սուքիասեաններուն, հաւանորար վերջինները իրեն ազգական ըլլալուն համար:

Սուքիասեանք իրենց մարտիրոսացած ուսուցիչներուն մարմինները վերցուցին եւ թաղեցին: Իրենք ալ ժամանակ մը վերջ, իրենք դիրենք անապահով դալով փոխադրուեցան Բազրեւանդ գաւառին մէջ Սուկաւէտ կոչուած ջրառատ լեռը եւ 44 տարի շարունակեցին իրենց ճշնաւորական կեանքը:

Դատիանսս երբ Ալաններու դահը բարձրացաւ, ուզեց գտնել Սուքիասեաններուն հետքը: Ուստի իր զօրավարներէն Բառլահանը զրկեց բրպէսդի գանոնք փնտռէ եւ իրենց երկիրը վերադարձնէ: Զօրավարը իր սրտնսւմներու ընթացքին հանդիպեցաւ անոնց: Նախ ջանաց քաղցրութիւնով համոզել եւ առաջարկեց անոնց որ քրիստոնէութիւնը ուրանան ու վերագառնան իրենց երկիրը: Սուքիասեանք անխախտ մնացին իրենց սուրբ հաւատքին վրայ: Բառլահան անոնց ընդգլխութիւնը տեսնելով բարկացաւ: Զանոնք ցիցերու կապել տուաւ եւ սկսաւ բրածեծ ընել ու շարձարել: Ապա վառած ջահերով այրել տուաւ անոնց կողերը:

Սուքիասեանք արիարար կրեցին այդ շարձարանները եւ իրենց ցաւերուն մէջ սկսան աղօթել ու զԱստուած փառաբանել:

Բառլահան հրամայեց զելուցներ (բերան պրկելիք դործիք) դրնել անոնց բերանները: Սուքիասեանք իրենց պրկուած շրթներովն իսկ աղօթեցին սա Աստուած որ զթայ Հայոց եւ Ալանաց երկիրներուն եւ լուսաւորէ զանոնք:

Մինչ անոնք կ'աղօթէին, դահիճները մօտեցան եւ վոյրապօրէն կտրեցին անոնց վիզերը:

Սուքիասեանց մարտիրոսութիւնը տեղի ունեցաւ առաջին դարու վերջին տարիներուն:

Հայաստանեաց Եկեղեցին զատ զատ կը տօնէ Ոսկեանց եւ Սուքիասեանց յիշատակը: Նաեւ կը յիշատակէ զանոնք Սուրբ Պատարագի ընթացքին:

Ե Զ Ր Ա Կ Ա Յ Ո Ի Թ Ի Ի Ն

1) Ոսկեանք եւ Սուքիասեանք իրենց կեանքը նուիրեցին Յիսուս Քրիստոսի եւ իրենց սուրբ հաւատքին վրայ ամուր մնալով նահատակուեցան: Անոնց եւ ուրիշ սուրբերու նահատակութիւնը պատեալ դարձաւ որ քրիստոնէութիւնը ունեանայ եւ աւելի տարածուի Հայաստանի մէջ: Անոնք նմանեցան ցորեթի հատիկներուն որոնք հողին մէջ իյնալով քէւ կը մեռնին, սակայն յետոյ ծիլեր արձակելով շատ արդիւնք կու տան:

2) Ոսկեանց եւ Սուքիասեանց ամուր հաւատքը, նուիրումն ու քաջութիւնը մեզի օրինակ պէտք է ըլլան: Անոնց նման մեմք ալ ջանալու ենք տոկալ մեզի համադրող դժուարութիւններուն եւ նեղութիւններուն՝ միշտ ազօթելով: Ով որ մինչեւ վերջը համբերէ ու Աստուծոյ հաւատարիմ մնայ, արժանի կ'ըլլայ երկինքի արքայութեան:

Հ Ա Ր Յ Ո Ի Մ Ն Ե Ր

- 1) Ոսկեանք ո՞ր ազգին կը պատկանէին:
- 2) Ոսկեանք ի՞նչ պաշտօնով եկան Հայաստան:
- 3) Ոսկեանք ո՞ր առաքեալին միջոցաւ քրիստոնեայ դարձան:
- 4) Սուքիասեանք ո՞ր թագուհիին ազգականներն էին:
- 5) Սուքիասեանք ո՞ր ազգին կը պատկանէին:
- 6) Սուքիասեանք որո՞նց միջոցաւ քրիստոնեայ դարձան:
- 7) Ոսկեանք որո՞ւ ձեռքով սպաննուեցան:
- 8) Բառլահան զօրավարը Սուքիասեաններուն հանդիպելով ի՞նչ առաջարկեց:
- 9) Ինչպէ՞ս կատարուեցաւ Սուքիասեաններու նահատակութիւնը:

Դ. ԴԱՍ

ՍՈՒՐԲ ԹԵՆՊՈՐՈՍ ՍԱԼԱՅՈՒՆԻ

.....

Մեծն Տրդատ Թաղաւորի օրով Սալահունեաց գաւառին մէջ կ'ապրէր Սուրէն անունով իշխան մը որ մոլեռանդ հեթանոս էր: Սուրէն իր մէկ հասիկ որդին նուիրած էր Աթենաս կուռքին եւ ահոր անունովը կոչած էր Աքեմադոր կամ Աքեմադորոս որ կը նշանակէ Աքեմասի տուրք:

Սուրէն իշխանին տիկնոջ անունն էր Ազուիթա, որ կը նշանակէ Սիրամոյշ: Ազուիթա շատ բարեգութ եւ ազնիւ կին մըն էր եւ կը դուրսուրար բոլոր թշուառներուն վրայ:

Աթենադոր հոգիւ պատանեկութեան շրջանը թեւակոխած՝ մեզամտդձոտութեան տխուհի մը վարակուեցաւ: Հայրն ու մայրը ամէն միջոցի դիմեցին իրենց զաւկին առողջութիւնը ձեռք բերելու համար: Սակայն ի զուր անցան իրենց բոլոր ջանքերը: Աթենադորի առողջութիւնը օրէ օր աւելի կը վատթարանար: Ան խոյս կու տար հաւաքօյթներէ, եւ նոյնիսկ կուռքերու պաշտամունքներուն ներկայ ըլլալ չէր ուզեր: Իր վերջին արարքը աւելի կը սրտնեղէր հայրը:

Ազուիթա իր սրտահատորին առողջութեան համար բնութեան պարզ ու անաղմուկ մէկ ծոցին մէջ շինել տուաւ ազարակ մը, որ հոն անկուած թղենիներուն համար կոչուեցաւ Թգագրակ: Ազարակին դիմացը՝ Սեղեմնուտի ձորակին մէջ կը բղխէր աղբիւր մը՝ Արբենուտ անունով:

Բարեգութ իշխանուհին Թգագրակին մէջ հիմնեց անկէրանոց մը ուր իր հողածութեան տակ մտան ցաւաղարներ: բորոտներ եւ դանսոզան ախտերէ վարակուած թշուառ հիւանդներ, թիւով երեսուներհինգ հոգի: Ազուիթա այս հիւանդներուն ծառայելով կը գըլտէր միտիթարութիւն եւ սփոփանք:

Թգագրակի հիւանդներուն մէջ կը գտնուէր Դասիոս կամ Դասիկ անունով ծերունի մը որ աղքատ յոյն էր եւ դադանի ընդունած

էր ոչ միայն քրիստոնէութիւնը, այլ նաեւ քահանայական ձեռնադրութիւն: Այս դադանիքին տեղեակ էր նաեւ Ազուիթա:

Դասիկ քահանան իշխանուհին բարեսպակամութենէն քաջալերուած՝ իր հիւանդ ընկերներուն քարոզեց Քրիստոսի Սուրբ Աւետարանը: Թգագրակի հիւանդները անոր քարոզութիւնները մտիկ ընելով քրիստոնէութիւնը ընդունեցան եւ իրենց միտիթարութիւնը գտան Յիսուս Քրիստոսի մէջ:

Աթենադորն ալ այդ հիւանդներուն հետ հաւատաց Յիսուսին եւ այդ հաւատքը սկսաւ հետզհետէ դուարթացնել անոր մտայն դէմքը: Հայրն ու մայրը ուրախութեամբ կը դիտէին այս փոփոխութիւնը Աթենադորին վրայ: Սակայն մայրը չէր համարձակեր իր հեթանոս ամուսինին պատմել Աթենադորին փոփոխութեան պատճառը:

Հայրը յաճախ կ'առաջարկէր Աթենադորին մասնակցիլ կուռքերու մատուցուած զոհերուն եւ պաշտամունքներուն, բայց տղան կը մերժէր՝ իր հիւանդութիւնը պատճառ բռնելով:

Օր մը Տրդատ Թաղաւորին զինուորները Սալահունեաց գաւառէն կ'անցնէին Գրիգոր անունով քրիստոնեայ բանտարկեալ մը՝ Արտաշատի Սոր Վիրապը տանելու համար: Դասիկ քահանան շատ լաւ կը ճանչնար Գրիգորը եւ գիտէր թէ ինչ հաւատքի տէր էր ան: Ուստի Ազուիթայէն արտօնութիւն առնելով բոլոր հիւանդները ահոր առջեւ տարաւ, որպէսզի բազմաշարժար սուրբը անոնց վրայ աղօթէր: Հայոց ապառայ մեծ լուսաւորիչը անոնց հաւատքը տեսնելով աղօթեց եւ բժշկեց զանոնք:

Սուրբ Գրիգորի յանձնարարութիւնով Դասիկ քահանան Աթենադորը մկրտեց Արբենուտ աղբիւրի ջուրերուն մէջ եւ զայն կոչեց Թէոդորոս, որ կը նշանակէ Աստուածատուր:

Ուրախ էր Ազուիթան որ իր զաւակը բոլորովին բժշկուած եւ դարձած էր Քրիստոսի համար նուիրուած կայտառ երիտասարդ մը:

Վեց տարիներ անցան այն օրէն որ Աթենադորը մկրտուելով դարձած էր Թէոդորոս:

Ազուիթա եւ Թէոդորոս կրցած էին Սուրէն իշխանէն ծածկել իրենց քրիստոնէութիւնը: Սակայն ի վերջոյ իշխանը վերահասու եղաւ բոլոր անցուղարձերուն ու սկսաւ բռնանալ իր զաւկին որ ետ դառնար հեթանոսութեան:

Թէոդորոսին համար այլեւս տունը դժոխք մը դարձաւ եւ զգաց թէ այլեւս անկարելի էր հոն մնալ: Մայիսի առաւօտ մը իր մօրը եւ Դասիկ քահանային օրհնութիւնները առնելէ ետք դուրս թռաւ իր



Ս. Թէոդորոս Սալահունի եւ իր հայրը՝ Սուրէն

հօրենական դղեակէն եւ զնաց Սեղեմնուտի ձորակը: Հոն տանըմէկ օր իր ժամանակը անցուց աղօթքով եւ խոկումով:

Սուրէն իշխանը Թէոդորոսին փախուտոր իմանալով շատ զայրացաւ, եւ իր զայրոյթը կատաղութեան փոխուելով, գազանային բնադղով մը զիշերանց ձամբայ ելաւ իր զաւակը գտնելու համար:

Արշալոյսը դեռ նոր բացուած էր, երբ իշխանը հասաւ Սեղեմնուտի ձորը, ուր ծառի մը տակ կը քնանար Թէոդորոս, դուրսը քարի մը վրայ դրած:

Իշխանը պահ մը դիտեց իր զաւակին անձեզ գէմքը եւ անշարժա-

ցաւ: Իր հրեսին վրայ կը նշմարուէին մերթ դորովի եւ մերթ ցատուի արտայայտութիւններ:

— Աթենադո՛ր... ըսաւ ան դողըտչուն եւ խիստ ձայնով մը:

Հեթանոսական անունը ցնցեց քրիստոնեայ պատանիին սիրտը:

— Աթենադո՛ր... գոռաց հայրը երկրորդ անգամ:

Թէոդորոս բացաւ աչքերը ու սարսափահար տեսաւ իր հայրը: Շուարած ոտքի ելաւ ու լուռ նայեցաւ հօրը դէմքին:

— Աթենադո՛ր... կը հաւանի՞ս գտնալու հայրենի աստուածներուդ, ըսաւ հայրը ցատումով:

— Հա՛յր... բայց ես քրիստոնեայ Թէոդորոսն եմ եւ այս հաստքիս վրայ կ'ուզեմ մնալ, պատասխանեց որդին:

— Թէոդորո՞ս... բացապանչեց հայրը:

— Այո՛, հայր, Աթենասի տուրքը քու ցուազար սրբիդ էր, իսկ ճշմարիտ Աստուծոյ սուրբը քու առողջ պաւակդ է: Թոյլ տուր ինձի որ ես պաշտեմ այս Աստուածը: Եւ դո՛ւն ալ հա՛յր...

— Մոլորած, ապստամբ, գոռաց հայրը դայրադին, ձեռքը դրած սուրին վրայ, — պիտի հնազանդի՞ս թէ ոչ...

— Հա՛յր, պիտի հնազանդեմ Անոր՝ որունց պէտք է հնազանդին բոլոր ճշմարտասէր սրտերն ու մաքուր խիղճերը: Եւ դո՛ւն ալ հա՛յր...

Տակաւին խօսքը չէր վերջացուցած՝ երբ հայրը դերտդրուած բաշեց սուրը, խոյացաւ Թէոդորոսի վրայ ու անոր դանդուր մազերը բռնելով կտրեց վիզը եւ մոլեղնօրէն գլուխը նետեց մէկ կողմ:

Թէոդորոս, այսպէս, սուրբի մը մահով նահատակուեցաւ 296ի Մայիս 11ին: Դասիկ քահանան Սեղեմնուտի ձորակին մէջ ծառի մը տակ թաղեց Թէոդորոսի մարմինն ու գլուխը:

Թէոդորոսի նահատակութենէն հինգ տարի հոգեւոր Սուրբ Գրիգոր Սոր Վիրապէն ելած էր ու հայ նախարարներու եւ զինուորաներու շքախումբով մը կ'անցնէր Սալահունեաց գուռառէն Կեսարիա երթալու եւ հոն Եպիսկոպոս ձեռնադրուելու համար:

Դասիկ քահանային առաջնորդութեամբ Սուրբ Գրիգոր այցելեց Թէոդորոս Սալահունիի դերեղմանը եւ արասուելով աղօթեց:

Հետադային Ս. Գրիգոր Լուսաւորչի կարգադրութիւնով Թէոդորոսի դերեղմանին վրայ շինուեցաւ մատուռ մը:

Եօթը տարի հոգ իր աչքերը փակեց նաեւ Թէոդորոսի մայրը՝ Աղուիթա ու թաղուեցաւ իր զաւակին դերեղմանին մօտ:

Ե Ջ Ր Ա Կ Ա Ց Ո Ի Թ Ի Ի Ն

1) Սուրբ Թեոդորոս Սպառնուհիի եւ այլ սուրբերու կենսագրութիւնները սերտելով հետեւելու ենք անոնց մաքուր եւ առաքինի կեանքին, ամուր կառչելով մեր սուրբ հաւատքին:

2) Կեանքի ընթացքին զանազան նեղութիւններ, դժուարութիւններ ու հալածանքներ կրնան մեզի հանդիպիլ, սակայն անոնք մեզ տկարացնելու կամ ընկրկելու չեն: Ընդհակառակը, ցոյց տալու ենք թէ որեւէ խոչնդոտ չի կրնար մեզ գատել Քրիստոսի սէրէն: Եթէ հարկը պահանջէ, պատրաստ ըլլալու ենք մեր արիւնը թափելու մեր սուրբ հաւատքին համար:

Հ Ա Ր Ց Ո Ի Մ Ն Ե Ր

- 1) Որո՞ւ որդին էր Աթենադոր:
- 2) Ի՞նչ կը նշանակէ Աթենադոր:
- 3) Աթենադոր փոքր տարիքէն ի՞նչ տեսակ հիւանդութենէ կը տառապէր:
- 4) Աղուիթա ինչպիսի՞ կին մըն էր:
- 5) Աղուիթա ինչո՞ւ համար չինել տուաւ Թզազրակը:
- 6) Քանի՞ հիւանդներ կը խնամուէին Թզազրակին մէջ:
- 7) Ո՞վ էր Դասիկ քահանան:
- 8) Թզազրակին հիւանդները որո՞ւ միջոցաւ զրիստոնեայ դարձան:
- 9) Թզազրակին հիւանդները որո՞ւ աղօթքովը բժշկուեցան:
- 10) Աթենադոր մկրտուելով ի՞նչ կոչուեցաւ:
- 11) Ի՞նչ կը նշանակէ Թէոդորոս:
- 12) Թէոդորոս ինչո՞ւ համար լքեց իր հօրենական դղեակը եւ ո՞ւր գնաց:
- 13) Թէոդորոս որո՞ւ ձեռքով սպաննուեցաւ:
- 14) Ս. Գրիգոր Լուսաւորիչ Թէոդորոսի գերեզմանին վրայ ի՞նչ շինել տուաւ:

Ե. ԴԱՍ

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԵՒ ՄԵԾՆ ՏՐԴԱՏ

.....

Հայոց Խոսրով Բ. Թաղաւորին օրով Պարսկաստանի մէջ ծագեցաւ ապստամբութիւն մը: Ներքին կռիւներու ընթացքին սպաննուեցաւ Պարթեւներու Թաղաւորը եւ Պարսկաստանի գահին վրայ բազմեցաւ Արտաշիւր Սասանեան անուէնով զօրավար մը:

Խոսրով Թաղաւորը անտարբեր չմնաց Պարսկաստանի մէջ կատարուած անցուղարձերուն հանդէպ, քանի որ ինք ցեղակից ու ազգական էր Պարսկաստանի մէջ սպաննուող պարթեւ Թաղաւորին: Ուստի իր ազգականին վրէժը լուծելու եւ Պարսկաստանի գահը Պարթեւական տոհմին ետ դարձնելու մտօք յարձակում դրոճեց պարսկական նոր Թաղաւորութեան վրայ:

Հակառակ իր սկզբնական յաջողութիւններուն, Խոսրով չկրցաւ Արտաշիւրը հեռացնել Պարսկաստանի գահէն եւ երկու երկիրները թըշնամի մնացին իրարու հանդէպ՝ երկար ժամանակ: Արտաշիւրի յաջորդը՝ Շապուհ եւս հաշտ աչքով չէր դիտեր Խոսրովը ու վտանգ մը կը նկատէր Հայ Արշակունիներու Թաղաւորութիւնը իր գահուն համար: Սակայն չկարենալով դէնքի ոյժով զայն տապալել, որոշեց դաւադրաբար սպաննել սալ Խոսրովը: Ուստի Խոսրովի ազգականներէն՝ Անակ Պարթեւ իշխանը Հայաստան դրկեց իր դաւադրութիւնը յաջողնելու համար:

Անակ Հայաստան դալով ներկայացաւ Խոսրով Թաղաւորին եւ այնպէս ձեւացուց թէ ինք Շապուհին հետ դժտուած ըլլալով Հայաստան փախած է: Խոսրով սիրով ընդունեցաւ իր ազգականը եւ անոր դիւրութիւններ ընծայեց որ իր մօտ բնակի: Անակ Հայաստան հաստատուելէ ետք ունեցաւ մասնէ զաւակ մը եւ զայն անուանեց Սուրէն:

Ժամանակ մը ետք, երբ օր մը Խոսրով Անակին եւ անոր եղբոր հետ որսի ելած էր, յանկարծ յարձակումի ենթարկուեցաւ երկուքին կողմէ եւ մահացու կերպով վերաւորուեցաւ: Երբ Թաղաւորական պահակազունըը հասաւ, Խոսրով իր մահամերձ վիճակին մէջ պատմեց



Ս. Գրիգոր Լուսավորիչ

երկու եղբայրներուն դաւաճանութիւնը եւ հրամայեց որ Անակին սե-
րունդը սուրէ անցնի :

Թագաւորին հրամանը կտտարուեցաւ ու Անակին ընտանիքը
սուրէ անցաւ, սակայն անոր որդին՝ փոքրիկ Սուրէնը իր ստնառւին՝
Սոփիայի ձեռքով ազատուելով Կեսարիա տարուեցաւ :

Սոփիա բարեպաշտ քրիստոնեայ կին մը ըլլալուն, Սուրէնը
յանձնեց քրիստոնեայ դաստիարակներու : Սուրէն մկրտուելով վերա-
կոչուեցաւ Գրիգոր :

Կեսարիոյ մէջ Գրիգոր ստացաւ բարձր ուսում՝ հմտանալով
Հայ եւ Հելլէն լեզուներու : Ան դարձաւ առաջինի երիտասարդ մը՝
քրիստոնէական մաքուր սկզբունքներով դոտեպնդուած : Ամուսնացաւ
Մարիամ անունով բարեպաշտ օրիորդի մը հետ եւ ունեցաւ երկու
մանչ զաւակներ՝ Վրթանէս եւ Արիստակէս :



Մեծն Տրդատ Թագաւոր

Գրիգոր ունէր մեծ տեսիլք մը : Ան կը մտածէր Քրիստոսի լոյսը
տարածել Հայաստան աշխարհի մէջ :

Խոսքով Թագաւորի մահէն ետք, Պարսից Շապուհ Թագաւորը
յարձակեցաւ Հայաստանի վրայ եւ դոյն գրաւելէ ետք սուրէ անցընել
տուաւ Խոսրովի ազգատոհմը : Կոտորածէն ազատուեցան միայն Խոս-
րովին երկու զաւակները՝ Տրդատ եւ իր քոյրը՝ Խոսրովիգուխտ :

Տրդատ Հոովմ տարուեցաւ եւ հոն ստացաւ զինուորական կըր-
թութիւն ու մեծ համբաւի տիրացու իր քաջագործութիւններովը :

Հոովմի Կայսրը Տրդատի քաջութեան վրայ հիանալով, վստա-
հեցաւ անոր յանձնելու բանակ մը, որպէսզի երթար Հայաստան ու
Պարսիկներու ձեռքէն դրուէր իր երկիրը եւ նստէր Հօրը զահուն վրայ :

Երբ Տրդատ դէպի Հայաստան ճամբայ ելաւ, ամէն կողմերէ Հայեր միացան իրեն եւ ստուարացուցին իր բանակը:

Տրդատ երբ Կեսարիա հասաւ, Հոն հանդիպեցաւ Գրիգորին եւ անոր ունեցած ուսման վրայ հիանալով դայն քարտուղար նշանակեց իրեն: Գրիգոր ուրախութեամբ ստանձնեց այդ պաշտօնը եւ հաւատարմօրէն ծառայեց իր թագաւորին որ շատ գոհ էր իրմէ եւ կը սիրէր զինք:

287 Թուին Տրդատ մեծ յաղթանակներ տարաւ իր թշնամիներուն վրայ ու պարտութեան մատնեց զանոնք:

Տրդատ թագաւոր իր յաղթանակներուն համար Երիզայի մէջ դոհարանական մեծ հանդիսութիւններ սարքեց ի պատիւ Անահիտ դիցուհիին, ու հրամայեց իր պալատականներուն որ ծաղկեպսակներ եւ խունկեր նուիրեն անոր արձանին:

Պալատականները կատարեցին թագաւորին հրամանը բացի Գրիգորէն, որ մերժեց խոնարհիլ Անահիտի արձանին առջեւ եւ անոր ծաղիկ նուիրել:

Տրդատ Գրիգորին այս ընթացքը տեսնելով տրամեցաւ եւ յորդորեց դայն որ կատարէր իր հրամանը: Գրիգոր բացատրեց թագաւորին թէ ինք քրիստոնէայ մըն էր եւ կը պաշտէր երկինքն ու երկիրը ստեղծող ճշմարիտ Աստուածը եւ չէր կրնար խոնարհիլ կուռքերու առջեւ: Տրդատ զայրացաւ եւ ըսաւ.

— Ինչպէ՞ս կը յանդգնիս պաշտել այն Աստուածը զոր ես չեմ պաշտեր: Երկար տարիներէ ի վեր դո՛հ էի քու ծառայութենէդ ու աշխատութենէդ: Հիմա ինչո՞ւ չես կատարել իմ կամքս:

Գրիգոր պատասխանեց.

— Աստուած կը հրամայէ որ ծառաները հնազանդ ըլլան իրենց մարմնաւոր տէրերուն. բայց Աստուծոյ տրուելիք պատիւն ու պաշտօնը պէտք չէ ոեւէ մէկուն տալ, այլ միայն զԱյն պէտք է պաշտել:

Տրդատ մոլեգնեցաւ եւ ըսաւ.

— Քու աշխատանքներդ ոչինչ են ինծի համար: Քեզի կը սպասեն նեղութիւն, բանտ, կապանք եւ նոյնիսկ մահ:

Գրիգոր անդրդուելի մնաց իր հաւատքին վրայ, իսկ թագաւորը աւելի զայրացաւ եւ տասներկու տեսակ սոսկալի շարչարանքներու ենթարկեց Գրիգորը, որոնց գործադրութիւնը տեսեց օրեր, շաբաթներ ու ամիսներ:

Գրիգոր մեծ համբերութիւնով կրեց այդ բոլորը եւ Աստուծոյ

մէկ հրաշքը սեպուեցաւ անոր ողջ մնալը: Տրդատ եւ իր պալատականները զարմացան Գրիգորի ողջ մնալուն:

Մինչ Գրիգոր կապանքներու մէջ էր եւ իր մարմինը վէրքերով ծածկուած՝ անտանելի ցաւեր կը քաշէր, իշխան մը թագաւորին մօտենալով յայտնեց թէ Գրիգոր որդին է Սոսորովը սպաննող Անակ իշխանին: Տրդատ այս բանը իմանալով ալ աւելի զայրացաւ եւ հրամայեց Գրիգորը նետել Արտաշատ քաղաքի Սոր Վիրապի գետնափոր ու խոնաւ բանտին մէջ, ուր կը վխտային թունաւոր սողուններ եւ միջատներ:

Աստուած օգնութեան փութաց Գրիգորին՝ զրկելով իր հրեշտակը, որ ամէն օր կ'այցելէր ու կը մխիթարէր զայն: Իսկ բարեպաշտ կին մըն ալ ամէն օր զաղտնօրէն հաց եւ ջուր կ'իջեցնէր Սոր Վիրապէն ներս, որուն տեղեակ էր միայն բերդապահ մը:

Աստուածային հրաշքով Գրիգոր տասներեք տարիներ գիմացաւ եւ ողջ մնաց այդ անտանելի վիրապին մէջ եւ թունաւոր սողուններն ու միջատները որեւէ վնաս չկրցան հասցնել իրեն:

Գրիգոր տասներեք տարիներ համբերութիւնով կրեց Սոր Վիրապի տաժանելի կեանքը, ուր շարունակ կ'աղօթէր Աստուծոյ որպէսզի Հայաստանը լուսաւորուէր Աւետարանի լոյսով:

Ե Զ Ր Ա Կ Ա Յ Ո Ի Թ Ի Ի Ն

- 1) Սուրբ Գրիգորի կեանքը օրինակ պէտք է ըլլայ մեր բոլորին: Ան իր գորաւոր հաւատովը, անկուրն կամքովը, համբերութիւնովն ու ազօթելովը կրցաւ տոկալ Տրդատ քաղաւորին կողմէ ի գործ պրուած անտանելի շարչարանքներուն եւ իւր վիրապի տաժանելի կեանքին:
- 2) Ճշմարիտ քրիստոնեաներու կեանքին մէջ, անպակաս են նեղութիւններ, հալածանքներ ու շարչարանքներ: Սակայն Աստուծոյ գաւակները պէտք է համբերեն ու ազօթելով խնդրեն Տիրոջ գորութիւնը ամէն տեսակ դժուարութիւններ դիմագրաւելու համար:
- 3) Աստուած իր հաւատարիմ գաւակներուն գորութիւն կու տայ որպէսզի անոնք յաղթական դուրս գան փորձութիւններու եւ տառապանքներու մէջէն:

Հ Ա Ր Ց Ո Ւ Մ Ն Ե Ր

- 1) Որո՞ւ որդին էր Գրիգոր:
- 2) Ի՞նչ էր Գրիգորի նախկին անունը:
- 3) Ո՞վ փախցուց փոքրիկ Սուրէնը Կեսարիա. ինչո՞ւ համար:
- 4) Գրիգոր ի՞նչ տեսակ կրթութիւն ստացաւ Կեսարիոյ մէջ:
- 5) Փոքրիկ Տրդատը ինչո՞ւ համար Հոովմ տարին:
- 6) Տրդատ ի՞նչ տեսակ կրթութիւն ստացաւ Հոովմի մէջ:
- 7) Տրդատ ո՞ր քաղաքին մէջ հանգիպեցաւ Գրիգորին:
- 8) Ի՞նչ էր պաշտօնը Գրիգորին Տրդատի բանակին մէջ:
- 9) Տրդատ թագաւոր իր յաղթանակներէն ետք ի՞նչ ըրաւ Երիզայի մէջ:
- 10) Տրդատ թագաւոր ի՞նչ հրամայեց իր պալատականներուն:
- 11) Գրիգոր ինչո՞ւ համար չկատարեց թագաւորին հրամանը:
- 12) Գրիգորի մերժումին վրայ թագաւորը ի՞նչ ըրաւ:
- 13) Ի վերջոյ Գրիգորը ո՞ւր նեակեցին:
- 14) Աստուած ամէն օր դո՞վ կը զրկէր Գրիգորին քով:
- 15) Գրիգոր ինչպէ՞ս կը կերակրուէր:
- 16) Սուրբ Գրիգոր քանի՞ տարի մնաց Խոր Վերապին մէջ:



Զ. ԴԱՍ

ՅՈՒՓՍԻՄԵԱՆՔ ԵՒ ԳԱՅԻԱՆԵԱՆՔ

.....

Երբորդ դարու վերջերը Հոովմի մէջ դոյութիւն ունէր կուսաստան մը որ հիմնուած էր Ս. Պօղոս առաքեալի անունով: Ամէն դասակարգէ քրիստոնեայ աղջիկներ հաւաքուած էին հոն ու կ'ապրէին կամաւոր զրկանքի եւ անձնուրացութեան կեանք մը: Յաճախ իրենց կուսանոցէն դուրս կ'ելլէին Քրիստոսի Աւետարանին լոյսը ուրիշներուն տարածելու համար:

Այդ օրերուն կուսաստանի մեծաւորուհին էր Գայիանէ, որ սերած էր աղնուական տոհմէ մը: Ան արթուն պահակն էր իր մայրական խնամքին յանձնուած հաստատութեան:

Գայիանէի սաներուն մէջ Հռիփսիմէ նշանաւոր էր իր զեղեցկութեամբը. սակայն իր նկարագրին մաքրութիւնը կը զերազանցէր իր մարմնական զեղեցկութիւնը: Ան Հոովմայեցի թագադարմ օրիորդ մըն էր սր պալատական զեղխ եւ շուայտ կեանքէն խոյս տալով ապաստանած էր Ս. Պօղոս կուսաստանը, հոն գտնելով հոգիի խաղաղութիւն՝ իր սիրտը նուիրելով Յիսուս Քրիստոսի:

Այդ օրերուն Դիեկղետիանոս կայսրը սկսաւ սոսկալի հալածանք հանել քրիստոնեաներու դէմ: Զրոյց շրջեցաւ թէ պալատին մէջ կը ծրագրուէր մենաստանէն դուրս բերել կոյսերը եւ զանոնք ամուսնացնել հեթանոս իշխանադուներու հետ: Նոյնիսկ կառկածներ ալ կային թէ Դիեկղետիանոս կայսրը կը փափաքէր դտնել Հռիփսիմէն եւ դայն կնութեան առնել իրեն:

Գայիանէ ապալայ վտանդները նախատեսելով որոշեց խումբով հեռանալ Հոովմէն՝ իր սանուհիներուն կեանքն ու պատիւը փրկելու համար:

Գիշեր մը, Խոթանասունի մօտ կոյսեր, իրենց հետ երկու քահանաներ ունենալով հեռացան Ս. Պօղոսի մենաստանէն: Նախ հանգիպեցան Եգիպտոս եւ անկէ անցան Երուսաղէմ: Բեթլեհէմի այրին



Ս. Հռիփսիմէ Կոյս

մէջ եւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնի դերեգմունին առջեւ կատարեցին իրենց ուխտը :

Կոյսերը Երուսաղէմէն ճամբոյ ելան դէպի Հայաստան, լրած բլլալով որ հոն բաւական բարգաւաճ քրիստոնէութիւն մը կ'ապրէր: Երկար ու դժնդակ ճամբորդութենէ մը վերջ հասան Հայաստան եւ զանազան տեղեր պտըտելէ վերջ հաստատուեցան Հոգեաց Վանքը ուր կար կուստատան մը Հռովմի Ս. Պօղոս մենաստանին նման: Հոն գտան սիրալիր ընդունելութիւն տեղւոյն սակաւաթիւ հայ քրիստոնեաներէն:

Այլ օրերուն Հայոց Մեծն Տրդատ Թագաւորը կ'իշխէր Հայաստանի վրայ, որ Ս. Գրիգորը Խոր Վերապի մէջ նետելէ վերջ սկսած էր հարածել քրիստոնեաները:

Դիոկղետիանոս կայսրը կոյսերուն Հայաստան հասնելուն լուրը առնելով նամակ մը զրկեց Տրդատ Թագաւորին, որուն մէջ կը գրէր, «Ձեր երկրին մէջ ապաստանած կոյսերը կ'անարգեն մեր

պաշտած աստուածները եւ չեն ուղեր ամուսնանալ ինծի պէս Թագաւորի մը հետ: Փնտռել տուէք զանոնք եւ անոնց մէջէն դեղեցկագոյնը՝ Հռիփսիմէն ինծի զրկեցէք. իսկ մնացածներն ալ մահով պատժեցէք...»: Նոյն նամակով Դիոկղետիանոս կ'ըսէր Տրդատին թէ կրնար նաեւ ինք ամուսնանալ Հռիփսիմէին հետ եթէ փափաքէր:

Գալիանէի խումբին Հայաստան մուտքը գաղտնի չէր մնացած, քանի որ կոյսերը իրենց ճամբու ընթացքին առիթը չէին կորսնցուցած Քրիստոսի Աւետարանը քարոզելու շատ շատերուն:

Տրդատ Դիոկղետիանոսի նամակը ստանալէ ետք որոնել տրւաւ Հռովմէն եկող կոյսերը:

Գալիանէ խոհեմութիւն սեպեց իր խումբը հեռացնել Հոգեաց Վանքէն: Ուստի Հայաստանի այլեւայլ վայրերը տեղափոխութիւններ եւ նոյն ատեն քարոզութիւններ ընելով, ի վերջոյ կոյսերը հաստատուեցան Վաղարշապատ՝ այդիներու մէջ հնձանայարկի մը տակ: Անոնք իրենց ապրուստը կը հոգային իրենց շինած ապակիէ ուլունքները ծախելով:

Կոյսերուն Թագատոյը անյայտ չմնաց հայոց արքունիքին: Ժամանակ մը ետք, Տրդատի հրամանով հնձանայարկը պաշարուեցաւ զինուորներու կողմէ, եւ հետաքրքիրներու խառնիճաղանճ բազմութիւն մը հաւաքուեցաւ հոն, տեսնելու համար Հռիփսիմէի գեղեցկութիւնը: Զգաստ կոյսերը այս բաները տեսնելով, լացուկոծով քողարկեցին իրենց երեսները եւ հողին տուին:

Պալատականները Թագաւորին քով երթալով պատմեցին եղելութիւնը եւ գովեցին Հռիփսիմէի գեղեցկութիւնը: Տրդատ, երկրորդ հրաման մը արձակեց որպէսզի առաւօտուն կանուխ Հռիփսիմէն պալատ բերին:

Յաջորդ առաւօտ պալատականները Հռիփսիմէն Թագաւորին առջեւ տանելու համար իրենց հետ բերին ոսկիապատ գահաւորակներ ու Թանկագին զգեստներ: Գալիանէ այս բաները տեսնելով խրախուսեց Հռիփսիմէն որ չընկրկի ու անդրդուելի մնայ իր սուրբ հաւատքին վրայ՝ ամուր պահելով իր ուխտը:

Հռիփսիմէ բազաւարած աղօթեց ու մերժեց ներկայանալ Թագաւորին: Նամանաւանդ կը ստակար լսելով ոտ գինք կ'ուզեն ամուսնացնել անոր հետ:

Թագաւորը Հռիփսիմէի ընդդիմութիւնը լսելով հրամայեց որ գայն բռնի բերեն իր առջեւ:

Հռիփսիմէ երբ Թագաւորին առջեւ տարուեցաւ, մերժեց ա-

նոր ամուսնական առաջարկը, յայտնելով թէ ինք նուիրուած է Յիսուս Գրիստոսի եւ ուխտած է մնալ այդպէս:

Տրդատ Զանայ զայն համոզել զանազան խոստումներով ու պարզեւներով: Սակայն Հռիփսիմէ տեղի չտուաւ: Ան Աստուծոյ փառքը չիտինց երկրաւոր հաճոյքներու եւ պատիւներու հետ: Տրդատ սկսաւ սպառնալիքներ ընել: Բայց Հռիփսիմէն չտոսկաց եւ ամուր մնաց իր ուխտին վրայ:

Թագաւորը կանչել տուաւ Գայիանէ մեծաւորուհին եւ հրամայեց անոր խրատել Հռիփսիմէն որպէսզի ան ընդունի իրեն եղած առաջարկը: Գայիանէ թագաւորին հրամանին համեմատ չխրատեց իր ամուսնին, այլ խրատուեց ու յորդորեց զայն որ հաւատարիմ մնայ Քրիստոսի հետ իր ըրած ուխտին:

Տրդատ Գայիանէին այդ յանդգնութիւնը տեսնելով Զարդ ու փշուր ընել տուաւ անոր ակունները: Գայիանէ իր փշրուած ակուններուն առանց կարեւորութիւն տալու, նորէն սկսաւ յորդորել իր ամուսնին որ չենթարկուի հեթանոս թագաւորի կամքին եւ չուրանայ իր հաւատքը:

Թագաւորն ու պալատականները ճարահատ հեռացուցին Գայիանէն:

Հայրաւ ու գոռոյ թագաւորը ինքզինքը պարտուած զգաց Հռիփսիմէի աննկուն կամքին առջեւ ու իր տեղը զամուսնած մնալով խորատուցուեցաւ ոճրապարտ մտածումներու մէջ:

Հռիփսիմէ դիւցապնական խիզախութեամբ մը յանկարծ սենեակին դուռը բացաւ եւ դուրս խոյացաւ՝ կտրելով հաւաքուած ամբոխը: Պալատէն դուրս ելլելով հեւհեւ վազեց իր ընկերներուն քով եւ իր յաղթանակին աւետիսը տուաւ անոնց: Բայց թագաւորին մարդիկը զինք կը հետապնդէին:

Նոյն դիշերը, երբ Հռիփսիմէ կ'աղօթէր, անակնկալօրէն պալատականները վրայ հասան եւ ձեռքերը ետին կապեցին: Ուզեցին նախ լեղուն կտրել որ համարձակած էր նախատել թագաւորը՝ մերժելով անոր առաջարկը: Հռիփսիմէ ինքնակամ բացաւ իր բերանը: 'Դահիճները չորս ցիցեր զարնելով դեանին՝ երկուքը սոքերուն եւ երկուքը ձեռքերուն համար՝ պրկեցին զայն: Յետոյ Զահերու բոցերով այրեցին ու խորովեցին անոր մարմինը, զազանային մոնչիւնով մը սրտարով, «Այսպէս պիտի կորսուին բոլոր անոնք՝ որոնք կը համարձակին արհամարհել թագաւորին հրամանները»:

Հռիփսիմէի երեսուներկու ընկերուհիները, որոնք փութացեր

էին նահատակութեան վայրը՝ սուրբ կոյսին մարմինը ամփոփելու եւ թողելու համար՝ նոյնպէս սրակտոր սպաննուեցան: Դահիճները հնձանին վրայ յարձակելով հոն դտան հիւանդ պառկած Մարիանէ կոյսը եւ զայն ալ սպաննեցին:

Տրդատ թագաւոր Հռիփսիմէի մահուան լուրը առնելէ ետք ուղեց իր վրէժը լուծել Գայիանէէն: Հրամայեց նախ կտրել անոր լեզուն՝ որով ան յանդգներ էր Հռիփսիմէն խրատել թագաւորի կամքին հակառակ: Ապա զայն յանձնեց դահիճներուն, որոնք Գայիանէն իր երկու ընկերներովը քաղաքէն դուրս հանեցին եւ իւրաքանչիւրը չորսական ցիցերու վրայ կապելէ ետք չարաչար տանջեցին ու սուրով պլխատեցին:

Նահատակ կոյսերուն մարմինները նետուեցան բաց դաշտին մէջ որպէսզի կեր դառնան պաղաններու եւ վայրի թռչուններու:

Այսպէս երեսունըօթը կոյսեր նահատակուեցան ու իրենց մաքուր արիւնովը ոռոպեցին հայոց աշխարհը, որպէսզի օր մը հոն ճաղկէր Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին:

Ե Զ Բ Ա Կ Ա Յ Ո Ի Թ Ի Ի Ն

1) Սուրբ Հռիփսիմեանց եւ Գայիանեանց իտէպն էր նուիրուիլ Քրիստոսի եւ քարոզի Ս. Աւետարանը՝ մարդոց հոգիները սատանայի ու մեղքի գերութեան ազատելու համար: Անոնք կամաւորապէս հրաժարեցան աշխարհի հաճոյքներէն, պերճանքներէն եւ պատիւներէն ու նետուեցան աղօթքի եւ ճգնութեան՝ երկինքի արքայութիւնը ժառանգելու համար: Ի ինդիր իրենց հաւատքին, անոնք կուրծք տուին ամէն տեսակ դժուարութիւններու եւ ի վերջոյ իրենց մահուր արիւնը թափելով արժանացան երկինքի արքայութեան անքառամ պսակին:

2) Ուրախալի է որ ներկայիս պետական հալածանք չկայ քրիստոնէութեան դէմ մեր ապրած երկիրներուն մէջ: Սակայն պետապիսի փարսութիւններ, բարոյական վտանգներ եւ աշխարհային մեղսալից հրապոյրներ կը սպառնան խաթարել քրիստոնէաներուն նկարագիրը:

3) Սրբոց Հռիփսիմեանց եւ Գայիանեանց յիշատակը մեր սրտերուն մէջ վառ պահելով եւ անոնց օրինակին հետեւելով կըրնանք ամուր բռնել մեր սուրբ հաւատքը:

4) Անոնց նման պէտք է աղօթենք ու Աստուծոյ օգնութիւնը հայցենք յաղթելու համար մեր առջեւ ցցուող փորձութիւններուն եւ մեղքերուն: Նամանաւանդ հայուհիներ պէտք է ջանամ նմանիլ Ս. Հռիփսիմէի, Գայիանէի եւ անոնց ընկերներուն:

Հ Ա Ր Ց Ո Ւ Մ Ն Ե Ր

- 1) Ո՞ր քաղաքին մէջ կը դտնուէր Ս. Պօղոս կուսաստանը:
- 2) Ո՞վ էր Ս. Պօղոս կուսաստանի մեծաւորուհին:
- 3) Գայիանէ ինչո՞ւ համար իր խումբովը հեռացաւ Հռովմէն:
- 4) Կոյսերը Երուսաղէմէ ելլելով դէպի ո՞ր երկիրը գացին:
- 5) Դիոկղետիանոս կայսրը ի՞նչ տեսակ նամակ մը գրած էր Հայոց Տրդատ Թագաւորին:
- 6) Տրդատ Թագաւոր Հռիփսիմէն իր առջեւ բերել տալով ի՞նչ առաջարկեց:
- 7) Հռիփսիմէ ի՞նչ պատասխանեց Թագաւորին եւ յետոյ ինչ-պէ՞ս փախաւ պալատէն:
- 8) Ինչպէ՞ս սպաննեցին Ս. Հռիփսիմէն եւ իր ընկերները:
- 9) Ինչպէ՞ս սպաննեցին Ս. Գայիանէն եւ իր երկու ընկերները:



Է. ԴԱՍ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԲՈՂՁԱԿԱՆ ԴԱՐՁԸ

.....

Հռիփսիմէանց նահատակութենէն վերջ Աստուած պատժեց Տրդատ Թագաւորն ու պալատականները: Օր մը, երբ անոնք խումբով որսի գացած էին, յանկարծ գայլախումբեամբ վարակուեցան եւ սկսան վայրի խոզերու նման լեռները Թափառիլ:

Որեւէ դարման չգտնուեցաւ զանոնք բժշկելու համար: Սուգի մէջ մնացին Հայոց արքունիքն ու ժողովուրդը իրենց Թագաւորին անյոյս վիճակին համար:

Գիշեր մը, Թագաւորին քոյրը՝ Պոսրովիգուխտ իշխանուհին իր երազին մէջ տեսաւ՝ լուսաւոր կերպարանքով մարդ մը որ իրեն ըսաւ. «Սոր Վիրապին մէջ բանտարկուած Գրիգորը միայն կրնայ բժշկել Թագաւորն ու պալատականները»:

Պոսրովիգուխտ իր երազը պատմեց Հայոց նախարարներուն, որոնք Թերահաւատութեամբ մտիկ ըրին: Անոնք չէին յուսար որ Գրիգոր ողջ մնացած կրնար ըլլալ այդ անրոսների վիրապին մէջ տանըրեք տարիներէ ի վեր: Սակայն Պոսրովիգուխտի պնդումներուն վրայ Օտա Ամատունի իշխանը զրկեցին Սոր Վիրապի բանտը: Իշխանը երկայն ու հաստ չուան մը բերել տուաւ եւ զայն վիրապին մէջ իջեցնելով պոռայ:

— Գրիգոր, եթէ ողջ ես, դուրս եկուր: Քու պաշտած Աստուածդ հրամայեց լոյսին հանել քեզ այս խաւար բանտէն:

Գրիգոր իսկոյն ոտքի ելաւ, բռնեց պարանը եւ շարժեց զայն: Իշխանը հրամայեց քաշել չուանը: Գրիգոր ողջ առողջ դուրս ելաւ Սոր Վիրապէն: Միայն թէ մարմինը սեւցած էր: Անմիջապէս բաղնիք առնել տուին եւ հագուստներ բերին ու հազցուցին Գրիգորին եւ տարին Հայոց մայրաքաղաքը՝ Վաղարշապատ:

Սուրբ Գրիգորի առաջին դործը եղաւ նահատակուող կոյսերուն ոսկորները բաց դաշտի մէջէն հաւաքել ու Թաղել իրենց քնակավայրին՝ Հնձանայրկին տակ:



Ս. Գրիգոր Լուսաւորիչ կը մկրտէ Տրդատ Թագաւորը

Յաջորդ օր Թագաւորն ու պալատականները բերուեցան Ս. Գրիգորի առջև. որպէսզի աղօթէր անոնց վրայ: Աստուած բաղձաշարշար սուրբին աղօթքը լսելով բժշկութիւն շնորհեց բոլորին:

Տրդատ Թագաւոր զլջաց իր դործած բաղձաթիւ մեղքերուն համար եւ լալով ապաշխարեց Աստուծոյ առջև: Ապա ջրիստոնէութիւնը պետական կրօնք հռչակեց Հայաստանի մէջ 301 թուականին: Այսպիսով Հայաստան առաջին երկիրը եղաւ ամբողջ աշխարհի մէջ որ ջրիստոնէութիւնը պետական կրօնք հռչակեց:

Տրդատ Թագաւոր Ս. Գրիգորը մեծ շքախումբով մը Կեսարիա զրկեց: Հոն Ղեւոնդիոս Արքեպիսկոպոսի ձեռքով Ս. Գրիգոր ստացաւ Քահանայական եւ Եպիսկոպոսական աստիճաններ, ու Հայաստան վերադառնալով եղաւ Հայոց Կաթողիկոս:

Ս. Գրիգոր Հայրապետ Հայաստանի ամէն կողմերը քարոզութիւններ ւրաւ ու մկրտութիւններ կատարեց:

Տրդատ Թագաւորն ու Աշխէն Թագուհին իրենց պալատականներով մկրտուեցան Սուրբ Հայրապետին ձեռքով՝ Արածանի դեախն մէջ:



Ս. Գրիգոր Լուսաւորչի մահը

Յիսուս Քրիստոս Ս. Գրիգոր Հայրապետին յայտնուեցաւ տեսիլքով մը: Սուրբ Գրիգոր տեսաւ Աստուծոյ Մխածին Որդին որ իջաւ եւ սակի մուրճով մը նշանակեց Հայաստանի Մայր եկեղեցիին հիմնքուն տեղը:

Ս. Գրիգոր իր տեսիլքը պատմեց Տրդատ Թագաւորին: Հայրապետն ու Թագաւորը Յիսուսի իջման վայրին վրայ շինել տուին փառաւոր եկեղեցի մը որ նուիրուեցաւ Սուրբ Աստուածածնին եւ դարձաւ Հայոց Կաթողիկոսներու Աթոռանիստ եկեղեցին: Հետագային այդ եկեղեցին կոչուեցաւ Կաթողիկէ Սուրբ Էջմիածնի:

Ս. Գրիգոր Հայրապետ ամէն կողմ եկեղեցիներ կանգնեց եւ Քահանաներ ու Եպիսկոպոսներ ձեռնադրեց: Ան Յիսուս Քրիստոսի լոյսովը լուսաւորեց ամբողջ Հայաստանը եւ դարձաւ Հայոց Երկրորդ Լուսաւորիչը:

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայաստանը լուսաւորելէ ետք, որոշեց դրացի երկիրներն ալ ողողել Աւետարանին լոյսովը. ուստի իր ձեռնադրած Եպիսկոպոսներէն շատերը զրկեց Վրաստան, Աղուանից երկիրը եւ Սարգաւսական:

Ս. Գրիգոր Լուսաւորչի օրով Նիկիոյ մէջ տեղի ունեցաւ Տիեզերական Ա. Ժողովը 325-ին, որուն մասնակցեցան 318 Հայրապետներ աշխարհի ամէն կողմերէն: Հայոց կողմէ այդ Ժողովին ներկայացուցել էր գնաց Ս. Գրիգորի կրօսեր որդին՝ Արիստակէս Հայրապետ:

Գրիգոր Լուսաւորիչ իր ծերութեան վերջին տարիները անցուց Սեպուհ լեռան վրայ՝ Մանեայ այրին մէջ ճգնելով, եւ հոն ալ փակեց իր աչքերը: Այդ շրջաններուն մէջ հովիւներ իրենց հօտերը արածելու առին պատահամբ մտան Մանեայ քարայրը եւ տեսան Ս. Հայրապետին անշնչացած մարմինը ու քարկոյտով մը ծածկեցին զայն:

Ս. Գրիգոր Լուսաւորիչ աշակերտներէն՝ Բասենցի Գառնիկ, հովիւներէն ստուգեց բազմաշարչար Հայրապետին մահը եւ ապա Մանեայ այրը գտնելով անոր մարմինը փոխադրեց Թորգան գաւառը ու հոն թաղեց:

Ե Ձ Ր Ա Կ Ա Յ Ո Ի Թ Ի Ի Ն

1) Տրդատ թագաւոր թէեւ շատ մեծ մեղքեր գործեց ու անգրթութիւններ քրտ, սակայն իր գղջումին եւ ապաշխարութեան համար Աստուծմէ թողութիւն ստացաւ: Ան քրիստոնեայ դառնալով եղաւ նոր մարդ մը: Նախկին գոռոգ Տրդատը դարձաւ Աստուածավախ, աւափին եւ խոնարհ թագաւոր մը, որ նուիրուեցաւ իր ժողովուրդին հոգեկան փրկութեան:

2) Աստուած ողորմած ու գթած է: Ան չ'ուզեր մեղաւորներուն կորուստը եւ անոնց առիթ կու տայ գղջումի ու ապաշխարութեան: Աստուած ողորմեցաւ Տրդատին եւ Հայ ժողովուրդին, ու բազմաշարչար Հայրապետին ձեռքով տուաւ իր Ս. Աւետարանին լոյսը:

3) Մենք՝ Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ գաւակներս ընթանալու եմք Ս. Թաղէոս եւ Բարթողիմէոս առաքելներու եւ Ս. Գրիգոր Լուսաւորչի կողմէ գծուած քրիստոնէական ուղիէն: Միշտ սիրելու եմք զԱստուած, հնազանդելով անոր օրէնքներուն:

Հ Ա Ր Յ Ո Ի Մ Ն Ե Ր

1) Սուրբ կոյտերու նահատակութենէն վերջ Աստուած ինչպէ՞ս պատժեց Տրդատ թագաւորը:

2) Խոսքովի իր երազին մէջ ի՞նչ տեսաւ:

3) Ո՞ր իշխանը ղրկեցին Ս. Գրիգորը Խոր վերապէն հանելու համար:

4) Տրդատ եւ իր պալատականները որո՞ւ աղօթքով բժշկուեցան:

5) Ո՞ր թուականին քրիստոնէութիւնը պետական կրօնք հռչակուեցաւ Հայաստանի մէջ:

6) Ս. Գրիգոր ո՞ր քաղաքը ղրկուեցաւ Եպիսկոպոս ձեռնադրուելու համար:

7) Ս. Գրիգոր Հայաստանի ամէն կողմերը ի՞նչ ըրաւ:

8) Ո՞ր գետին մէջ մկրտուեցան Տրդատ թագաւորն ու Աշխէն թագուհին:

9) Ս. Գրիգոր ինչո՞ւ համար Լուսաւորիչ կոչուեցաւ:

10) Ինչպէ՞ս տեղի ունեցաւ Ս. Էջմիածնի տաճարին շինութիւնը:

11) Ս. Գրիգոր Լուսաւորիչ ո՞ր այրին մէջ ճգնեցաւ:

12) Որո՞նք գտան Ս. Գրիգոր Լուսաւորչի անշնչացած մարմինը եւ ի՞նչ ըրին:

13) Ո՞ւր թաղուեցաւ Ս. Գրիգոր Լուսաւորչի մարմինը:



Ը. ԴԱՍ

Ա. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐԶԻ ՅԱԶՈՐԴՆԵՐԸ

.....

Ա.— ՍՈՒՐԲ ԱՐԻՍՏԱԿԷՍ ՀԱՅՐԱՊԵՏ

Սուրբ Գրիգոր իր վերջին տարիներուն իր որդին՝ Արիստակէսը պատասխանատու կարգած էր Հայաստանեայց եկեղեցւոյ զործերը վարելու համար: Իսկ երբ ինք Մանեայ այրը քաշուեցաւ եւ հոն վախճանեցաւ, Արիստակէս Հայրապետ յաջորդեց իրեն ու ձեռնհասօրէն վարեց Կաթողիկոսական Աթոռը եօթը տարիներ: Ան շրջեցաւ Հայաստանի զանազան կողմերը եւ հաւատքի մէջ հաստատեց շատերը. իսկ յանդիմանեց ու խարանեց չար ու անբարոյ կեանք վարողները, նամանաւանդ նախարարական տունները, որոնցմէ շատեր տակաւին հեթանոսական զեղխ կեանք կը վարէին: Իր օրով մեռաւ Տրդատ Թագաւոր եւ անոր յաջորդեց որդին՝ Խոսրով Կոտակ: Արիստակէս թեւ թիկունք եղաւ Խոսրովին:

Չար մարդիկ չկրցան հանդուրժել Արիստակէսի յանդիմանութիւններուն: Շոփաց աշխարհի վերակացու իշխանը՝ Արքեղայոս կարգ մը չար նախարարներու մեղսակցութեամբ յարձակեցաւ Արիստակէս Հայրապետին վրայ եւ սպաննեց զայն 333 թուին, երբ ան հովուական այցելութեան դաջած էր այդ կողմերը:

Բ.— Ս. ՎՐԹԱՆԷՍ ՀԱՅՐԱՊԵՏ

Արիստակէս Հայրապետին յաջորդեց իր մեծ եղբայրը՝ Վրթանէս 333 թուին, որ արգէն գործակից էր իր եղբոր:

Վրթանէս Հայրապետ իր եղբոր նման զօրավիյ կեցաւ Խոսրով Թագաւորին եւ եղաւ շինարար Կաթողիկոս մը: Ան ալ իր յանդիմանութիւնները անպակաս ըրաւ մեղքի ու ապականութեան ետեւէ գացող նախարարներուն եւ անոնց տիկիներուն, որոնցմէ շատեր չուղեցին հանդուրժել: Անոնք դաւադրութիւն մը սարքեցին Սուրբ Հայրա-

պետին դէմ՝ երբ ան Տարօն դաջած էր՝ Աշտիշատի Մայր Եկեղեցիին մէջ՝ պատարապելու համար:

Չար նախարարները երկու հարիւր Սասունցի կռապաշտ լեռնականներ զրկեցին հոն, որպէսզի եկեղեցին պաշարեն ու սպաննեն Վրթանէս Կաթողիկոսը: Սակայն Սասունցի լեռնականները եկեղեցին պաշարելու ատեն, յանկարծ անշարժութեան մատնուեցան Աստուծոյ կողմէ եւ չկրցան մօտենալ Հայրապետին:

Սուրբ Պատարապի արարողութենէն վերջ Հայրապետը դաւադիրներուն մօտենալով հարցուց անոնց թէ ինչո՞ւ համար եկած են եւ ի՞նչ կը փնտռեն: Սասունցի լեռնականները խոստովանեցան ամէն բան եւ զղջացին իրենց բրածին վրայ: Ս. Վրթանէս ներեց անոնց եւ յորդորեց զանոնք: Դաւադիր լեռնականները հաւատքի եկան եւ Հայրապետին ձեռքով քրիստոնեայ մկրտուեցան Արածանի գետին մէջ:

339-ին մեռաւ Խոսրով Կոտակ Թագաւորը եւ անոր յաջորդեց իր որդին Տիրան: Իսկ Վրթանէս Հայրապետն ալ վախճանեցաւ 341 թուին:

Գ.— Ս. ՅՈՒՍԻԿ ՀԱՅՐԱՊԵՏ

Վրթանէս Հայրապետին յաջորդեց իր Որդին՝ Յուսիկ, որ օժտուած էր Աստուծային շնորհներով: Ան եղաւ քաջ եւ կորովի հովուապետ մը ու չվարանեցաւ յանդիմանելու բոյոր չարագործները, նոյնիսկ Թագաւորը՝ իր անօրէնութիւններուն համար:

Այդ օրերուն Բիւզանդիոնի զահուն վրայ նստաւ ուրացող Յուլիանոս կայսրը որ ոխերիմ թշնամի դարձաւ քրիստոնէութեան: Սա իր պատկերը զրկեց Տիրան Թագաւորին որպէսզի զայն կախէ եկեղեցիին մէջ: Տիրան Յուլիանոսի զայրոյթէն վախնալով ընթացք տուաւ անոր փափաքին եւ որոշեց եկեղեցիին մէջ կախել պատկերը:

Յուսիկ Հայրապետ չյօժարեցաւ այս բանին, քանի որ սրբապղծութիւն էր նման պատկեր մը եկեղեցի մտցնելը: Ուստի Թագաւորին ձեռքէն պատկերը յափշտակելով գետին նետեց ու իր ոտքերուն տակ առնելով կտոր-կտոր ըրաւ:

Թագաւորը Կաթողիկոսին այս արարքին դէմ բարկացաւ եւ հրամայեց որ ճիւղտներով ծեծեն զայն: Իր Աստուծոյն համար նախանձախնդիր Հայրապետը սաստիկ ծեծի ու խոշտանդումի ցաւերուն տակ մի քանի օրէն աւանդեց իր հոգին:

Յուսիկ Հայրապետ վեց տարի վարեց կաթողիկոսական գոր-

ծերը: Անոր մահէն ետք կաթողիկոսական աթոռին վրայ նստաւ Փառէն Աշտիշատեցի:

Փամանակ մը ետք Պարսից Շապուհ թագաւորը խարէութեամբ իր մօտ կանչեց Տիրանը եւ անոր աչքերը փորել տուաւ: Իսկ Հայոց թագաւորական գահուն վրայ նստաւ Տիրանի որդին՝ Արշակ Բ.:

Դ.— Ս. ԳՐԻԳՈՐԻՍ ՊԱՐԹԵԻ ՀԱՅՐԱՊԵՏ

Յուսիկ Հայրապետին եղբայրն էր Ս. Գրիգորիս Պարթեւ, որուն ունեցած խոր հաւատքը, մաքուր նկարագիրն ու արտակարգ կարողութիւնները երիտասարդ տարիքի մէջ զինք բարձրացուցին Վրաստանի եւ Աղուանիստանի կաթողիկոսութեան, զոր վարեց ձեռնհասօրէն:

Սուրբ Գրիգորիս ամէն տեղ շրջեցաւ, քարոզեց քրիստոսի Աւետարանը եւ հիմնեց եկեղեցիներ: Հասաւ մինչեւ Մազքութեանու երկրին սահմանները եւ անոնց Սանեսան թագաւորին հանդիպելով քարոզեց, որպէսզի անոնք ալ ճանչնային ճշմարիտ Աստուածը:

Սանեսանի իշխանները՝ հակառակեցան Գրիգորիսին, քանի որ ան քրիստոնէական լոյսին համաձայն կը դատապարտէր յափշտակութիւնը, սպանութիւնը, ազահութիւնը եւ աւարարութիւնը: Իսկ իրենք կ'ուղէին շարունակել իրենց նախկին կեանքը որ լի էր յափշտակութեամբ ու արիւնահեղութեամբ: Ուստի չհանդուրժեցին Ս. Հայրապետին յորդորներուն եւ բռնելով զայն՝ կախեցին կատաղի ձիու մը պոչէն եւ թող տուին բաց դաշտի մը մէջ: Առաքինի Կաթողիկոսը սոսկալի չարչարանքով մը նահատակուեցաւ:

Ե Զ Ր Ա Կ Ա Յ Ո Ւ Թ Ի Ի Ն

1) Արիստակէս, Վրքամէս, Յուսիկ եւ Գրիգորիս Հայրապետները իրենց առաքինի եւ սրբակրօն կեանքովն ու անդուլ աշխատանքովը ծաղկեցուցին Հայաստանեայց Առաքելական Սուրբ եկեղեցին՝ հաւատքի մէջ հաստատելով իրենց յանձնուած հօտը: Անոնք եղան բարի հովիւներ, եւ իրենց կեանքը գոհեցին իրենց ոչխարներուն բարօրութեան համար:

2) Այս երանելի Հայրապետներուն կեանքը օրինակ պէտք է ըլլայ մեզի, որպէսզի մենք ալ նախանձախնդիր ըլլանք մեր Սուրբ եկեղեցւոյ սրբութիւններուն եւ օրէնքներուն:

3) Մեր Սուրբ Հայրապետները մեզի կը թելադրեն որ զգուշանանք գեղի, շուսյտ եւ անբարոյ կեանքէ, նաեւ ագահութենէ, յիսկալութենէ ու ամէն տեսակ մեղքերէ:

Հ Ա Ր Ց Ո Ւ Մ Ն Ե Ր

1) Արիստակէս եւ Վրթանէս Հայրապետները որո՞ւ որդիներն էին:

2) Ո՞վ յաջորդեց Ս. Գրիգոր Լուսաւորիչին:

3) Ո՞վ սպաննեց Արիստակէս Հայրապետը:

4) Ո՞վ յաջորդեց Արիստակէս Հայրապետին:

5) Սասունցի լեռնականները ինչո՞ւ համար պաշարեցին Աշտիշատի եկեղեցին:

6) Եկեղեցին պաշարելու ատեն լեռնականները ի՞նչ եղան:

7) Վրթանէս Հայրապետ պատարագէն վերջ ի՞նչ ըսաւ եւ ի՞նչ ըրաւ Սասունցի լեռնականներուն:

8) Սասունցի լեռնականները որո՞ւ ձեռքով քրիստոնէայ մկրտուեցան:

9) Յուսիկ Հայրապետ որո՞ւ որդին էր:

10) Յուսիկ Հայրապետ ի՞նչ ըրաւ Յուլիանոս կայսեր նկարը:

11) Տիրան թագաւորի հրամանով ի՞նչ ըրին Յուսիկ Հայրապետը:

12) Ս. Գրիգորիս որո՞ւ եղբայրն էր:

13) Ս. Գրիգորիս ո՞ր երկիրներու վրայ Կաթողիկոս կարգուեցաւ:

14) Ինչպէ՞ս նահատակուեցաւ Ս. Գրիգորիս Հայրապետը:

Թ. ԴԱՍ

ՄԵՅՆ ՆԵՐՍԷՍ ԿԱՅՐԱԿԵՆ

.....

Փառէն Աշտիշատեցի Կաթողիկոսի մահէն ետք Հայոց Արշակ Բ. թագաւորը մեծ ժողով մը գումարեց, որուն մասնակցեցան Հայ նախարարներն ու բարձրաստիճան եկեղեցականները: Այդ ժողովը որոշեց արժանաւոր Կաթողիկոս մը ընտրել թափուր մնացած Հայրապետական Աթոռին համար: Բոլոր ժողովականներուն աչքերը սեւեւեւեցան Յուսիկ Հայրապետի թոռան՝ Ներսէսի վրայ, որ քարտուղարն էր Արշակ թագաւորին:

Ներսէս մերժեց ժողովականներուն առաջարկը՝ ինքզինքը արժանի չտեսնելով Կաթողիկոսական մեծ եւ պատասխանատու պաշտօնին: Սակայն Հայոց թագաւորին, իշխաններուն եւ եպիսկոպոսներուն յայտնի էր իր առաքինի կեանքն ու անոր հետ զուգընթաց ունեցած վարչական կարողութիւնը: Ուստի բոլորը միահամուռ կրկնեցին իրենց առաջարկը եւ յայտնեցին թէ ինքն էր արժանաւորագոյն անձը Հայաստանեայց եկեղեցւոյ Հայրապետական Աթոռին համար:

Արշակ թագաւոր տեղւոյն վրայ Ներսէսի մէջքէն հանեց զինուորական սուրը եւ նոյն ատեն հրամայեց որ հանեն անոր զինուորական պատմուճանը ու հապցնեն կրօնականի սքեմ: Ապա կանչելով ծերունի Փաւստոս եպիսկոպոսը, անոր ձեռքով Ներսէսը սարկաւազ ձեռնադրել տուաւ:

Շուտով Ներսէսը զրկեցին Կեսարիա, ուր մեծ հանդիսութեամբ Կաթողիկոս ձեռնադրուեցաւ 353 թուականին:

Ներսէս Կաթողիկոս իր պաշտօնին գլուխը անցնելով ձեռնարկեց մեծ բարեկարգութիւններու: Իր օրով տակաւին հեթանոսական յոռի բարքերը շարունակողներուն թիւը շատ էր մեր երկրին մէջ: Ներսէս Կաթողիկոս կոպապաշտական այդ մեղաւորիք բարքերը ի սպաս ջնջելու եւ անոնց տեղ Հայ ժողովուրդի սրտին մէջ քրիստոնէական ազնիւ զղացումները ներմուծելու եւ արմատացնելու մտադրութեամբ, գումարեց եպիսկոպոսական մեծ ժողով մը Աշտիշատի մէջ,



Մեծն Ներսէս Հայրապետ

որուն մասնակցեցան նաեւ աշխարհական ներկայացուցիչներ Այդ ժողովին մէջ առնուկցան կարեւոր որոշումներ եւ դատապարտուեցան ու արդիւրեցան հեթանոսութեան շրջանէն մնացած վատ սովորութիւններն ու մոլութիւնները:

Ներսէս Կաթողիկոս ժողովի որոշումներուն գործադրութիւնը ուղղակի իր ձեռքը առաւ եւ հաստատեց բազմաթիւ աղքատանոցներ որրանոցներ, հիւանդանոցներ, ուրկանոցներ բորոտներու եւ տարափոխիկ ախտաւորներու համար, ու նաեւ հիւրանոցներ օտարականներու համար:

Սուրբ Հայրապետը ամէն կողմ կը քարոզէր եւ կը թելադրէր որ մարդիկ բարեկործութեան ետեւէ ըլլային: Ինք ժողովուրդին օրինակ ըլլալով իր տան մէջ կը հողար որբերն ու չքաւորները: Իր դուռը միշտ բաց էր աղքատներու եւ օտարականներու առջեւ: Իր սեղանին մասնակից կ'ըլլային կաղեր, կոյրեր, հաշմանդամներ եւ տընանկներ, որոնց վէրքերը յաճախ իր ձեռքերովը կը խնամէր ու կը կապէր:

Շարունակ կը խրատէր իր հօտը եւ կ'ըսէր, «Ձեր մեղքերը

պէտք է ողորմածութեամբ քաւէք եւ ձեր անօրէն դործերը՝ զթութեամբ ու աղքատներուն ողորմութիւն տալով»:

Ներսէս Հայրապետ արդիւնց հեթանոսական սովորութիւնով մեռելի քաղիլ, երես ցտել, զգեստ պատռել, անյուսութեամբ ոգր ու կոծ ընել: Խրատեց իր հօտը որ նկատի ունեման յարութեան յոյսը եւ ամէն ոք աշխատի իր բարի գործերովը երկինքի արքայութեան արժանաւոր գաւակը հանդիսանալ:

Արգիլեց մերձաւոր ազգականներու հետ ամուսնութիւնը:

Դատաւարացեաց ցոփութիւնը, արքեպիսկոպոսիտութիւնը, չարագործութիւնը եւ ամէն տեսակ մալութիւնները:

Հաստատեց վանքեր, կուսանոցներ եւ դպրոցներ:

Կազմակերպեց Հայ Եկեղեցական դասը՝ ամէն կողմ քահանաներ, եպիսկոպոսներ եւ քարոզիչներ դրկելով:

Կանոնաւորեց եկեղեցիներու արարողութիւնները եւ որոշ օրեր ու ժամեր նշանակեց անոնց գործարարութեան համար:

Ներսէս Կաթողիկոս եղաւ իսկական Հայր մը իր ժողովուրդին: Պատմութիւնը իրեն ընծայեց Մեծ տիտղոսը իր կատարած մեծ գործերուն համար:

Մեծն Ներսէս թեւ թիկունք եղաւ Արշակ թագաւորին եւ անոր մահէն ետք, նաեւ անոր որդւոյն՝ Պապ թագաւորին: Սակայն երբեք չբաշխեցաւ զանոնք յանդիմանելէ, երբ տեսաւ անոնց ոճրային արարքներն ու հակաքրիստոնէական անարդար գործերը:

Արշակ թագաւոր ունեցաւ կարգ մը սայթաքումներ, որոնց մէջ ամենէն քստմենելին էր իր եղբորորդւոյն Գնէլի սպաննութիւնը, զոր դաւադրաբար մեռցնել տուաւ եւ սպա անոր կինը՝ Փառանձեմը իրեն կնութեան առաւ: Մեծն Ներսէս ոճիրին գործադրութենէն առաջ լուր առնելով փութաց թագաւորին քով եւ ուղեց առաջին առնել, սակայն Արշակ իր վրանէն դուրս չելաւ եւ սուտ քուն ձեւացուց՝ ժամանակ շահելու համար: Մինչ Հայրապետը տակաւին կը սպասէր, լուր եկաւ թէ Գնէլ սպաննուած է:

Մեծն Ներսէս բեկուած սրտով հեռացաւ Արշակին քովէն:

Արշակ թագաւորին սխալ գործերէն մէկն ալ եղաւ Արշակաւան քաղաքին շինութիւնը, ուր լեցուց ամէն տեսակ գողերը, աւազակներն ու ոճրագործները:

Արշակ թագաւորին այս ընթացքը պատճառ դարձաւ որ բազմաթիւ նախարարներ վշտանան իրմէ եւ հեռանան: Այդ օրերուն պարսիկները Արշակը Պարսկաստան հրաւիրեցին եւ դաւադրութեամբ

ձերբակալեցին զայն: Ապա իրենց զօրքերովը յարձակեցան Հայաստանի վրայ եւ ամէն կողմ աւեր սփռեցին: Արշակ մեռաւ Անյուշ բերդի բանտին մէջ:

Արշակի որդին՝ Պապ, Մեծն Ներսէսի ջանքերով Յոյներէն օղնական զօրքեր ստացաւ եւ պարսիկներու ձեռքէն դրաւեց Հայաստանը եւ նստաւ իր հօրը գահուն վրայ: Սկիզբները Պապ հետեւեցաւ Մեծ Հայրապետի յորդորներուն եւ երկուքը միասին սկսան վերաշինել աւերուած հայրենիքը: Սակայն ժամանակ մը վերջ երիտասարդ թագաւորը սայթաքումներ ունեցաւ եւ կարեւորութիւն չտուաւ Մեծն Ներսէսի խրատներուն: Պապ թագաւորի անառակ կենցաղին պատճառով Հայաստան տուժեց եւ տկարացաւ ներքնապէս ու արտաքնապէս:

Մեծն Ներսէս վախճանեցաւ 373 թուականին: Ան իր բարեսիրական գործերովը դարձաւ Հայոց Արտի Լուսաւորիչը:

Ե Զ Բ Ա Կ Ա Յ Ո Ի Թ Ի Խ Ն

1) Մեծն Ներսէս իր ամբողջ կեանքը ի սպաս դրաւ իր հօտին բարօրութեան համար՝ առաջնորդելով զայն Աստուծոյ շախնայեցէն:

2) Սիրոյ եւ գթութեան համար անոր ըրած կոչերը անարագանգ չմնացին հայ ժողովուրդին մէջ, ու ամէն կողմ շինուեցան բարեսիրական հաստատութիւններ:

3) Սակայն դժբախտաբար հետագային Արշակ եւ Պապ թագաւորները, ու նաեւ կարգ մը նախարարներ Աստուծմէ հեռանալով սայթաքումներ ունեցան:

4) Անոնք չուզեցին մտիկ ընել Սուրբ Հայրապետին իմաստուն խրատները եւ մեր երկիրը առաջնորդեցին դէպի կործանում:

5) Եթէ Հայոց թագաւորն ու նախարարները Մեծն Ներսէսի խորհուրդներուն անսալով հեռու կենային անարդարութենէ եւ չարութենէ, Հայաստան պիտի ըլլար միասիրտ ու միակամ եւ մեր Բշնամիները պիտի չհամարակէին աւերել մեր երկիրը:

6) Իրաւաբան չլինելու Հայ քրիստոնեայ, հարուստ թէ աղքատ, մտաւորական թէ արհեստաւոր, կամ առեւտրական, բոլորն ալ սիրելու եւ յարգելու եմ իրենց բարի հովիւներն ու հովուապետները: Ուշադրութիւն դարձնելու եմ անոնց կոչերուն եւ խրատներուն:

7) Մեր Հայրապետները Աստուծոյ կողմէ կարգուած հովիւներ են մեր վրայ՝ մեզ ուղիղ համբու մէջ առաջնորդելու համար : Եթէ անոնց բարի խրատներուն դէմ կեանք, Աստուծոյ դէմ ապստամբած կ'ըլլանք : Ով որ Աստուծոյ դէմ ապստամբի, անպատիժ չի մնար :

Հ Ա Ր Յ Ո Ւ Մ Ն Ե Ր

- 1) Մեծն Ներսէս ո՞ր Հայրապետին թոռն էր :
- 2) Ի՞նչ էր Մեծն Ներսէսի պաշտօնը Կաթողիկոս ըլլալէ առաջ :
- 3) Մեծն Ներսէս ինչո՞ւ համար ժողով գումարեց Աշտիշատի մէջ :
- 4) Մեծն Ներսէս ի՞նչ բաներ շինել տուաւ Հայաստանի ամէն կողմերը :
- 5) Յաճախ որո՞նք սեղանակից կ'ըլլային Մեծն Ներսէսի :
- 6) Մեծն Ներսէս ինչպիսի՞ բաները արգելեց :
- 7) Արշակ Թագաւոր միշտ հետեւեցա՞ւ Մեծն Ներսէսի խորհուրդներուն :
- 8) Ո՞վ սպաննել տուաւ Գնէլը :
- 9) Արշակ Թագաւոր ո՞ր քաղաքը շինել տուաւ եւ ի՞նչ տեսակ մարդիկ բնակեցուց անոր մէջ :
- 10) Ի՞նչ պայմաններու տակ մեռաւ Արշակ Թագաւոր :
- 11) Ո՞վ յաջորդեց Արշակին :
- 12) Պապ Թագաւոր հետեւեցա՞ւ Մեծն Ներսէսի խորհուրդներուն :
- 13) Արշակի եւ Պապի սոյթաբուսներուն պատճառով Հայաստան ի՞նչ վիճակի մատնուեցաւ :

Ժ. ԴԱՍ

ՅԱՅ ԳԻՐԵՐՈՒ ԳԻԻՏԸ

.....

Մեծն Ներսէսի մահէն ըիչ ետք Պապ Թագաւորը դաւադրութեան մը զոհ գնաց : Հայաստան ունեցաւ տագնապալի օրեր : Թէեւ Մանուէլ Մամիկոնեան իշխանին ջանքերովը եօթը տարուան խաղաղ շրջան մը եղաւ, սակայն անոր մահէն վերջ մեր երկիրը բաժնուեցաւ երկու մեծ տէրութիւններու միջեւ : Արեւելեան մասին վրայ տիրեցին Պարսիկները, իսկ արեւմտեան մասին վրայ՝ Յոյները :

Արեւելեան Հայաստանի վրայ Թագաւորեց Խոսրով Դ. Արշակունին 383ին, հարկատու ըլլալով Պարսիկներու :

Մեծն Ներսէսի մահէն վերջ Հայոց Կաթողիկոսական աթոռին վրայ յաջորդաբար՝ նստան Եսահ, Զաւէն եւ Ասպուրակէս հայրապետները :

387 թուականին Կաթողիկոսական աթոռին վրայ բարձրացաւ Մեծն Ներսէսի որդին՝ Ս. Սահակ : Ան ստացած էր բարձր ուսում եւ հմտացած էր յունարէն եւ ասորերէն լեզուներու : Ամուսնացած էր եւ ունէր մէկ հատիկ աղջիկ մը : Կանուխէն իր կինը կորսնցնելով նետուած էր կրօնական ասպարէզ : Իր շուրջը բոլորած էր վաթսունի մօտ աշակերտներ եւ անոնց հետ կը վարէր կրօնաւորական խնամակեաց կեանք մը : Իր աշակերտներովը կը պտտէր քաղաքէ քաղաք եւ զիւղէ զիւղ՝ Քրիստոսի Աւետարանը քարոզելու համար :

Ս. Սահակի կազմակերպած այս վանական դրութիւնը իրեն նպատակ ունէր Սուրբ Գրական ուսումնասիրութեամբ պարապել առանձնութեան մէջ, պատրաստուել հոն թարգմանչական եւ քարոզչական պաշտօնին : Ապա ժողովուրդին մէջ մտնել ու Աստուածաշունչը թարգմանել եւ քարոզել :

**


Ս. Սահակ հայրապետ եղաւ խոհմ եւ դիւանապետ կաթողիկոս մը : Պարսիկներու տիրապետութիւնը շատ գէշ գոյավիճակ մը



Վրամշապուհ թագաւոր

ստեղծած էր Հայաստանի մէջ, նամանաւանդ էր պարսից արքայից արքան զահրնկէց ըրած էր Խոսրով Դ. Արշակունի թագաւորը: Թէեւ Խոսրովին եղբայրը՝ Վրամշապուհ նստած էր Հայաստանի զահուն վրայ, սակայն պարսիկներուն լուծը շատ ծանր կը ճնշէր Հայոց:

Ս. Սահակ անձամբ Պարսկաստան դնաց եւ ներկայացաւ



Ս. Մեսրոպ Մաշտոց Վարդապետ Ս. Սահակ Պարբե-Լայրապետ

պարսից Վրամ կրման արքային եւ յաջողեցաւ անոր սիրտը շահիլ: Սուրբ Հայրապետին իմաստուն քաղաքականութեան շնորհիւ պարսիկները թեթեւցուցին իրենց լուծը:

Ս. Սահակ Հայրապետին օրով Մեսրոպ Մաշտոց անունով երիտասարդ դիանական մը՝ նետուած էր կրօնական ասպարէզ: Ան ծնած էր Տարօն գաւառի Հացեկաց գիւղին մէջ: Իր մանկութենէն սորված էր յունարէն, ասորերէն եւ պարսկերէն լեզուները: Պաշտօնավարած էր Հայոց Խոսրով Դ. թագաւորին մօտ որպէս դրօպի: Սակայն Աստուծոյ ու իր Եկեղեցիին հանդէպ ունեցած սէրը այնքան վառ եղած էր իր սրտին մէջ որ թագաւորական պալատը ձգելով դարձած էր կուսակրօն քահանայ եւ նուիրուած էր Ս. Աւետարանի քարոզութեան:

Ս. Սահակի նման Մեսրոպ Մաշտոցն ալ իր շուրջը հաւաքած էր բազմաթիւ երիտասարդ կրօնաւորներ եւ անոնց հետ կը շրջէր Հայաստանի զանազան կողմերը՝ Քրիստոսի լոյսը տարածելու համար: Իր ջանքերը ապարդիւն չանցան: Շատ շատեր իրենց չար ճամբաներէն ետ կենարով դարձան իսկական քրիստոնեաներ: Ս. Մես-



Սուրբ Թարգմանիչներ

բոլոր քարոզութիւններուն շնորհիւ Գողթն դաւառին մէջ դեռ մնալիս ճիշտութեան հետքերը խաղաղ շնչուեցան եւ մարդիկ աստուածուղաշտութեան ետեւէ եղան :

Մինչեւ Սահակ - Մեսրոպի շրջանը, հայեր տակաւին սեփական դիր չունէին : Մեր թագաւորները, իշխաններն ու կառավարական պաշտօնեաները իրենց պետական հրովարտակներն ու արձանադրութիւնները կը գրէին պարսկերէնով կամ յունարէնով : Իսկ եկեղեցիներու մէջ Աստուածաշունչը նախ կը կարդացուէր յունարէն կամ ասորերէն, եւ ապա ուսեալ եկեղեցականներ կարդացուածը բերանացի կը թարգմանէին հայերէնի, որպէսզի ժողովուրդը կարենար հասկնալ Աստուծոյ խօսքը :

Աստուածաշունչի ընթերցման այս ձեւը բաւարարութիւն չէր տար հայ ժողովուրդին :

Սուրբ Մեսրոպ իր քարոզութեանց միջոցին կը տեսնէր այս պարագան եւ կը դարձնէր թէ որքան աւելի արդիւնաւոր գործեր կարելի էր կատարել եթէ հայերէն լեզուով Աստուածաշունչ գոյութիւն ունենար : Ան դիչեր ցիրեկ կը մտածէր այս ուղղութեամբ եւ Աստուծոյ աղօթելով կը ծրարէր այբուբէն գտնել հայերէն լեզուի համար :

Ս. Մեսրոպ իր ծրարէրը պարզեց Սահակ կաթողիկոսին եւ խնդրեց անոր օժանդակութիւնը : Ս. Սահակ Մեսրոպ վարդապետին ծրարէրը իմանալով շատ ուրախացաւ եւ իր կարգին դիմեց Վոսմապուհ թագաւորին, անոր աջակցութիւնը ձեռք ձգելու համար :

Վոսմապուհ շատ սիրալիւր ընդունեցութիւն մը ցոյց տուաւ կաթողիկոսին եւ խոստացաւ արքունի գանձէն հագալ Ս. Մեսրոպի ծրարին բոլոր ծախսերը :

Սուրբ Մեսրոպ հայոց թագաւորէն ու կաթողիկոսէն քաջալերուած՝ սկսաւ գործի : Այցելեց զանազան երկիրներ ու քաղաքներ : Ամէն ազգերու այբուբէնները ուսումնասիրեց եւ անոնցմով փորձեց հայերէն լեզուն դրի առնել. սակայն չյաջողեցաւ : Ահազին աշխատանքէ ու յոգնութենէ վերջ, երբ ձեռնունայն Հայաստան կը վերադառնար, Սամոսատ քաղաքին մօտ, աղօթքի պահուն, յանկարծ երկնային տեսիլք մը ունեցաւ : Երկինքէն իջաւ ձեռք մը ու դրեց իր փնտուած հայերէն նշանագրերը :

Այս տեսիլքէն վերջ Ս. Մեսրոպ Աստուծոյ կողմէ լուսաւորուելով յորինեց հայոց այբուբէնը ու իր աշակերտներուն հետ առաջին անգամ թարգմանեց Աստուածաշունչէն Առաքիպ գիրքը : Այս յաջողութենէն ետք ուրախութեամբ ձամբայ ելաւ դէպի Հայաստան :

Սահակ կաթողիկոս եւ Վոսմապուհ թագաւոր մեծ ցնծութեամբ ընդունեցան Մեսրոպ Մաշտոցը ու երէքը միասին սկսան գործի : Բացին դպրոցներ ու աշակերտներ հաւաքելով անոնց սորվեցուցին հայերէն կարդալ ու գրել :

Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ ձեռնարկեցին Աստուածաշունչի թարգմանութեան եւ յաջողութեամբ գլուխ հանեցին դայն : Այս թարգմանուած հայերէն Աստուածաշունչէն բաղմաթիւ օրինակներ ընդօրինակել տալով դրկեցին Հայաստանի ամէն կողմերը, որպէսզի հայ ժողովուրդը իր սեփական լեզուով իմանար Աստուծոյ խօսքը :

Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ իրենց կարգ մը աշակերտները դրկեցին Աղեքսանդրիա ու Բիւզանդիոն, որպէսզի անոնք այդ քաղաքներուն մէջ բարձր ուսում ստանան եւ ապա Հայաստան վերադառնալով լծուին ուսուցչական եւ դրական աշխատանքներու :

Իրենց աշակերտներուն մէջ նշանաւոր եղան՝ Կարիւն, Նիքիկ, Մովսէս Խորենացի, Եղիշէ եւայն, որոնք Աստուածաշունչէն դատուելի օրտակար գիրքեր ալ գրեցին ու թարգմանեցին եւ իրենց կարգին նոր աշակերտներ հասցուցին՝ հայ դրականութիւնը ծաղկեցնելու եւ յաւերժացնելու համար :



Ս. Մեսրոպ կ'օրհնէ Կորիւնը

Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ իրենց այս մեծ աշխատանքովը հիմը դրին Հայ գրականութեան, կերտեցին Հայ ազգին Ոսկեդարը եւ դարձան հայոց մտքի լուսաւորիչներ:

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ի Թ Ի Ի Ն

- 1) Քրիստոսի եւ իր ազգին հանդէպ ունեցած սէրն էր որ մղեց Ս. Մեսրոպը, որպէսզի ծրագրէր հայ գիրերու գիտը:
- 2) Քրիստոսի եւ իր հօտին հանդէպ ունեցած սէրն էր որ մղեց Ս. Սահակը, որպէսզի թեւ թիկումք կանգնէր Ս. Մեսրոպի ծրագրին:
- 3) Քրիստոսի եւ իր ժողովուրդին հանդէպ ունեցած սէրն էր որ մղեց Վառաշապուհ թագաւորը, որպէսզի ֆաջալերէր Սուրբ Մեսրոպը եւ Հայ գիրերու գիտին յաջողութեան ու Աստուածաշունչի թարգմանութեան համար տրամադրէր իր ամբողջ գանձը:

- 4) Սէր եղած տեղը օրհնութիւն եւ շինութիւն կ'ըլլան: Թագաւոր, Կաթողիկոս եւ Վարդապետ իրենց հօտին սիրովը վառուած ըլլալով ձեռնարկեցին Հայ ազգին համար էական ու կենսական գործի մը, եւ Աստուծոյ օգնութեամբ յաջողեցան գլուխ հանել զայն:
- 5) Հայ գիրերու գիտով եւ Աստուածաշունչի թարգմանութեամբ քրիստոնէութիւնը աւելի եւս ամրացաւ հայոց մէջ եւ մեր ազգը փրկուեցաւ ձուլումէ ու կորուստէ: Ասանց գիրերու գիտին, հայեր ստիպուած պիտի ըլլային իւրացնելու օտար լեզու, գիր, գրականութիւն եւ ուսում, որոնք դարերու ընթացքին մեր լեզուն մոռցնել տալով մեզ պիտի առաջնորդէին օտարացումի:
- 6) Այժմ մեր պարտականութիւնն է վառ պահել յիշատակը Ս. Սահակ Կաթողիկոսին, Ս. Մեսրոպ Մաշքոցին եւ Վառաշապուհ թագաւորին: Սիրելու ենք մեր մեծաւասնիք եւ ֆաջրաբարբառ լեզուն ու զայն տարածելու ենք մեր ազգին բոլոր գաւակներուն, ուր որ ալ գտնուին անոնք: Կարգալու ենք Աստուածաշունչ մատնանը մեր մայրենի լեզուով, զոր մեզի աւանդ ձգած են մեր ազգին մտքի գոյգ Լուսաւորիչները:

Հ Ա Ր Յ Ո Ի Մ Ն Ե Ր

- 1) Որո՞ւ որդին էր Ս. Սահակ:
- 2) Ս. Սահակ ի՞նչ կ'ընէր Կաթողիկոս ըլլալէ առաջ:
- 3) Ս. Մեսրոպ ինչո՞ւ համար կ'ուզէր հայերէն գիրեր գտնել:
- 4) Ս. Մեսրոպ իր ծրագիրը որո՞ւն յայտնեց:
- 5) Ո՞վ էր Հայոց թագաւորը այն ատեն:
- 6) Վառաշապուհ Հայ գիրերու գիտի յաջողութեան համար ի՞նչ խոստացաւ:
- 7) Ս. Մեսրոպ ազօթքի պահուն ի՞նչ տեսաւ:
- 8) Առաջին անգամ Աստուածաշունչի ո՞ր գիրքը թարգմանուեցաւ:
- 9) Գիրերու գիտէն առաջ Հայ եկեղեցիներու մէջ Աստուածաշունչը ի՞նչ լեզուով կը կարդայուէր:
- 10) Ս. Սահակի եւ Ս. Մեսրոպի աշակերտներէն որո՞նք նշանաւոր եղան:
- 11) Ասանց Հայ գիրերու գիտին ի՞նչ կրնար ըլլալ Հայ ազգին վիճակը:

ԺԱ. ԴԱՍ

ԱՐՇԱԿՈՒՆԵԱՑ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԱՆԿՈՒՄԸ

.....

414 Թուականին մեռաւ Վրամշապուհ թագաւոր: Իրեն յաջորդեց իր որդին՝ Արտաշէս, որ քսաներկու տարեկան երիտասարդ մըն էր՝ բոլորովին անգիտակ իր կոչումին: Անոր անառակ կեանքը պատճառ դարձաւ որ հայ նախարարներուն մեծամասնութիւնը որոշէ դիմել պարսից արքունիքին, զայն իր դահէն վար առնելու համար:

Նախարարները իրենց դիտաւորութիւնը յայտնեցին Ս. Սահակին եւ խնդրեցին անոր օժանդակութիւնը: Սուրբ Հայրապետը նախարարներուն առաջարկն ու ընթացքը վնասակար պտաւ Հայաստանի ապագային համար եւ կռահեց թէ ինչ փորձանքներ ու նեղութիւններ կրնային առաջ դալ հայոց թագաւորին դահընկէցութիւնովը: Ուստի յորդորեց հայ նախարարները որ ետ կենան իրենց մտազրութենէն եւ ի միջի այլոց ըսաւ անոնց.

— Ես կը նախընտրեմ մեռնիլ՝ քան թէ հաւատացեալներէն մէկը՝ իր անարժան արարքին համար մատնել անօրէններուն... Քաւ լիցի ինձ, իմ հիւանդ ոչխարս առողջ դազանի հետ փոխել, որուն առողջութիւնն իսկ մեզի համար պատուհաս է:

Դժբախտաբար նախարարները ականջ չկատեցին փորձառու եւ հեռատես Հայրապետին իմաստուն խօսքերուն: Անոնք Տիգրան դային եւ պարսից արքայից արքային ներկայանալով զրպարտութիւններ ըրին Հայոց թագաւորին եւ Կաթողիկոսին մասին՝ ամբաստանելով զանոնք որպէս յունասէր եւ ապստամբ պարսից արքունիքին դէմ: Նոյն ատեն պարսից արքայից արքայէն խնդրեցին որ իրենց վրայ պարսիկ իշխան մը մարդպան կարգէ հայ թագաւորի փոխարէն:

Հայ նախարարներու ամբաստանութիւնն ու առաջարկը շատ հաճելի եկան պարսից արքունիքին: Երևոյթով Տիգրան կանչուեցան Հայոց թագաւորն ու կաթողիկոսը եւ երկուքն ալ պահընկէց եղան: Այս կերպով վերջ դտաւ հայոց Արշակունեաց թագաւորութիւնը:

Վեհձիհներսեհ անունով պարսիկ իշխան մը մարդպան կար-

գրեցաւ Հայաստանի վրայ եւ կաթողիկոսական աթոռին վրայ բազմեցաւ Սուրմակ անունով փառասէր եկեղեցական մը:

Կարճ ժամանակամիջոցի մը մէջ հայ նախարարները զգացին իրենց սխալը՝ երբ տեսան պարսիկ մարդպանին ճնշումներն ու Սուրմակին անարժան կենցաղը:

Նախարարները հալածեցին Սուրմակը եւ պարսից թագաւորին դիմելով զայն աթոռէն վար առին: Պարսից արքունիքին կարգադրութեամբ Հայոց Կաթողիկոսական Աթոռին վրայ յաջորդաբար նստան Բրքիշոյ եւ Շմուէլ ասորի եկեղեցականները, որոնց կատարած զեղծումներն ու վատ կենցաղը շատերու դայթակղութեան պատճառ դարձան:

Հայ նախարարները զղջացին իրենց ըրած սխալին ու դաւաճանութեան համար: Բայց շատ ուշ էր: Անոնք Ս. Սահակին քով երթալով լացին ու խնդրեցին որ ետ ստանձնէ Կաթողիկոսութիւնը: Սուրբ Հայրապետը քրիստոնէական ուղիով ներեց անոնց. սակայն կաթողիկոսութեան վարչական գործերը շտանձնեց, ալ պարսից արքունիքին թոյլտուութիւնովը զբաղեցաւ միայն հոգեւոր գործերով: Իր զբաղումները եղան՝ աղօթք, քարոզ եւ աւետարանչական այցելութիւններ:

Սուրբ Սահակ 439 թուին փակեց իր աչքերը՝ խոր սուգի մատնելով բովանդակ հայութիւնը: Անոր մահէն ետք Սուրբ Մեսրոպ Մաշտոց վարեց կաթողիկոսական գործերը՝ որպէս տեղապահ: Սակայն կարճ տեւեց Ս. Մեսրոպի պաշտօնավարութեան շրջանը. վեց ամիս ետք՝ 440 թուին վախճանեցաւ ու թաղուեցաւ Օշական գիւղը՝ Վահան Ամատունի իշխանի կալուածին մէջ: Հետագային Վահան իշխանը մատուռ մը շինել տուաւ Ս. Մեսրոպի գերեզմանին վրայ:

Ե Ձ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Ի Ի Ն

1) Հայ նախարարները ակաւոր սխալ մը գործեցին իրենց քաղաւորն ու կաթողիկոսը հեքամուս արքայից արքային առջեւ ամբաստանելով: Հայ նախարարներու անխոհեմութեան ու դաւաճանութեան պատճառով ջնջուեցաւ հայ Արշակունիներու քաղաքութիւնը եւ մեր երկիրը ինկաւ պարսկական ժամը լուծին տակ:

2) Ուեկ ժողովուրդ էր իր ներքին խնդիրներն ու վեհերը կարգադրելու համար օտարներուն դիմէ, միշտ կը տուժէ:

3) Մենք հայերս պէտք է դառնանք անցեալէն եւ նման պարագաներուն յիշենք Ս. Սահակ Հայրապետին իմաստուն խօսքը որ ըստ անմիտ նախարարներուն, «Բաւ լիցի ինձ, իմ հիւանդ ոչխարս առողջ գազանի հետ փոխել, որուն առողջութիւնն իսկ մեզի համար պատուիս է»:

4) Իմաստուն Հայրապետներուն խօսքը պէտք է մտիկ ընել ամէն ատեն:

Հ Ա Ր Ց Ո Ւ Մ Ն Ե Ր

- 1) Ո՞վ յաջորդեց Վոսաճապուհ թագաւորին:
- 2) Հայ նախարարները ինչո՞ւ համար վահճնկէց ընել ուղեցին Արտաշէս թագաւորը:
- 3) Նախարարները իրենց այս դիտաւորութիւնը առաջին անգամ որո՞ւ յայտնեցին:
- 4) Ս. Սահակ ի՞նչ ըստ հայ նախարարներուն:
- 5) Հայ նախարարները մտիկ ըրի՞ն Ս. Սահակին յորդորները:
- 6) Պարսից արքայից արքան հայ նախարարներուն ամբաստանութիւնը մտիկ ընելէ ետք ի՞նչ ըրաւ:
- 7) Արշակունեաց թագաւորութեան անկումէն վերջ ի՞նչ վիճակի մատնուեցաւ Հայաստանը:
- 8) Նախարարները իրենց սխալին վրայ անդրադառնալով որո՞ւ քով դացին եւ ի՞նչ ըրին:
- 9) Ս. Սահակ նախարարներուն զոջումը տեսնելով ի՞նչ ըրաւ:
- 10) Ս. Սահակի մահէն ետք ո՞վ ստանձնեց կաթողիկոսական գործերը:
- 11) Ս. Սահակի մահէն քանի՞ ամիս ետք վախճանեցաւ Ս. Մեսրոպ Մաշտոց:

ԺԲ. ԴԱՍ

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՍԸ

.....

Սուրբ Մեսրոպի մահէն վերջ, Կաթողիկոսական տեղապահութիւնը վարեց Յովսէփ Հողոցմեցի եպիսկոպոսը եւ ժամանակ մը վերջ դարձաւ Կաթողիկոս: Յովսէփ Հողոցմեցի Հայրապետը աշակերտած էր Ս. Մեսրոպին եւ կը փայլէր քրիստոնէական առաքինութեամբ:

Անոր օրով պարսից Յազկերտ Բ. թագաւորը հրաման արձակեց իր տէրութեան սահմաններուն մէջ ապրող բոլոր քրիստոնէաներուն, որ ձկեն քրիստոնէութիւնը եւ զրադաշտական կրօնը ընդունելով պաշտեն արեւն ու կրակը:

Յազկերտին հրովարտակը երբ Հայաստան հասաւ, Յովսէփ Կաթողիկոս ժողով մը գումարեց Արտաշատի մէջ, որուն մասնակցեցան Հայոց նախարարներն ու բարձրաստիճան եկեղեցականները: Ժողովականները ուխտեցին ամուր մնալ քրիստոնէական Սուրբ Հաւատքին վրայ, ու մերժողական նամակ մը խմբադրելով զրկեցին Յազկերտ թագաւորին ոչուն մէջ կը բացատրէին քրիստոնէական կրօնքի ճշմարտութիւնը եւ ի միջի այլոց կ'ըսէին, «Այս հաւատքն ոչ ոք կրնայ մեզ դատել, ո՛չ սուրբ, ո՛չ հուր, ո՛չ ջուրը եւ ո՛չ ալ որեւէ այլ դառն հարուած... Եւստով ըրէ ինչ որ կ'ուզես: Քեզմէ տանջանք, մեզմէ համբերութիւն. քու սուրբ եւ մեր պարանոցները»:

Յազկերտ Հայոց նամակը կարդալով դայրացաւ եւ հրամայեց Հայ նախարարներուն Տիզրոն՝ իր առջեւ ներկայանալ:

Երբ Հայ նախարարները Յազկերտին ներկայացան, ան հրամայեց անոնց ուրանալ քրիստոնէութիւնը եւ ընդունիլ կրակապաշտութիւնը. հակառակ պարապային սպառնաց բանտարկել զիրենք եւ Հայաստանը քարուքանդ ընել:

Հայ նախարարները ահուզողի մատնուեցան, քանի որ Հայրենիքէն հեռու ինկած էին Յազկերտի ծուղակին մէջ: Ուստի որոշեցին առ երես ուրանալ քրիստոնէութիւնը եւ Յազկերտի սիրտը առնելով վերադառնալ Հայաստան. իսկ անկէ ետք պարզել ապստամբ



Քաջն վարդան Մամիկոնեան

բուժեան դրօշը: Վարդան Մամիկոնեան իշխանը ընդդիմացաւ նոյն-
իսկ կեղծ ուրացութեան, նման արարք մը Ս. Աւետարանի խօսքերուն
հակառակ գտնելով. բայց միւս նախարարներու թախանձանքին վրայ
ինքն ալ համակերպեցաւ:

Յազկերտ հայ նախարարներուն ուրացութիւնը տեսնելով ու-
րախացաւ եւ մեծ պատիւներով դանոնք Հայաստան ճամբեց: Անոնց
հետ զրկեց 700 մոզեր՝ մոզպետի մը դիտաւորութեամբ, որպէսզի
անոնք Հայաստանի եկեղեցիները քանդելով ատրուչաններ կանգնէին:

Նախարարներու ուրացութեան լուրը երբ Հայաստան հասաւ,
մեծ յուզումի մատնուեցաւ հայ ժողովուրդը ու որոշեց ընդդիմանալ
ուրացող նախարարներուն եւ մոզերուն եւ թոյլ չտալ անոնց սր կա-

րենան պղծել եկեղեցիները եւ խախտել հայոց քրիստոնէական Սուրբ
հաւատքը:

Պարսիկ մոզերն ու զինուորները հասած էին Հայաստանի սահ-
մանազուրկ գտնուող Անդզ գիւղը: Կիրակի օր մը մոզպետը ուղեց
իր մոզերովը եկեղեցի մանկ եւ խաչը վար, առնելով անոր տեղ
ատրուչան տեղաւորել:

Այդ օր Անդզ գիւղին մէջ կը գտնուէր քաջ եկեղեցական մը՝
յանձին Ղեւոնդ Երէցի, որ իր հողեչունչ քարոզովը օտքի հանեց հայ
գիւղացիները, որոնք յորձակեցան մոզերուն վրայ ու զանոնք եկեղե-
ցիէն դուրս վճռեցին. իսկ մոզպետին ալ գլուխը սլառուեցին:

Այս դէպքին վրայ մոզպետը յուսահատեցաւ եւ որոշեց Յազ-
կերտին գրել թէ անկարելի է հայերը կրակապաշտ դարձնել: Սա-
կայն Հայաստանի մարդպան՝ Վասակ Սիւնի իշխանը հանդարտեցուց
մոզպետը եւ թելադրեց համբերել, Յազկերտին հրամանը ի գլուխ
հանելու համար:

Հայ նախարարները Հայաստան հասնելէ ետք յայտնեցին իրենց
ուրացումին կեղծ ըլլալը: Սակայն Վասակ Սիւնի իշխանը երկդիմի
քաղաքակսնութիւն մը կը վարէր: Մերթ պարսիկներու ի նպաստ
գործեր կը տեսնէր եւ մերթ կը ջանար ինքզինքը Ս. Աւետարանին
հաւատարիմ ցուցնել յայտ հայ ժողովուրդին:

Հայ նախարարներ Վասակ Սիւնիէն դադանի ժողով գումա-
րեցին Ծահապիվանի մէջ եւ ուխտեցին հաւատարիմ մնալ Աստուծոյ
եւ իրենց արեան գնով պաշտպանել Սուրբ Եկեղեցին:

Ծահապիվանի ժողովէն ետք սկսաւ Հայոց ապստամբութիւնը:
Մինչ այդ պարսիկ մոզեր կարգ մը վայրերու մէջ Վասակի օժանդա-
կութեամբ ատրուչաններ կանգնած էին եւ կը մղէին ժողովուրդը
կրակը պաշտելու: Ուխտապահ նախարարները յորձակեցան մոզե-
րուն վրայ, ցրուեցին զանոնք ու կործանեցին բոլոր ատրուչանները:
Պարսիկ զինուորներն ու մոզերը փախան Հայաստանէն:

Այս ապստամբութեան զլուին անցած էր Հայաստանի սպարա-
պետ Վարդան Մամիկոնեան իշխանը:

Յազկերտ հայոց ապստամբութեան լուրը առնելով իր Մուշկան
Նիսաւրուրտ զօրավարին արամադրութեան տակ զբաւ երկու հա-
րէր հազարնոց բանակ մը եւ փիլիբով միատեղ զրկեց դայն Հայաս-
տան, որպէսզի ան ճգմէր ապստամբութիւնը եւ հայերը բռնի կրա-
կապաշտ դարձնէր:

Վարդան Մամիկոնեան ուխտապահ նախարարներուն հետ միա-
սին իր շուրջը հաւաքեց 66.000 զինուորներ եւ ճամբայ ելաւ թշնամին



Ղեւոնդ Երէց

գլխավորելու: Դժբախտարար Վասակ Սիւնի իշխանը ուրիշ ուխտա-
դրուժ նախարարներ եւս իր կողմը շահելով մէջտեղ բերած էր վաթ-
սուն հազարնոց բանակ մը եւ անցած էր պարսիկներու կողմը՝ դա-
ւաճանելով իր ազգին եւ կրօնքին դէմ:

Քաջն Վարդանի բանակը թշնամիին դէմ յանդիման եկաւ
Աւարայրի դաշտին վրայ: Երկու բանակները իրարմէ կը գատէր
Տղմուտ գետը:

Ճակատամարտի նախորդ իրիկունը Քաջն Վարդան եւ Ղեւոնդ
Երէց հոգեւունջ ձառեր խօսեցան ու քաջալերեցին հայ զօրքը: Ապա
մատուցուեցաւ Ս. Պատարագ եւ բոլոր զինուորները հաղորդուեցան:

Առաւօտուն երկու բանակները բուռն կերպով յարձակեցան ի-
րարու վրայ: Հայոց բանակը Տղմուտ գետը անցնելով բաւական յաղ-

թանակներ արձանադրեց թշնամիին վրայ, սակայն երեկոյեան դէմ
պարսիկները փրկելով շրջապատեցին Վարդանն ու իր ընկերները եւ
նետերու տարափին տակ առին զանոնք: Այս ահաւոր կռիւի ընթաց-
քին հերոսաբար ինկաւ Քաջն Վարդան իր ընկերներով:

Հայ բանակը իր սպարապետի մահէն ետք սկսաւ նահանջել եւ
օրը իրիկունը ըլլալով ճակատամարտը վերջ գտաւ: Վարդանի հետ
նահատակուեցան ութ հայ նախարարներ եւս:

Այս մեծ ճակատամարտը տեղի ունեցաւ 451 Մայիս 26-ին,
Աւարայրի դաշտին վրայ, Տղմուտ գետին եզերքը:

Նահանջող հայ նախարարներէն ու զինուորներէն շատեր քաշ-
ուեցան Հայաստանի անառիկ լեռները եւ մերթ ընդ մերթ շարունա-
կեցին կռիւը:

Այս պատերազմին 1036 հայեր նահատակուեցան Վասն Յիսու-
սի եւ Վասն Հայրենեաց. իսկ պարսից զօրքին կորուստը եղաւ 3544
հոգի:

Յաղկերտ դժգոհ մնաց Աւարայրի ճակատամարտի արդիւնքէն
եւ նաեւ հետագային Հայաստանի մէջ տիրող կայութենէն որ վնա-
սակար եղաւ պարսից տէրութեան համար:

Պարսիկները թէեւ ընկճեցին հայոց ապստամբութիւնը եւ գր-
բաւեցին ամբողջ Հայաստանը, սակայն չլրցան կրակապաշտ դարձ-
նել հայութիւնը: Անոնց հարածանքներն ու կատարած բռնութիւննե-
րը պատճառ դարձան որ հայերը աւելի կառչին իրենց Սուրբ հաւատ-
քին: Պարսիկները կորսնցուցին Հայաստանի ժողովուրդին բարեկա-
մութիւնն ու վստահութիւնը եւ չլրցան հասնիլ իրենց նպատակին:

Յաղկերտ Հայաստանի մէջ պատահած ճախողութիւններուն
համար պատասխանատու բռնեց Վասակը եւ զայն Տիգրոն կանչելով
դատեց եւ ապա բանտարկեց: Վասակ բանտին մէջ որդնոտեցաւ ու
չարաչար մահով մը մեռաւ՝ առանց խոստովանութեան եւ աղաչխա-
րութեան:

Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին ամէն տարի
Փետրուար ամսուան մէջ մեծ հանդիսութեամբ կը լսուէ Սրբոց Վար-
դանանց 1036 վկաներուն յիշատակը:

Ե Զ Ր Ա Կ Ա Յ Ո Ի Թ Ի Ի Ն

1) Քաջն Վարդան եւ իր ընկերները պատերազմի դաշտին վրայ
նահատակուեցան, որպէսզի կանգուճ մնայ Հայաստանեայց Եկեղեցին
եւ գալիք սերունդները իսկական քրիստոնեաներ ըլլան:

2) Աւարայրի նակատամարտին թէեւ հայերը փիզիքապէս պարտուեցան, սակայն բարոյապէս յաղթեցին, քանի որ պարսիկները չկրցան իրենց գէնէֆին զօրութեամբը կրակապաշտ դարձնել հայերը: Այնուհետեւ հայերը աւելի զօրացան իրենց քրիստոնէական հաւատփին մէջ:

3) Վարդանանց մարտնչումը ներշնչումի ազդիւր մը ըլլալու է իւրաքանչիւր հայու համար: Մեր պարտականութիւնն է հետեւիլ անոնց օրինակիմ՝ հաւատարիմ մնալով մեր սուրբ կրօնքին:

4) Ով որ ուրանայ իր հաւատքը, Վասակի նման կը կորսնցնէ իր հոգին եւ կը դատապարտուի դժոխքի յաւիտեանական տանջանքին:

Հ Ա Ր Յ Ո Ւ Մ Ն Ե Ր

- 1) Յազկերտ ի՞նչ հրամայեց իր տէրութեան սահմաններուն մէջ գոնուող քրիստոնեաներուն:
- 2) Հայոց Յովսէփ Կաթողիկոսը Յազկերտին հրովարտակը տանելէ ետք ի՞նչ ըրաւ:
- 3) Հայերը ի՞նչ պատասխանեցին Յազկերտին:
- 4) Յազկերտ հայ նախարարները ո՞ւր կանչեց:
- 5) Յազկերտ ի՞նչ առաջարկեց հայ նախարարներուն:
- 6) Հայ նախարարները ի՞նչ ըրին:
- 7) Անզղ զիւզին մէջ ի՞նչ պատահեցաւ:
- 8) Յազկերտ հայոց սպստամբութեան լուրը աններով ի՞նչ ըրաւ:
- 9) Ո՞վ էր հայոց սպարապետը:
- 10) Քաջն Վարդան քանի՞ հազար զօրք ունէր:
- 11) Պարսիկները քանի՞ հազար զօրք ունէին:
- 12) Ո՞ր թուականին եւ ո՞ր դաշտին մէջ տեղի ունեցաւ Վարդանանց պատերազմը:
- 13) Ո՞ր նախարարը ուրացաւ իր կրօնքը եւ դաւաճանեց:
- 14) Քանի՞ հողի նահատակուեցան Վարդանանց պատերազմի ընթացքին:
- 15) Պարսիկները կրցա՞ն կրակապաշտ դարձնել հայերը:
- 16) Ո՞ւր եւ ինչպէ՞ս մեռաւ Վասակ Սիւնի:

ԺԳ. ԴԱՍ

ԴԵՆՊԵՏ ԻՇԽԱՆԻՆ ԴԱՐՁԸ

.....

Աւարայրի դիւցազնամարտէն վերջ հայոց աշխարհը անցուցած հանուգողի շրջան մը: Պարսիկները Վասակի առաջնորդութեամբ պաշարեցին հայոց ամրութիւնները: Ուխտապահ նախարարները ամենուրեք կատաղի դիմադրութիւն մը ցոյց տուին. իսկ կարգ մը վայրերու մէջ ալ հերոսական կռիւներէ վերջ շատեր նահատակուեցան: Պարսից զօրապետը հայ եկեղեցական դասի առաջնորդները շղթայակապ զրկեց Պարսկաստան: Յազկերտ զանոնք հայ նախարարներու հետ բանտարկել տուաւ Նիւշապուհ քաղաքի դղեակին մէջ եւ անոնց հսկողութիւնը յանձնեց Ապար աշխարհի դեմպետ(մոպետ) իշխանին: Վերջինը մեծ յարգանք ու պատիւ կը վայելէր ամբողջ Պարսկաստանի մէջ որպէս դիտուն անձ: Ան կարգացած եւ իւրացուցած էր զրադաշտական կրօնի բոլոր պիւրքերը: Մովսէս էր իր կրօնքին մէջ, եւ առ այդ՝ սուկալի հակառակորդ մը քրիստոնեաներուն, որով իրեն յանձնուած կալանաւորները մոլորածներ համարելով, գոնոնք չարչարելը իրեն համար պարտականութիւն կը նկատէր: Ուստի Յովսէփ Կաթողիկոսը, Ղեւոնդ Երէցն ու անոնց ընկերները, բոլորը ութ հարի, դատելով նախարարներէն, դրաւ խոնաւ սենեակի մը մէջ ու պատուիրեց բանտապահներուն որ միայն դարեհաց եւ ջուր տան անոնց:

Երանելի սուրբերը մեծ համբերութեամբ կրեցին բոլոր չարչարանքները: Անոնք շարունակ սնոգմոսներ երգելով ու աղօթելով կը կատարէին իրենց առօրեայ պաշտամունքը:

Այս ձեւով անցան քառասուն օրեր: Մոպետ իշխանը՝ հակառակ իր ակնկալութեան՝ թուլութեան ոչ մէկ խօսք լսեց սուրբերէն, որով բանտապահներու հաւատարմութեան վրայ կասկածելով՝ կնքեց բանտին դռները եւ միայն իր վստահելի մարդոց ձեռքով զրկեց անոնց պարէնը: Բայց դարձեալ ի զուր անցան իր փորձերը:

Բանտարկեալներու Փիղիքական առողջութիւնը գործացուց

բանտապահները, որոնք այս սրբազան իմացուցին զենպետին, եւ միանգամայն շեշտեցին թէ առանց զերբնական ոյժի մը հովանաւորութեան կարելի չէր երկար ասեն զիմանալ այլ մահաբոյր վայրին մէջ, քանի որ անոնցմէ առաջ հոն նետուողները հազիւ ամիս մը կըլըցած էին ապրիլ:

Գիշեր մը, ուշ տուն, մոզպետը առանձին զնաց բանտին տանիքը ու սկսաւ զաղտաղողի զխտել ներսը: Սուրբերը նոր վերջացուցած էին իրենց պաշտամունքը ու կը քնանային: Յանկարծ մոզպետին առջեւ պարզուեցաւ հրաշալի տեսիլք մը: Իւրաքանչիւր բանտարկեալ կանթիղի մը նման կը բացվառէր: Գենպետը նախ վարհուրեցաւ. բայց յետոյ տարակուսեցաւ, թէ արդեօք իրականութիւն էր տեսածը: Ու մինչ մտածումներու մէջ կը թաւալէր, սուրբերը իրենց պառկած տեղերէն վեր ելլելով նորէն պաշտամունքի սկսան: Մոզպետը այս տեսիլքէն շատ աղբուելով, ամբողջ մարմնովը դողաց եւ այդ վիճակին մէջ մնաց մինչեւ արշալոյս: Յաջորդ օր արդէն հիւանդի մը երեւոյթն ստացած էր: Ու թէեւ ոեւէ մէկուն բան մը չխօսեցաւ, սակայն իր մտքէն չէր կրնար հեռացնել նախորդ գիշերուան տեսիլքը: Իր մօտ կանչեց պահապանները եւ պատուիրեց անոնց որ աւելի յարմար վայր մը փոխադրեն բանտարկեալները ու քակեն անոնց կպանքները:

Բանտապահներէն մին երբ մոզպետին հրամանը սուրբերուն հաղորդեց, մեծ ընդունելութիւն մը ակնկալեց անոնցմէ: Սակայն Յովսէփ Կաթողիկոս յայտնեց անոր որ իրենք դժ ու երջանիկ են Յիսուսի անուան համար իրենց կրած շարժարանքներէն: Նոյն ատեն խօսեցաւ անոր Քրիստոսի խաչելութեան, փառաւոր յարութեան եւ սուրբերու խոստացուած յաւիտենական երջանկութեան մասին:

Բանտապահը իր լսած խօսքերը նոյնութեամբ պատմեց մոզպետին, որ շատ յուզուեցաւ եւ օրերով քունը կորսնցուց: Գիշեր մը, նորէն միայնակ բանտ գնաց ու զաղտաղողի զխտեց ներսը: Նախորդ տեսիլքը դարձեալ պարզուեցաւ իր աչքերուն առջեւ: Սուրբերը քունի մէջ էին: Մեզմ ձայնով մը կանչեց Յովսէփ Կաթողիկոսը ու ներս մտաւ: Կալանաւոր եկեղեցականները արթնցան, ու այդ ժամուն մոզպետը իրենց մօտ տեսնելով՝ խիստ զարմացան:

Մոզպետը պատմեց իր երկու տեսիլքները ու սկսաւ արտասուել: Ղեւոնդ երէց անոր ընկճուած երեւոյթը տեսնելով ըսաւ.

— Մոզպետ, այսօր քու խաւարած միտքդ ու հոգեւոյդ կուրացած աչքերը բացուեցան եւ տեսար Աստուծոյ շնորհքին անչէջ լոյսը: Աճապարէ՛, մի՛ ծուլանար, յանձնէ ինքզինքդ Քրիստոսի:

Մոզպետը սկսաւ արտասուախառն աղօթել ու իր մեղքերուն համար թողութիւն խնդրել Աստուծմէ:

Ութ եկեղեցականները իրենց ձեռքերը վերցնելով փառք տուին Աստուծոյ եւ ուրախ սրտով քուն մտան: Սակայն մոզպետը ոտքի վրայ անբուն մնաց մինչեւ առաւօտ ու ձեռքերը բազկատարած եւ աչքերը դէպի վեր սեւեռած, շարունակ աղօթեց: Ու մինչ անիկա աղօթքի մէջ էր, յանկարծ իրեն երեւցաւ լուսեղէն սանդուխ մը, որուն ծայրը երկինք կը հասնէր: Փայլուն հանդերձներով ու հրեշտականման զէմքերով գունդ գունդ զօրքեր անկէ վեր կը բարձրանային: Մոզպետը զօրքերուն մէջէն ճանչցաւ Աւարայրի դաշտին վրայ նահատակուած Քաջ Վարդանը, Արտակ ու Սորէն Սորխոտունի իշխանները, որոնք իրենց ձեռքերուն մէջ ինք պսակներ բռնած իրարու հետ կը խօսէին ըսելով, «Ահա հասաւ ժամանակը, որ ասոնք եւս խառնուին մեր գունդին, որովհետեւ մենք ալ անոնց կը սպասէինք եւ անոնց համար բերած ենք այս նուէրները: Իսկ անոր որ չէինք սպասեր, եկաւ եւ խառնուեցաւ մեր մէջ ու եղաւ Քրիստոսի զինուորներէն մին»:

Երբ այս տեսիլքը երեք անգամ կրկնուեցաւ, մոզպետը արթնացուց քնացող սուրբերը եւ անոնց պատմեց իր տեսած բաները: Սուրբ եկեղեցականները մոզպետին տեսիլքը իմանալով ոտքի ելան ու արտասանեցին «Ով Տէր, մեր Տէրը, ի՛նչ փառաւոր է՝ քու անունդ բոլոր երկրի վրայ...» Սազմօրը եւ ապա յորդ արցունք թափելով գարձեալ աղօթեցին:

Առաւօտուն մոզպետը իր ապարանքը երթալով ճոխ սեղան մը պատրաստել տուաւ: Բանտէն դուրս հանեց ութ եկեղեցականները. ինչպէս նաեւ բերել տուաւ բանտարկուած նախարարները եւ բոլորին ոտքերն ու վէրքերը լուաց: Ապա մկրտուելով ընդունեցաւ սուրբ հաղորդութիւն: Բոլոր ներկաները գոհութեամբ կերան իրենց առջեւ դրուած սեղանէն ու Աստուծոյ փառք Եսայով մեկնեցան իրենց խօսքերը: Իսկ նորադարձ զենպետը խնդրեց սուրբերէն որ աղօթին իրեն համար, որպէսզի ինք եւս արժանի ըլլայ երկինքի արքայութեան:

Երբ սրահապանները զենպետ իշխանին քրիստոնեայ դառնալն իմացան, շուտով իմաց տուին Յազկերտի հաւատարիմ զորավարներէն՝ Գենշապուհի, որ անմիջապէս զենպետին քով գնաց եւ եղածը ստուգելէ ետք ջանաց զայն ետ դարձնել կրակապաշտութեան: Սակայն մոզպետը անզրդուելի մնաց իր նոր հաւատքին վրայ: Գենշապուհ չհամարձակեցաւ ձեռք բարձրացնել անոր, այլ անձամբ շտապեց Յազկերտի մօտ ու պատմեց եղելութիւնը: Արքայից արքան

մուգպետին քրիստոնեայ զառնալն իմանալով զգաց զբարոյաշատական կրօնքին տկարութիւնը եւ քրիստոնէութեան յաղթանակը, որուն առջեւ ինք անցոր կը մնար: Ու պահ մը մտածեց՝ թէ ինչ կրնար ընել: Եթէ մուգպետը հրապարակաւ շարչարել տար, արար աշխարհ պիտի իմանար եղելութիւնը եւ հետեւանքը՝ աղետալի պիտի դառնար զբարոյաշատականութեան համար: Ուստի խորհուրդ տուաւ: Դեհշապուհին որ զբարոյաշատութեամբ յոնցանքներ բեռցնէ մուգպետին՝ վրայ եւ ծածկարար աքտորէ վայն հեռաւոր վայր մը՝ կամ վերապի մը մէջ նետէ:

Դեհշապուհ քաղաքէն դուրս հանեց նախկին գենպետը եւ առաջարկեց անոր ուրանալ քրիստոնէութիւնը, փոխարէնը խոստացաւ թագաւորին կողմէ տալ մեծարանքներ ու պատիւներ: Բայց անիկա հաստատ մնաց իր հաւատքին՝ վրայ եւ իր ծեր տարիքին մէջ բռնեց աքտորի ճամբան: Ի վերջոյ վերապի մը մէջ անտանելի տանջանքներով արժանացաւ մարտիրոսութեան պատկին:

Դեհշապուհ Յաղկերափ հրամանով բանտէն դուրս հանեց հայ եկեղեցականները եւ զոնոնք ամալի տեղ մը տանելով անլուր շարձարանքներու ենթարկելի վերջ սպաննել տուաւ: Նահատակուող եկեղեցականներուն խումբը Ղեւոնդ Երէցի անունովը կոչուեցաւ Ղեւոնդեանք:

Հայաստանեայց եկեղեցին անոնց յիշատակը կը սօնէ վարդանանց սօնը նախորդող Երեքշաբթի օրը:

Ե Ջ Ր Ա Կ Ա Յ Ո Ի Թ Ի Ի Ն

1) Ղեւոնդեանք արիաբար կրեցին անլուր շարձարանքներ եւ ի վերջոյ իրենց արիւնը քափեցին Յիսուս Քրիստոսի անունն ու փառքին համար: Անոնք իրենց համբերութեամբն ու ազօրքովը պատնառ դարձան դեմպետ իշխանին դարձին:

2) Մենք օրինակ առնելու ենք Սրբոց Ղեւոնդեանց արիութենէն ու համբերութենէն:

3) Քրիստոնեայ հաւատացեալներուն առջեւ պէս-պէս դժուարութիւններ ու նեղութիւններ կրնան ցցուիլ:

4) Նման պարագաներուն պէտք չէ ընկրկիմք, այլ՝ ազօրքով խնդրելու ենք Աստուծոյ զօրութիւնը գանոնք դիմակալելու համար: ու նաեւ ազօրելու ենք մեզ շարչարող, ծաղրող ու նախատող անձերու փրկութեան համար, որպէսզի անոնց հոգիներուն աչքերը բացուին ու նշմարտութիւնը տեսնելով դարձի գան:

Հ Ա Ր Յ Ո Ի Մ Ն Ե Ր

- 1) Ղեւոնդ Երէցն ու իր ընկերները ո՞ւր տարուեցան:
- 2) Հայ եկեղեցականներուն հսկողութիւնը որո՞ւ յանձնուեցաւ:
- 3) Դեմպետ իշխանը սոսաջին անգամ ինչպիսի՞ վերարեբուսցոյց տուաւ հայ եկեղեցականներուն:
- 4) Գիշեր մը գենպետը բանտէն ներս նայելով ի՞նչ տեսաւ:
- 5) Դեմպետը երկրորդ անգամ նոյն տեսիլքը տեսնելէ ետք ի՞նչ ըրաւ:
- 6) Մուգպետը բանտէն ներս մտնելով ի՞նչ ըսաւ եկեղեցականներուն:
- 7) Մուգպետը մինչեւ առաւօտ ի՞նչ ըրաւ բանտին մէջ:
- 8) Աղօթելու ատեն որո՞նք կրեցան մուգպետին:
- 9) Առաւօտուն մուգպետը ո՞ւր տարաւ բանտարկեալ եկեղեցականներն ու նախարարները:
- 10) Մուգպետը իր տան մէջ ի՞նչ պատրաստեց իր հիւրերուն համար:
- 11) Դեհշապուհ մուգպետին քրիստոնեայ զառնալն իմանալով ի՞նչ ըրաւ:
- 12) Դեհշապուհ ի՞նչ ըրաւ բանտարկեալ եկեղեցականները:
- 13) Նահատակուող եկեղեցականներու այս խումբը ի՞նչ կոչուեցաւ:



ԺԴ. ԴԱՍ

ՍՐԲՈՒՅԻ ՇՈՒՇԱՆ ՎԱՐԴԵՆԻ

.....

Քաջն Վարդան Մամիկոնեան ունեցած էր երկու դուստր՝ Վարդենի եւ Վարդանոյշ: Երկու քոյրերը ծնած էին երջանիկ օրերու մէջ, երբ իրենց հայրը մեծ պատիւներու կ'արժանանար յունաց եւ պարսկց սրբունիքներէն: Անոնք իրենց ընտանեկան յարկին տակ ստացան քրիստոնէական սուրբ կրթութիւն մը:

Վարդենի որ կը կոչուէր նաեւ Շուշան կամ Շուշանիկ, իր մարմնական գեղեցկութեան հետ միասին ունէր առաքինի նկարագիր մը: Ան կը փայլէր ազնուութեամբ, արիութեամբ եւ սրբութեամբ:

Վարդան Մամիկոնեան Շուշանիկը հարսնութեան տուաւ Գուդարաց նահանգի Վրաց իշխան Աշուշայի որդւոյն՝ Վաղդէնի: Շուշանիկ ունեցաւ երեք մանչ եւ մէկ աղջիկ: Սակայն Շուշանիկին համար բարեբախտութիւն մը չեղաւ Վաղդէնի նման իշխանի մը հարսն ըլլալը: Վաղդէն անբարոյ ու չարասիրտ էր. բայց իր վատ հոգիին ամբողջ սեւութիւնը չէր կրնար երեւան հանել որչափ ատեն որ իր հայրն ու մայրը ողջ էին տակաւին:

Սաւրայրի ճակատամարտին մէջ Քաջն Վարդանի մահը եւ իրենց ազգական նախարարներուն դէպի Պարսկաստան գերեզմարուիլը սուգի մէջ ձգած էին Շուշանիկը. սակայն ան իր մխիթարութիւնը կը գտնէր աղօթելով եւ այլոց թշուառութիւններն ու ցաւերը ամօքելով:

Իր հօր մահէն վերջ Վաղդէն անուանուեցաւ Վրաց Բղեշխ ու փոխադրուեցաւ Ուփրեթ քաղաքը: Վաղդէն իշխանութեան գլուխ անցնելով դարձաւ աւելի լկտի ու անառակ՝ միշտ խոցոտելով փափկասուն Շուշանիկին ազնիւ սիրտը, որ մեծ համբերութեամբ կը տուար այդ բոլորին:

Վաղդէն իր ցոփ կեանքին մէջ աւելի աղատ ըլլալու եւ իր աղտոտ նպատակներուն հասնելու համար որոշեց Պարսկաստան երթալ եւ հոն ընդունիլ զրադաշտական պիղծ կրօնքը:

Վաղդէն Պարսկաստանի մէջ քրիստոնէութիւնը ուրանալով ար-



Սրբուհի Շուշան Վարդենի

ժանացաւ մեծ պատիւներու եւ Պերոյ արքայի զոքանչն ալ իրեն կին առնելով ճամբայ ելաւ դէպի իր երկիրը:

Շուշանիկ այս լուրը առնելով ցնցուեցաւ եւ ըսաւ. «Աւա՛ղ, Վաղդէն ողջ է մարմինով, բայց հոգիով մեռած է, որովհետեւ ուրացաւ քրիստոնէութիւնը... եւ դաշինք գրաւ սատանայի հետ»: Պահ մը ուշաթափ եւ անշարժ մնալէ հտք, յանկարծ սթափեցաւ ու ոտքի ելլելով եկեղեցի փութաց՝ իր զաւակները հետն առած: Հոն, Աստուծոյ սուրբ սեղանին առջեւ գետին ինկաւ եւ իր սրտին ցաւերը բացաւ: Լացաւ ու աղօթեց մինչեւ երեկոյ: Իր սրտին խորերէն կ'աղերսէր առ Աստուած՝ ըսելով, «Ես պատրաստ եմ կապանքի, բանափ եւ կտտանքի՝ պահելու համար սեանդն իմ հայրերուս՝ Հայոց Լուսաւորիչներուն»: Իր մեծապոյն մտահոգութիւնը զուակններն էին, որոնք եւս

պիտի բռնադատուէին ուրանալու քրիստոնէութիւնը իրենց հօր կողմէ :

Շուշանիկ գիշերը պայտա չզնաց, այլ իր գաւակներուն հետ առանձնացաւ եկեղեցիին մօտ դռնուող ծանօթ անակ մը եւ ամբողջ գիշերը լուսուց աղօթքով, լալով ու ողբալով, առանց բան մը ճաշակելու : Իր շուրջը հաւաքուեցան իր մերձաւոր աղբակահները, սրտակիցներն ու հաւատարիմ տաներէցը եւ ջանացին մխիթարել զինք : Սակայն ահաւոր էր իր վիշտը : Անոնց ստիպումին վրայ քիչ մը բան կերաւ եւ դարձեալ սկսաւ աղօթել ու սուրբ-գրական ընթերցումներ կատարել : Երկրորդ գիշերն ալ անցուց նախորդին նման :

Վաղդէն Պարսկաստանէ վերադարձին, գանազան մարդոց հետ սպանաւորիքներ կը տեղացնէր Շուշանիկին՝ զայն «զգաստացնելու» յոյսով : Եւ օրին մէկը իր մօտը կանչեց արքունի Յովհան Եպիսկոպոսը եւ իր եղբոր՝ Ջոշիկ իշխանին հետ զայն զրկեց Շուշանիկին մօտ եւ հրամայեց որ ան վերադառնար պալատ, ուրանար իր հաւատքը եւ մասնակցէր այն մեծաշուք խրատմանքին, որուն անշուշտ ներկայ պիտի ըլլար նաեւ Պերող արքային գոքանչը :

Եպիսկոպոսն ու իշխանը երբ Շուշանիկի անակէն ներս մտան, անոր վշտահար կերպարանքն ու արգահատելի վիճակը տեսնելով նախ չկրցան բան մը խօսիլ : կարծես բերանին կապուեցաւ : Ի վերջոյ Եպիսկոպոսը կմկմալով յայտնեց Վաղդէնին զրկած հրամանն ու հրաւէրը դէպի պալատ :

Շուշանիկ անմիջապէս յիշեց Ս. Պօղոս առաքեալի խօսքը որ կ'ըսէր, «Ի՞նչ հաղորդակցութիւն կայ լոյսի եւ խաւարի միջեւ» : Ապա սաստեց երկուքն ալ ե բացէ ի բաց մերժեց այդպիսի նենգաւոր հրաւէր կամ հրաման, ու արիարար ըսաւ. Եպիսկոպոսին .

— Դո՞ւն զայդ կը հրամայես : Միտքանի՞ր ամբարիշտ ու աստուածուորաց մարդուն հետ : Եւ դու թելադիր ու մտադո՞ղ այսպիսի արարքի մը : Աւա՛ղ թշուառութեանս որ բարի խրատատու մըն ալ չունեցայ :

Եպիսկոպոսը իրենց հանդէպ Շուշանիկին մեղադրանքը իրաւացի գտնելով հանդերձ ջանաց համոզել զայն որ պալատ վերադառնար ոչ թէ միայն իր անձին՝ այլ նաեւ այդ շրջանի բոլոր քրիստոնէներու օգուտին համար :

— Դուն միայն կրնաս կակուղցնել մեր Բղեշխին քարացած սիրտը, ըսին Եպիսկոպոսն ու Ջոշիկ իշխանը իրենց խօսքը վերջացնելով :

— Աստուած միայն կրնայ շարժել Վաղդէնին սիրտը... Բայց եթէ իմ երթալս անհրաժեշտ կը նկատէք, ահա կ'երթամ, լոկ ստառապելու եւ շարժարուելու համար, ըսաւ Շուշանիկ :

Պալատ գառնալէ ետքն ալ Շուշանիկ երեք օր առանձնացած մնաց եւ սկիւմայ ընկերացաւ ճաշերուն՝ շուտով մեկնելու համար :

Երրորդ իրիկունը Վաղդէն սարքած էր մեծ կոշուք մը սրուն հրաւիրուած էին իշխաններ եւ երեւելի մարդիկ : Շուշանիկն ալ կանչուած էր խնջոյքին : Թէեւ ան մերժած էր հրաւէրը, սակայն Ջոշիկ իշխանի թախանձանքին վրայ, պարզ զգեստաւորուածով մը զնաց՝ առանց թագի եւ ոսկեհուր զարդերու՝ զարմացնելով բազմակահները : Ընթրիքի միջոցին բան չճաշակեց, այլ լուռ ու անշարժ դիրքով եւ անթարթ աչքերով կեցու հոն որպէս բողոքի նշան : Ուրացող Վաղդէն իր կնոջ ակնարկներուն չէր համարձակեր նայիլ : Սակայն փոխանակ զգաստանալու կը ջանար զսպել իր կատաղութիւնը :

Ընթրիքէն վերջ երբ հրաւիրեալները մեկնեցան, Վաղդէն ձեռքը լախ մը առած խոյացաւ Շուշանիկին վրայ եւ սկսաւ անխնայ հարուածել զայն : Շուշանիկի կոծն ու ողբը եւ Վաղդէնին դռում գոչումը թնդացուցին պալատը : Ջոշիկ իշխանը պատահարը իմանալով անմիջապէս վազեց. սակայն չկրցաւ զսպել զաղանին. զայրոյթը եւ ինք ալ նշաւակ եղաւ անոր հարուածներուն : Վաղդէն բոլորովին խելագարած էր կարծես եւ կը հայհոյէր ու կ'անարգէր Շուշանիկին ծնողքը, նախահայրերն ու հաւատքը, եւ նաեւ զԱստուած : Ի վերջոյ ծեծելէն ու պոռայէն ուժասպառ թող տուաւ ձեռքին լախտը ու այսպէս զարի նման գետին թաւալելով սկսաւ փրփրիլ եւ ինքզինքը ծեծել :

Հետեւեալ առաւօտ Վաղդէն դարձեալ զնաց Շուշանիկին մօտ եւ առաջարկեց անոր որ ուրանար քրիստոնէութիւնը : Շուշանիկի մերժումին վրայ հրամայեց իր պահապաններուն որ խոչըի մը մէջ բանտարկեն զայն, ու միայն գարեհաց եւ ջուր տան անոր. նայն առան պատուիրեց որ սեւէ մէկը շթողուն անոր մօտ այցելութեան :

Երբ Վաղդէն պալատէն հեռացաւ, Շուշանիկի հաւատարիմ դրաներէցը պահապաններուն թոյլտուութիւնով փութաց այցելել զայն եւ Շուշանիկը այդ վիճակին մէջ տեսնելով չկրցաւ զսպել իր արցունքը :

— Մի՛ լար, Փրկչին շնորհքը առանց ողորմութեան չի թողուր մէկը՝ որ կը յուսայ իրեն, ըսաւ Շուշանիկ քահանային եւ երկուքը դիրար մխիթարեցին փոխադարձաբար :

Այդ օրերուն Շուշանիկի գաւակներէն մէկը Կուր գետին մէջ

ի յնալով մեռաւ: Վազգէն Հեթանոսի անյուսութիւնով ողբաց իր գաւկին մահը: Եուշանիկ իր խուցին մէջ իմանալով իր հոգեհատորին մահը, թէեւ լացաւ, բայց մխիթարուեցաւ, այն յոյսով որ մանուկը ապագայ ուրացութեան վտանգէն զերծ մնալով փոխադրուած էր իր յաւիտենական հանդիստը:

Յաւակցութեան համար Վազգէնին քով սկսան դալ իշխաններ եւ երեւելի անձնաւորութիւններ: Այդ առիթով Վազգէն Եուշանիկին ներկայութիւնը անպատեհ գտնելով, զայն հեռացուց իր ապարանքէն եւ զրկեց եպիսկոպոսի վանատունը: Եուշանիկ զոհ մնաց այս կարգադրութենէն եւ այնուհետեւ ինքզինքը բոլորովին Աստուծոյ նըգադրութենէն եւ անոր տիկնութեան մնացորդ զգեստները ու շիրիկով իր վրայէն հանեց տիկնութեան մնացորդ զգեստները ու պատաստուն հազուստներ հաղնելով սկսաւ իր օրերը անցընել ազօթքով ու պահեցողութեամբ:

Եուշանիկի հրաշալի սրբութեան ու ճշմութիւններուն համար էր Վազգէնի ականջն հասնելով սկսաւ նախանձիլ ու դայրանալ: Ինք սրշափ որ ջանար զայն նուատացնել, անիկա այնչափ աւելի կը փայլէր իր առաքինութեամբ: Ուստի դարձեալ պալատ կանչեց զայն: Բայց Եուշանիկ մերժեց եւ անոր պատգամաւորներուն հետ զրկեց իր քով մնացած տիկնութեան զարդերը ու քաջարար բաւ:

— Ես պատրաստ եմ մեռնելու, քան թէ ուրանալու իմ հայրենի աւանդութիւններս:

Այս համարձակ պատասխանին վրայ Վազգէն կատղեցաւ եւ եկեղեցիէն ներս մտնելով յարձակեցաւ Եուշանիկին վրայ ու ծեծելով եւ քաշկուտելով պալատ տարաւ զայն: Ապա Ուփրեթի Բերդը զրկելով հրամայեց որ անոր ձեռքերն ու վիզը շղթայի զարնեն եւ շղթային ծայրերն ալ պատին ամրացնեն: Պատուիրեց նաեւ որ դարեղէն հացէ ու ջուրէ զատ կերակուր չտրուի:

Տարիներ ամբողջ Եուշանիկ մնաց շղթաներու տակ, գատապարտուած ըլլալով անշարժ մնալու: Հաղիւ կրնար իր ձեռքը շարժել՝ բերանը պատառ մը դարեհաց դնելու եւ կամ քիչ մը ջուր խմելու: Իր մերկ մարմինը ծածկուած էր ջուրձէ հազուստով եւ պարեգօտ մը վրայէն, իսկ միայն մորթ մը որպէս անկողին կը ծառայէր իրեն: Եուշանիկ թէեւ տանջուած ու հիւժած էր մարմինով, սակայն անասան կը մնար իր հաւատքին վրայ, հակառակ անոր որ Վազգէն չէր դադարեր զինք ուրացութեան ստիպելէ:

Բանտարկութեան վեցերորդ տարին Զոջիկ իշխանը հազիւ

կրցաւ Վազգէնէն արտօնութիւն առնել Եուշանիկի վիզէն հանել տալու համար շղթաները:

Եուշանիկի բանտարկութեան եօթներորդ տարին, Վազգէն յաջողեցաւ իր զաւակներն ալ կրակապաշտ դարձնել. իսկ Եուշանիկի մահին ալ պարտից Պերոյ արքային կը գրէր, «Ձայն պիտի տանջեմ մինչեւ ի մահ, որովհետեւ Վարդանի զուստրն է»:

Եուշանիկ իր զաւակներուն ուրացութեան լուրն առնելով կարծես շանթահարուեցաւ: Աշխարհ մթնցաւ իր աչքերուն եւ վերջապէս հիւանդացաւ սրտին ցաւէն: Անոր հիւանդութեան լուրը առնելով բանտ փութացին Վրաց Սամուէլ եպիսկոպոսապետը, արքունի Յովհան եպիսկոպոսը, Զոջիկ իշխանը, զրաներէցը եւ ուրիշ քահանաներ: Եուշանիկ բոլորին իր օրհնութիւնն ու հրաժարականը տալէ ետք Աստուծոյ ղոհութիւն մատուց իր կրած վիշտերուն եւ տանջանքներուն համար, որոնք իրեն մէյ մէկ աստիճաններ եղան սրբութեան ասպարէզին մէջ դեռ աւելի բարձրանալու: Ապա խորին յարկանքով ու երկինգածութեամբ Սուրբ Հաղորդութեան խորհուրդը ընդունելով աւանդեց իր հոգին Յիսուսի ձեռքը:

Բարեպաշտ կիներ անուշահոտ խուճկերով եւ աղնիւ կառններով պատեցին Եուշանիկի մարմինը եւ բազմաթիւ քահանաներու, եպիսկոպոսներու եւ հաւատացեալներու մեծահանգէս թափօրով մը թաղեցին. եկեղեցիին մօտ՝ այնտեղ ուսկից առաջին անգամ զինք քաշկուտելով տարած էր Վազգէն:

Սրբուհի Եուշանիկի մահէն ետք Վազգէն դաւա իր արդար պատիժը՝ սպաննուելով Վրաց Վախթանյ իշխանէն, որ պարտից դէմ ապստամբելով թաղաւոր դարձաւ եւ կրակապաշտութիւնը բնաջինջ ըրաւ իր երկրի սահմաններէն:

Ե Ձ Ր Ա Կ Ա Ց Ո Ի Թ Ի Ի Ն

- 1) Սրբուհի Եուշանիկ սառապանքներու եւ վիշտերու մէջ փայլեցաւ իր առաքինի եւ սուրբ կեանքովը:
- 2) Ան իր հաւատքը չգոհեց որեւէ բանի համար: Իր մարմինը օրէ օր հիւժեցաւ ու սկաբացաւ, սակայն անոր փոխարէն իր հոգին հանգրուան առ հանգրուան բարձրացաւ դէպի սրբութիւն, միանալու համար երանելի Սուրբերու փառանքին:

3) Շուշանիկ եւ իր նմանները իրենց երկրաւոր կեանքը գոհեցին երկինքի արքայաւթիւնը ժառանգելու համար:

Սրբուհի Շուշանիկին եւ բոլոր Սուրբերուն իզմն ու փափաքն է որ մե՞նք ալ հետեւիմք իրենց բարի օրինակին եւ ամուր բռնեմք մեր սուրբ հաւատքը. հեռու մնանք ամէն տեսակ մեղքերէ եւ ձգտիմք սրբութեան, որպէսզի օրին մէկը արժանի ըլլանք իրենց հետ միասին վայելելու երկինքի արքայաւթիւնը:

Հ Ա Ր Ց Ո Ւ Մ Ն Ե Ր

- 1) Որո՞ւ գուտարն էր Շուշանիկ:
- 2) Ո՞վ էր Շուշանիկին ամուսինը:
- 3) Վազգէն ինչպիսի՞ նկարագիր մը ունէր:
- 4) Վազգէն Պարսկաստան երթալով ի՞նչ ըրաւ:
- 5) Շուշանիկ Վազգէնի ուրացութեան լուրը առնելով ո՞ւր գնաց եւ ի՞նչ ըրաւ:
- 6) Խնջոյքէն վերջ Վազգէն ի՞նչ ըրաւ:
- 7) Շուշանիկ ինչպիսի՞ վիճակի մը մտածուած էր բանտին մէջ:
- 8) Շուշանիկ իր գաւակներուն ուրացութեան լուրը առնելէ վերջ ի՞նչ եղաւ:
- 9) Հիւանդութեան ատեն սրո՞նք այցելեցին Շուշանիկը:
- 10) Մեռնելէ առաջ Շուշանիկ ի՞նչ ըրաւ:
- 11) Ո՞ւր թաղուեցաւ Շուշանիկ:

ԺԵ. ԴԱՍ

**ԳԻՒՏ ԵՒ ՅՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ
ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐ ՈՒ ՎԱՀԱՆԵԱՆՑ
ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆԸ**

.....

461. Թուականին Հայոց Կաթողիկոսական Աթոռին վրայ նստաւ Սահակ-Մեսրոպի աշակերտներէն վաթսունամեայ Գիւտ Հայրապետը: Ան իր մաքրակենցաղ վարքով օրինակ հանդիսացաւ իր հօտին, եւ իր մտային ճոխ պաշարը ի սպաս դրաւ Հայ Եկեղեցւոյ բարեկարգութեան:

Գիւտ Հայրապետի պաշտօնավարութեան սկզբնական շրջաններուն Հայաստանի մէջ պարսկական լուծը քիչ մը թեթեցաւ. սուկայն կացութիւնը հետզհետէ վատթարացաւ. կարգ մը ուխտազրուծ Հայ նախարարներու միջամտութիւններուն պատճառով: Գիւտ Հայրապետը ուղղակի դիրք լռնեց ու յանդիմանեց ուրացողները: Գործակցեցաւ ուխտապահներուն հետ՝ քաջալերելով անոնց առաքինի պործերը:

Ուրացող նախարարներուն պարսկալուխը՝ Մախազ Գաղիշոյ քսութիւններով եւ զրպարտութիւններով լեցուն նամակ մը գրեց պարսից Պերոյ թագաւորին ու ամբաստանեց Գիւտ Կաթողիկոսը՝ որպէս դաւադիր պարսից արքունիքին:

Պերոյ այդ նամակը կարգալէ ետք Տիգրան կանչեց Հայոց Հայրապետը եւ հարցուփորձելէ ետք հասկցաւ թէ կաթողիկոսի մասին զրուած ամբաստանագիրը զրպարտութիւն մըն է: Սակայն փոխանակ զայն անպարտ արձակելու, բռնադատեց որ կրակապաշտութիւնը ընդունի:

Կորովի Հայրապետը բուն պատասխանով մը մերժեց եւ փափաք յայտնեց մարտիրոսանալու: Պերոյ արքան շատ զայրացաւ եւ պաշտօնէ դադրեցուց Կաթողիկոսը:

Գիւտ Հայրապետ ատեն մը Պարսկաստան մնալէ վերջ Հայաստան դարձաւ եւ վեց տարի պաշտօնէ զրկուած մնալէ ետք վախճանեցաւ 478 թուականին:




Վահան Մամիկոնեան

Դիւտ կաթողիկոսին յաջորդեց Յովհան Մանդակունի Հայրապետը: Անոր օրով Հայաստանը աւելի վատթար վիճակ մը ունեցաւ պարսից լուծին ծանրութեան պատճառով: Ուրացող նախարարները պարսիկ մարզպանէն քաջախրուելով՝ ամէն տեսակ քուսթիւններ կ'ընէին ուխտապահ իշխաններու եւ եկեղեցականներու դէմ: Նենգամիտները իրենց անձնական շահերուն եւ փառասիրութեանց համար ոտնակոխ կ'ընէին ազգին ու հայրենիքին պատիւը:

Ուխտապահ նախարարները Հայաստանի անտանելի վիճակին դարման մը գտնելու համար քով քովի եկան եւ Վարդան Մամիկոնեանի եղբորորդւոյն՝ Վահանի գլխաւորութեամբ ապստամբեցան պարսիկներու դէմ: Անոնք իրենց փոքրաթիւ խումբերովը յաջող կռիւներ մղեցին՝ իրենց յոյսը միշտ Աստուծոյ վրայ դնելով: Յովհան Մանդակունի Հայրապետը միացաւ ուխտապահներուն՝ օրհնեց զանոնք ու քաջախրեց:

Պարսիկները չկրցան ընկճել Վահան Մամիկոնեանն ու անոր ընկերները, եւ ի վերջոյ 484ին Նուարասիկ մէջ դաշինք կնքեցին հայոց հետ ու Հայաստանին չնորհեցին կրօնական ազատութիւն եւ ներքին անկախութիւն:



Վահան Մամիկոնեանի Դուին մուտքը

Վահան Մամիկոնեան Տիրոն երթալով ներկայացաւ պարսից Վաղարշ արքային, որուն կողմէ մեծ պատիւներու արժանանալէ ետք իր հետեւորդներով վերադարձաւ Հայաստան:

Վահան եւ իր ընկերները Վաղարշապատի մէջ դիմաւորուեցան Յովհան Մանդակունի Հայրապետէն եւ մտան Ս. Էջմիածնի տաճարը ու աղօթելով փառք տուին Աստուծոյ՝ ձեռք ձգուած աղատութեան համար:

Ժամանակ մը ետք երբ Վահան Մամիկոնեան նորէն Տիրոն դնաց, պարսից արքան անոր հաւատարմութիւնն ու իմաստութիւնը տեսնելով զայն մարզպան կարգեց Հայաստանի վրայ:

Հայ ժողովուրդը այս լուրը առնելով շատ ուրախացաւ եւ մեծ ընդունելութիւն մը ըրաւ Վահան Մամիկոնեանին Դուինի մէջ: Հայ մարզպանը շքեղ թափօրով մը եկեղեցի առաջնորդուեցաւ, ուր իրեն կը սպասէր Յովհան Մանդակունի Հայրապետը: Գոհարանական մաղթանքէ եւ արարողութիւններէ վերջ, ծերունի Հայրապետը գեղեցիկ ճառ մը խօսեցաւ:

Այնուհետեւ Վահան սկսաւ վերաշինել ու ծաղկեցնել Հայաստանը: Յովհան Մանդակունի Հայրապետին թելադրութեամբ նորոգել տուաւ Ս. Էջմիածնի տաճարը: Զարկ տուաւ դպրեվանքին եւ անոր տեսուչ կարգեց Ղաղար Փարպեցի ուսեալ վարդապետը:

Յովհան Մանդակունի եղաւ քարեկարգիչ հայրապետ մը եւ իր

հատուտամ կանոններով մեծապէս նպաստեց Հայ Եկեղեցւոյ վերելքին: Ան գրած է երեսունի մօտ ճառեր, որոնց մէջ կը գտաւարտէ տյիւտայլ մեղքերն ու մօլութիւնները:

Սուրբ Հայրապետին խոսքը եղած է՝ աշխատել իր հօտին փրկութեան համար եւ չէ գաղտնի գլուշացնել գախ մեղքերէ ու մօլութիւններէ:

Յովհան Մանդակունի Հայրապետը վախճանեցաւ 490 թուականին: Անոր օրով Կաթողիկոսական Աթոռը Ս. Էջմիածինէն փոխադրուեցաւ Գուին քաղաքը, ուր կը նստէր Հայաստանի մարզպանը:

Ե Զ Ր Ա Կ Ա Յ Ո Ի Թ Ի Ի Ն

1) Գիւտ եւ Յովհան Մանդակունի Հայրապետները եղան բարի հովիւներ եւ իրենց կեանքը ի սպաս գրիմ իրենց հօտին հագեկան ու ֆիզիքական փրկութեան համար:

2) Նաեւ Վահան Մամիկոնեանն ու իր ընկերները եղան հայրենասէր ու եկեղեցասէր իշխաններ: Անոնք ամէն վտանգ ու նեղութիւն յանձն առնելով պայքարեցան հայրենիքի ու կրօնի ազատութեան համար:

3) Մենք հետեւելու ենք անոնց օրինակին՝ ըլլալով քաջ եւ պարկեշտ հայ քրիստոնեաներ, միևնույն ի մահ հաւատարիմ մնալով Աստուծոյ ու մեր մայրենի եկեղեցիին:

Հ Ա Ր Յ Ո Ի Մ Ն Ե Ր

- 1) Ինչպիսի՞ կաթողիկոս մը եղաւ Գիւտ Հայրապետ:
- 2) Պարսից Պերոզ թագաւորը ինչո՞ւ համար Պարսկաստան կանչեց Գիւտ Կաթողիկոսը:
- 3) Պերոզ թագաւորը ի՞նչ առաջարկեց Գիւտ Կաթողիկոսին:
- 4) Ո՞վ յաջորդեց Գիւտ Կաթողիկոսին:
- 5) Հայ նախարարները որո՞ւ զլխաւորութեամբ ապստամբեցան:
- 6) Յովհան Մանդակունի Հայրապետը որո՞նց կողքին կեցաւ:
- 7) Ի վերջոյ պարսիկները ի՞նչ կնքեցին Վահան Մամիկոնեանի հետ:
- 8) Ո՞վ մարզպան նշանակուեցաւ Հայաստանի վրայ:
- 9) Ո՞վ նորոգեւ տուաւ Ս. Էջմիածնի տաճարը:
- 10) Ուրի՞ ի՞նչ բաներ ըրաւ Վահան Մամիկոնեան:
- 11) Ի՞նչ բաներ զրած է Յովհան Մանդակունի Հայրապետը:

ԲԱԲԳԷՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԵՒ ԳՈՒԻՆԻ ԺՈՂՈՎԸ

.....

Յովհան Մանդակունի Կաթողիկոսին յաջորդեց Բարդէն Ոթմեցի Հայրապետը:

Անոր օրով՝ 506 թուականին Գուինի մէջ գումարուեցաւ Եկեղեցական մեծ ժողով մը, որուն մասնակցեցան նաեւ Վրացի եւ Աղուան եպիսկոպոսներ: Ժողովը զբաղեցաւ Եկեղեցւոյ ներքին բարեկարգութեան հարցերով եւ Քաղկեդոնի ժողովի որոշումներուն ընդօրինակմամբ:

Այդ օրերուն Յոյներու կողմէ Հայոց, Վրաց եւ Աղուաններուն առաջարկուած էր որ ճանչային Քաղկեդոնի ժողովը որպէս չարքաղ Տիեզերական ժողով եւ ընդունէին անոր որոշումները:

ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ.— Մինչ Քրիստոսի Ընդհանրական Եկեղեցին աշխարհի ամէն կողմերը կը տարածուէր, եւ միլիոնաւոր մարդիկ կը լուսաւորուէին Ս. Աւետարանի լոյսովը, գտնուեցան մոլորեալ Եկեղեցական առաջնորդներ, որոնք ջանացին հաւատացեալ բազմութիւնները շեղեցնել Եկեղեցւոյ ուղղափառ դասնութիւնէն:

Այդ մոլորեցուցիչներն էին՝

- 1) Արիստոսի կ'ուրանար Քրիստոսի Աստուածութիւնը:
- 2) Մակեդոն որ կ'ուրանար Ս. Հոգիին անձնաւորութիւնն ու Աստուածութիւնը:
- 3) Նեստոր որ կ'ուրանար Ս. Կոյս Մարիամին Աստուածամայր կամ Աստուածածին ըլլալը:

Այս երեք մոլորեցուցիչները այնքան առաջ գացին եւ խռովեցին Քրիստոսի Ընդհանրական Եկեղեցիին անդորրութիւնը, որ հարկ տեսնուեցաւ գումարել Տիեզերական ժողովներ՝ զանոնք դատապարտելու եւ հաւատացեալ բազմութիւնները զուշացնելու համար անոնց մոլորութիւններէն:

Այսպէս 325ին Նիկիոյ մէջ գումարուեցաւ Տիեզերական Ա. ժողովը՝ ուր դատապարտուեցաւ Արիստի մոլորութիւնը:

381ին Կաստանդուպոլսոյ մէջ գումարուեցաւ Տիեզերական Բ. ժողովը՝ ուր դատապարտուեցաւ Մակեդոնի մոլորութիւնը:

431ին Նիքեոսի մէջ գումարուեցաւ Տիեզերական Գ. ժողովը՝ ուր դատապարտուեցաւ Նեստորի մոլորութիւնը:

Այս երեք ժողովներուն իրենց մասնակցութիւնը բերած են աշ-

խարհի ամէն կողմերը դանուող եկեղեցիներու ներկայացուցիչները : Տիեզերական ժողովները պատշաճ են նաեւ Ընդհանրական Եկեղեցին հետաքրքրող հարցերով, եւ առ այդ հաստատած են կանոններ :

Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ճանչցած եւ ընդունած է առաջին երեք Տիեզերական ժողովներն ու անոնց որոշումները :

ՔԱՂԿԵՂՈՆԻ ԺՈՂՈՎԸ.— Մինչ հայ ժողովուրդը 451ին մահու եւ կենաց պայքար կը մղէր յանուն քրիստոնէութեան, անդին Յոյն եւ Լատին Եկեղեցիներու բարձրաստիճան եկեղեցականները Քաղկեդոնի մէջ ժողով մը կը գումարէին Եւտիքէս անունով ազանդաւոր եկեղեցական մը դատապարտելու համար :

Եւտիքէս յոյն վանական մըն էր որՆեստորի մոլորութեան դէմ մարտնչելու ատեն ինկաւ ուրիշ մոլորութեան մը մէջ եւ սկսաւ քարոզել, թէ մարդեղութենէն ետքը՝ այլեւս աստուածային բնութիւն միայն մնաց Յիսուս Քրիստոսի մէջ՝ անոր մարդկային կերպարանքին ներքեւ : Եւտիքէսի քրիստոսաբանութեամբ այլեւս մէկ բնութիւն կ'ունենար Յիսուս Քրիստոս, այսինքն միայն աստուածային բնութիւն, ինչ որ հակառակ էր ուղղափառ վարդապետութեան :

Յոյներ եւ Լատիններ այս ժողովը կոչեցին Չորրորդ Տիեզերական ժողով : Սակայն Քաղկեդոնի ժողովը նախորդ երեք Տիեզերական ժողովներուն ոչ սրբութիւնը ունէր եւ ոչ ալ հմայքը : Քրիստոնէական Ընդհանրական Եկեղեցւոյ բոլոր անդամները իրենց ներկայացուցիչներով չէին մասնակցած այդ ժողովին, եւ Եւտիքէսի դատապարտութենէն զատ միակողմանի այլ որոշումներ ալ առնուած էին հոն, որոնք պատճառ դարձան հետագայ տարիներու եւ դարերու ընթացքին Ընդհանրական Եկեղեցւոյ մէջ պատահող անախորժ դէպքերուն :

Եւտիքէսը դատապարտելու համար հարկ չկար Տիեզերական ժողով գումարելու, քանի որ նախորդ երեք Տիեզերական ժողովներու հաւատոյ բանաձեւերը ինքնարբերաբար կը ժխտէին Եւտիքէսի մոլորութիւնը :

Հայոց, Վրաց եւ Աղուանից Եկեղեցիներն ալ չէին մասնակցած Քաղկեդոնի ժողովին եւ հետո մնացած էին անոր առթած վէճերէն : Սակայն Յոյները իրենց տիրակալական ձգտումներէն տարուած՝ հետամուտ եղան այս երեք եկեղեցիներուն պարտադրելու Քաղկեդոնի ժողովին որոշումները :

Դուինի ժողովը մերժեց ընդունիլ Քաղկեդոնի ժողովին որոշումները : Սակայն հետագային Վրացիներու Կիւրիոն Կաթողիկոսը

Յոյներու խոստումներէն շնորհիւ ընդունեցաւ Քաղկեդոնականութիւնը եւ բաժնուեցաւ Հայոց Եկեղեցիէն :

Յոյներուն բոլոր ջանքերը ապարդիւն անցան : Անոնք չկրցան Քաղկեդոնի ժողովին որոշումները Հայոց ընդունիլ տալ : Թէեւ Հայոց ընդդիմութիւնը շատ սուղ արժեց իրենց, Բայց պահեցին իրենց եկեղեցիին անկախութիւնը :

Հայաստանեայց եկեղեցին Քաղկեդոնի ժողովը չընդունելով հանդերձ կը նդովէ Եւտիքէսի մոլորութիւնն ալ :

Ե Ձ Ր Ա Կ Ա Ց Ո Ի Թ Ի Ի Ն

- 1) Հայաստանեայց եկեղեցին ընդունած է առաջին երեք Տիեզերական ժողովներուն որոշումները եւ հաւատարիմ մնացած է անոնց :
- 2) Սակայն Քաղկեդոնի ժողովն ու անկէ ետք գումարուած ուրիշ ժողովները չէ ընդունած որպէս Տիեզերական ժողով, քանի որ այդ ժողովները միակողմանի եղած են եւ Ընդհանրական Եկեղեցւոյ բոլոր անդամները իրենց մասնակցութիւնը չեն բերած անոնց՝ արդար պատճառներով :

Հ Ա Ր Ց Ո Ի Մ Ն Ե Ր

- 1) Ո՞վ յաջորդեց Յովհան Մանդակունի Հայրապետին :
- 2) Ուրիշ ո՞ր ազգերու եկեղեցականները մասնակցեցան Դուինի ժողովին :
- 3) Դուինի ժողովը ո՞ր հարցերով պաղեցաւ :
- 4) Ինչո՞ւ համար գումարուած էին առաջին երեք Տիեզերական ժողովները :
- 5) Ինչո՞ւ համար գումարուած էր Քաղկեդոնի ժողովը :
- 6) Հայ Եկեղեցին տիեզերական քանի՞ ժողովներ կ'ընդունի :
- 7) Հայ Եկեղեցին ինչո՞ւ համար չէ ընդունած Քաղկեդոնի ժողովը :
- 8) Ո՞ւր եւ ո՞ր թուականին գումարուեցաւ Տիեզերական Ա. ժողովը :
- 9) Ո՞ւր եւ ո՞ր թուականին գումարուեցաւ Տիեզերական Բ. ժողովը :
- 10) Ո՞ւր եւ ո՞ր թուականին գումարուեցաւ Տիեզերական Գ. ժողովը :
- 11) Հետագային Վրաց Կիւրիոն Կաթողիկոսը ի՞նչ ըրաւ :

ԺԵ. ԴԱՍ

ԿՈՄԻՏԱՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ

.....

Վահան Մամիկոնեանի մահէն վերջ Հայաստան անցուց մերթ խաղաղ եւ մերթ տապնապալի շրջաններ: Յոյներու եւ Պարսիկներու միջեւ տեղի ունեցող պատերազմական գործողութիւնները յաճախ կը վրդովէին մեր երկիրը:

Այս շրջաններուն վահակալող Հայրապետներուն մէջ նշանաւոր եղած է Կոմիտաս Կաթողիկոս իր շինարարութեամբ, վարչադիւանութեամբ եւ բանաստեղծական ձիրքով:


Կոմիտաս Կաթողիկոս կրցաւ սիրաշահիլ տիրող պարսիկ իշխանութեան համակրանքը հանդէպ հայ, ասորի եւ այլ ուղղափառ եկեղեցիներու, եւ այդ միջոցաւ ազատութիւն եւ ապահովութիւն ձեռք ձգեց բոլորին համար: Նոյն ատեն կասեցնել տուաւ քրիստոնէութեան ծոցին մէջ բոյն դրած Նեստորականներու եւ այլ աղանդաւորներու յառաջխաղացումն ու գործունէութիւնը:

Կոմիտաս Կաթողիկոս դարկ տուած է ուսման եւ ծաղկեցուցած է Հայաստանի կրթական հաստատութիւնները:

Հիմնովին նորոգել տուած է Ս. Հռիփսիմէի եկեղեցին, որ փայտակերտ մատուռ մըն էր նախապէս: Երես տուած է էջմիածնի տաճարին դմբէթը եւ լրացուցած է Դուինի Ս. Գրիգոր եկեղեցիին շէնութիւնը որ իրմէ առաջ ուրիշներ սկսած էին:

Ս. Հռիփսիմէի հին մատուռը քանդելու ատեն Երեւան եկած է Ս. Հռիփսիմէ կոյսի աճիւններուն տապանը որ կը կրէր Ս. Գրիգոր Լուսաւորիչի եւ Սահակ Հայրապետի կնիքները: Կոմիտաս Կաթողիկոս չի համարձակիր բանալ տապանը եւ իր կնիքն ալ անոնց վրան աւելցնելով կ'ամփոփէ զայն նորակառոյց տաճարի աւապ խորանին տակ: Եկեղեցւոյ նաւակառիքի տօնախմբութեան առթիւ կը յօրինէ «Անձինք Նուիրեալք» դեղեցկահաւու շարականը զոր նուիրած է Հռիփսիմեանց Կոյսերու յիշատակին:

Կոմիտաս Կաթողիկոսի օրով Պարսկաստանի վրայ կ'իշխէր



Ս. Հռիփսիմէի Տաճարը

Ստորով Բ. Թագաւորը, իսկ Բիւզանդիոնի վրայ կը նստէր Հերակլ կայսրը:

Պարսից Ստորով Թագաւորը յարձակեցաւ Հերակլի կայսրութեան վրայ եւ զանազան երկիրներ գրաւեց: Պարսիկ զօրքերը 614 թուականին դրաւեցին նաեւ Երուսաղէմը եւ տեղւոյն քրիստոնէաներուն շատ անդթութիւններ ընելէ ետք 30.000 հոգի աքսորեցին եւ Յունաց Չաքարիա պատրիարքն ու Գրիտոսի Սաչափայտն ալ գերի տարին Պարսկաստան:

Ամբողջ քրիստոնէայ աշխարհը այս լուրը առնելով յուզուեցաւ ու սուգի մտանուեցաւ:

Չաքարիան պատրիարքին յաջորդեց Մովսեստս եւ սկսաւ հովուել իր հօտը: Մովսեստս նամակ մը գրեց Հայոց Կոմիտաս Կաթողիկոսին նիւթական օգնութիւն խնդրելով անկէ՝ Երուսաղէմի սրբա-

վայրերու նորոգութեան համար: Նոյն ատեն կը յիշէր իր նամակին մէջ Երուսաղէմ այցելող Հայ ուխտաւորներուն կողմէ իրենց եղած նիւթական օժանդակութիւնը: Կոմիտաս Կաթողիկոս Մոզեստոսի խնդրանքը չկրցաւ կատարել, քանի որ այդ օրերուն Հայաստանի մէջ ալ աղէտներն ու թշուառութիւնները անպակաս էին. ուստի բաւականացաւ միւթարական ու քաջալերական խօսքերով նամակ մը գրել անոր, ի պատասխան իր ստացած թուղթին: Սակայն Երուսաղէմ դացոյ ունեւոր հայ ուխտաւորներ նիւթապէս նպաստեցին սուրբ տեղերու նորոգութեանց, որոնց օժանդակութիւնը մեծապէս միւթարեց Մոզեստոսն ու տեղւոյն քրիստոնեաները:

Սուրբ Սաշի վերութենէն վերջ Հերակլ կայսրը ուղեց խաղաղ միջոցներով սիրաշահիլ Պարսից Պոսրով թագաւորին սիրտը եւ Քրիստոսի Սաշը ազատել վերութենէ: Սակայն գոռոզ Պոսրովը ամբարտաւանութեամբ կը յոխորտար եւ ընթացք չէր տար Հերակլի խաղաղասիրական առաջարկներուն:

622 թուականին Հերակլ կայսրը մեծ զօրաթողով մը ըրաւ եւ որոշեց քաշիլ պարսիկներու վրայ իր կորսնցուցած երկիրները վերադրաւելլու եւ Քրիստոսի Սաշափայտը ազատելու համար:

Երկարատեւ պատերազմներ մղեց Հերակլ եւ եօթը տարուան մէջ մեծամեծ յաղթանակներ տանելէ ետք ի վերջոյ դրաւեց պարսկաստանի մայրաքաղաքը եւ արքայական պալատը կրակի տուաւ: Պոսրով թագաւորը քողաքէ քողաք փախաւ եւ սակայն սպաննուեցաւ իր իսկ որդւոյն՝ Կաւասի ձեռքով: Պարսիկները յաղթական քրիստոնեայ կայսրին առջեւ խոնարհեցան եւ 628ին խաղաղութեան դաշինք կնքելով Յիսուսի Սաշափայտը յանձնեցին քրիստոնեայ բանակին:

Հերակլի բանակին միացած էր Մժէժ Գնունի հայ զօրավարը իր հայ զինուորներով, որոնք մեծ քաջագործութիւններ ըրին պատերազմի ընթացքին:

Քրիստոնեայ զինուորներ մեծ ուրախութեամբ Յիսուսի Սաշափայտը վերցուցին ու Հայաստանէն անցնելով տարին Կոստանդնուպոլիս եւ ապա Երուսաղէմ: Հերակլ կայսրը Սաշափայտը ուսն առած, բոկոսն քալեց Երուսաղէմի փողոցներէն ու տարաւ Գողգոթայի գաղաթը եւ հոն կանգնեց զայն 629ին:

Պարսկաստանէն մինչեւ Երուսաղէմ, ճամբու ընթացքին բոլոր քրիստոնեաներ, մեծ ցնծութեամբ դիմաւորեցին Յիսուսի Սաշափայտին վերադարձը: Քաղաքներու եւ գիւղերու մէջ թափօրներ կազմը-

ւեցան եւ սաղմոսներ, երգեր, շարականներ ու աղօթքներ կարդալով զԱստուած փառաւորեցին իր շնորհած յաղթանակներուն համար:

Կոմիտաս Կաթողիկոս վախճանեցաւ 628 թուին սկիզբները: Ան թէեւ չտեսաւ Քրիստոսի Ս. Սաշափայտին վերութենէն ապատուլը, սակայն ուրախութեամբ տեսաւ քրիստոնեայ բանակներուն յաղթանակները կրակապաշտներուն վրայ, որոնք պիտի յանդէն Քրիստոսի Սաշափայտի ազատագրութեան:

Կոմիտաս Կաթողիկոսին մարմինը թաղուեցաւ Ս. Հռիփսիմէի դերեղմանին ծօտ:

Ե Զ Ր Ա Կ Ա Յ Ո Ի Թ Ի Ի Ն

1) Կոմիտաս Կաթողիկոս իր ունեցած միւթերն ու տաղանդները ի սպաս դրաւ Հայ Եկեղեցւոյ պայծառութեան ու բարգաւաճումին համար: Ան սիրեց թէ իր ազգը եւ թէ ուրիշ քրիստոնեայ ժողովուրդները ու անոնց բարօրութեան եւ ապահովութեան համար ալ ձեռնտու եղաւ: Մեմֆ պիտի է հետեւիմք Կոմիտաս Կաթողիկոսի օրինակին եւ սրտանց սիրեմք մեր մայրենի եկեղեցին ու աշխատիմք անոր պայծառացման:

2) Քրիստոսի Սուրբ Սաշը սիրելի ու թանկագին աւանդ մըն է բոլոր քրիստոնեաներուն համար, քանի որ մեր Տէրը մարգոց փրկութեան համար զոհուեցաւ անոր վրայ, իր սուրբ արիւնը թափելով: Քրիստոսի Ս. Կիւսիմ հանդէպ բոլոր քրիստոնեաներուն ունեցած ջերմեանդ սէրն էր որ գիրեմք առքի հանեց կրակապաշտներուն դէմ ու ամէն ոք պատրաստ գտնուեցաւ իր արիւնը թափելու անոր ազատագրութեան համար:

Սուրբ Սաշը Քրիստոսի նշանն է: Իւրաքանչիւր քրիստոնեայի պարտականութիւնն է խոնարհիլ այդ Սուրբ Նշանին առջեւ: Ազօրֆի պահում խաչ հանելով գՔրիստոս Աստուծոյ Որդի դաւանած կ'ըլլամք: Հետեւաբար խաչակնիւմը մեզի համար պարծանք սեպելու ենք:

Հ Ա Ր Յ Ո Ի Մ Ն Ե Ր

1) Վահան Մամիկոնեանի մահէն ետք Հայաստան ինչպիսի՞ շրջաններ ունեցաւ:

- 2) Կոմիտաս Կաթողիկոս ո՞ր եկեղեցին հիմնովին նորոգել տուաւ :
- 3) Ս. Հռիփսիմէի հին մատուռը քանդելու ատեն որո՞ւ դամբանը գտնուեցաւ :
- 4) Ս. Հռիփսիմէի տապանին վրայ որո՞նց կնիքները կային :
- 5) Կոմիտաս Կաթողիկոս այդ կնիքներուն վրայ ի՞նչ անեցուց :
- 6) Կոմիտաս Կաթողիկոս ո՞ր շարականը յօրինեց Հռիփսիմեանց կոյսերու յիշատակին համար :
- 7) Պարսից Սոսրով թաղաւորին զօրքերը երուսաղէմը գրուելէ ետք ի՞նչ ըրին :
- 8) Հերակլ կայսրը Քրիստոսի Սաչափայտը դերութենէ ալատելու համար ի՞նչ ըրաւ :
- 9) Հերակլի զօրքերու կողքին կուռղ հայկական բանակին զօրավարը ո՞վ էր :
- 10) Հերակլի բանակը Պարսկաստանի մայրաքաղաքը մտնելով ի՞նչ ըրաւ :
- 11) Որո՞ւ ձեռքով սպաննուեցաւ գոռոլ Սոսրովը :
- 12) Քրիստոնեաներ՝ քաղաքներու եւ դիպերու մէջ ինչպէ՞ս գեմաւորեցին Քրիստոսի Սաչափայտին վերագարձը :
- 13) Հերակլ կայսրը ո՞ւր դետեղեց Քրիստոսի Սաչափայտը :
- 14) Կոմիտաս Կաթողիկոս կրցա՞ւ տեսնել Քրիստոսի Սաչափայտին դերութենէ վերագարձը :



ԺԸ. ԴԱՍ

ՍԱՀԱԿ Գ. ԶՈՐԱՓՈՐԵՑԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ

.....

640 թուին կը սկսին արարական արշաւանքները Հայաստանի վրայ եւ այս անգամ մեր երկիրը կուսախնձոր կը դառնայ Յոյներու եւ Արաբներու միջեւ : Մերթ Յոյները կը տիրեն եւ մերթ Արաբները կ'իշխեն Հայաստանի վրայ : Հայոց դրութիւնը անտանելի կը դառնայ երկու հակամարտ պետութիւններու միջեւ եւ երկու կողմերէն ալ նեղութիւն կը կրեն :

Արաբները երբ Հայաստանը գրաւէին, անոր վրայ կը կարգէին արաբ կառավարիչ մը որ կը կոչուէր ռատիկան : Իսկ Յոյները վերագրաւելէ ետք մեր երկրին վրայ կը նշանակէին յոյն կուսակալ մը որ կը կոչուէր Կիւրապաղատ :

Այս իրադարձութիւններու ընթացքին հայ իշխանները կը բաժնուէին երկու կուսակցութիւններու : Մին կ'ուզէր Յոյներու հետ գործակցել եւ պայքարիլ Արաբներու դէմ, իսկ միւսը կը նախընտրէր Արաբներու հետ հաշտ ապրիլ :

Ի վերջոյ Հայաստանը ինկաւ արարական գերիշխանութեան տակ երկար ժամանակ :

Արարական արշաւանքներու ատեն գահակալող նշանաւոր կաթողիկոսներէն մէկն է Սահակ Զորափորեցի Հայրապետը, որուն կեանքը եղած է համակ նուիրում իր ազգին : Անոր օրով Հայաստան դարձած էր զանազան յարձակումներու թատերափայտ : Հիւսիսէն՝ Պագիւրներ, արեւմուտքէն՝ Յոյներ եւ հարաւէն ու արեւելքէն Արաբներ կ'արշաւէին մեր երկիրը ու կ'աւերէին դայն : Հայ նախարարներն ու իշխանները անպօր էին այս շարիքներուն առաջին ատենու :

Այս արշաւանքներուն ամենէն ստուկալին կ'ըլլայ արարականը : Արդըլլահ ոստիկանը կը յարձակի Հայաստանի վրայ ու դանաղան աւերներ գործելէ վերջ, Սահակ Կաթողիկոսն ու կարգ մը իշխանները կալանաւորելով կը զրկէ Իսամասկոս՝ ամիրապետին քով :

703 թուին հայ իշխանները արարական խժոճութիւններուն

չկարենալով համբերել, կ'ապստամբին եւ ընդհարումներ կ'ունենան արար զօրքերուն հետ եւ անոնցմէ շատերը կը կոտորեն: Երբ այս լուրը Դամասկոս կը հասնի, Ապոէլմէլիք ամիրապետը մեծ թիւով զօրք կը յանձնէ Մոհմատ ոստիկանին եւ զայն կը ճամբէ Հայաստան՝ հայերը ընկճելու համար:

Սահակ Զորափորեցի Հայրապետը իր աքսորավայրին մէջ այս լուրը առնելով կը կռահէ թէ ինչպիսի կացութեան մը պիտի մատնուի Հայաստան: Անմիջապէս կը դիմէ ամիրապետին եւ անկէ հրաման առնելով Մոհմատին ետեւէն կ'երթայ՝ զայն տեսնելու եւ աղաչելու որ ետ կենայ իր վրէժխնդրութենէն ու խժոժութիւններ չգործէ Հայաստանի մէջ: Սակայն ծերունի Հայրապետը երբ Պառան կը հասնի, հոն հիւանդանալով կը վախճանի: Իր հիւանդութեան միջոցին նամակ մը կը գրէ Մոհմատին եւ կը խնդրէ իր հետեւորդներէն որ մեռնելու պարագային իր ձեռքին մէջ դնեն նամակը եւ Մոհմատ անձամբ առնէ զայն:

Կաթողիկոսը ողորջէ նամակ մը գրած էր Մոհմատին եւ ի մէջ այլոց ըսած էր, «եթէ առաջարկս կատարես, Տէրը յաշուութիւն տայ քու իշխանութեանդ, իսկ եթէ չկատարես, Տէրը ցրուէ քու խորհուրդդ»:

Մոհմատ ոստիկանը Կաթողիկոսին մահը իմանալով անձամբ կու գայ անոր մօտ. յարզանքով կ'առնէ նամակը եւ զայն կարդալով շատ կ'աղաւթի:

— Այո՛, ով պատուական այրը Աստուծոյ, խնդրանքդ կատարուած է, կը բացալանչէ Մոհմատ եւ ետ կը կենայ իր չար դիտաւորութենէն:

Մոհմատ ոստիկանին հրամանով Հայրապետին մարմինը պատուով կը փոխադրուի Հայաստան ու կը թաղուի:

Սահակ Գ. Զորափորեցի Հայրապետը գրած է Ս. Պաշի նուիրուած շարականներ:

Ե Զ Բ Ա Կ Ա Յ Ո Ի Թ Ի Ի Ն

1) Բարի եւ քաջ հովիւներ իրենց կեանքը կը գոհեն իրենց հօտին փրկութեան համար: Սահակ Գ. Զորափորեցի Հայրապետը եղաւ քաջ եւ անձնուէր հովիւ մը:

2) Ան իր աքսորավայրին մէջ Մոհմատ ոստիկանին չար դիտա-

ւորութիւնները իմանալով, ամէն վտանգները յանձն առաւ եւ ձեռնարկեց դժնդակ նամարդութեան, որու ընթացքին հիւանդանալով վախճանեցաւ: Մակայն ծերունի Հայրապետը հասաւ իր նպատակին, քանի որ իր գրած աղբիջ նամակը մեծ ազդեցութիւն գործեց Մոհմատին վրայ:

3) Մենք այլ հետեւելու ենք մեր Սուրբ Հայրապետներու բարի օրինակին, սիրելով մեր ազգն ու եկեղեցին: Որեւէ պարագայի տակ երբ մեր ազգը վտանգի առջեւ գտնուի, առանց վարանումի պարստ ըլլալու ենք մենք զմեզ ի սպաս դնելու անոր փրկութեան եւ ազատութեան համար:

Հ Ա Ր Յ Ո Ի Մ Ն Ե Ր

1) Սահակ Զորափորեցի Հայրապետին օրով սրբօք կը տիրէին Հայաստանի վրայ:

2) Սահակ Զորափորեցի Հայրապետը սփռաւ աքսորուեցաւ:

3) Հայ իշխանները Հայաստանի մէջ ի՞նչ բրին տրար զօրքերուն:

4) Դամասկոսի ամիրապետը Հայոց ապստամբութիւնը լսելով ի՞նչ ըրաւ:

5) Մոհմատ ոստիկանը ինչո՞ւ համար Հայաստան կ'երթար:

6) Կաթողիկոսը Մոհմատին դիտաւորութիւններուն տեղեկանալէ ետք ի՞նչ ըրաւ:

7) Կաթողիկոսը Պառան հօտնելէ ետք ի՞նչ եղաւ:

8) Կաթողիկոսը իր նամակին մէջ ի՞նչ գրած էր Մոհմատին:

9) Մոհմատ ոստիկանը վախճանեալ Կաթողիկոսին առջեւ նամակը կարդալէ ետք ի՞նչ ըսաւ:



ԺԹ. ԴԱՍ

ՅՈՎՀԱՆ ՕՃՆԵՅԻ ԶԱՅՐԱՊԵՏ

.....

Արարական տիրապետութեան շրջանի նշանաւոր Հայրապետներէն մէկն էր նաեւ Յովհան Օճնեցի Կաթողիկոսը: Ան եղած է սըրբակեաց, իմաստուն եւ քաղաքալէտ անձնաւորութիւն մը: Իր ամբողջ կուսիւնը ի սպաս դրած է իր հօտին բարօրութեան համար: Գրած է ճառեր, մեկնութիւններ եւ ներբողականներ: Իր իմաստասիրական բարձր հանճարին համար կոչուած է Յովհան իմաստասէր:

Յովհան Օճնեցիի ժամանակ Հայաստանի մէջ բոյն դրած էին սյլեւայլ աղանդաւորներ, որոնք երկրին դանազան կողմերը տարածուելով կը մոլորեցնէին պարզամտները եւ զանոնք կը հեռացնէին իրենց մայրենի եկեղեցիէն: Այս աղանդաւորներուն մէջ Պաւլիկեաններն ու Երեւուքականները բուական թիւ մը կը կազմէին եւ իրենց ցանած որոմներով պատճառ կը դառնային շատ շատերու հոգեկան անկումին:

Յովհան Հայրապետին առաջին զործը եղաւ պայքարիլ այս աղանդաւորներուն դէմ եւ զընդացնել իր հօտը դառնազոհստ գայլերէ: Ուստի մեծ ժողով մը դուժարեց Դուինի մէջ եւ կարեւոր որոշումներ առաւ իր հօտին բարօրութեան ու Հայ Եկեղեցւոյ բարգաւաճումին համար: Այդ ժողովին ներկայ եղան երեսուն եպիսկոպոսներ, բաղձաթիւ նախարարներ եւ իշխաններ: Երկրորդ մեծ ժողով մըն ալ կազմակերպեց Մանազկերտի մէջ, որուն մասնակցեցան նաեւ Ատորիններ եւ երկու Եկեղեցիներու միջեւ միութիւնը վերահաստատուեցաւ:

Յովհան Օճնեցի Հայրապետին բարի եւ իմաստուն համարը հոսաւ Դամասկոսի արար ամիրապետին, որ ուղեց անձամբ տեսնել Հայոց Կաթողիկոսը եւ խօսիլ անոր հետ:

Ամիրապետին հրաւերին ընդառաջելով Յովհան Օճնեցին իր շքախումբովը Դամասկոս գնաց եւ մեծ պատիւներու արժանացաւ:

Ընդունելութեան ատեն ամիրապետը շատ լաւ տպաւորուեցաւ

Կաթողիկոսին իմաստուն խօսքերէն. սակայն դարմացաւ անոր շքեղ հանդերձներն ու արդուարդը տեսնելով: Ուստի հարցուց Օճնեցի Հայրապետին.

— Ձեր կրօնը պարզութիւն եւ անձնուրացութիւն կը քարոյշէ, մինչդեռ դուք շքեղութեամբ կը փայլիք: Ի՞նչ է ասոր պատճառը:

Կաթողիկոսը պատասխանեց.

— Առաջին դարերու քրիստոնեայ առաջնորդներուն կատարած սքանչելիքներն ու հրաշքերը ներկայիս մեր ձեռքով չեն կատարուիր եւ ժողովուրդն ալ մեր արտաքին կերպարանքէն ու հանդերձէն միայն կ'ակնածի, ինչպէս ձեր պարագային. ուստի շքեղ հանդերձներով կը պարգտարւինք, որպէսզի կարենանք ժողովուրդին վրայ ազդել եւ բարիին առաջնորդել:

Այս պատասխանէն վերջ ամիրապետը կաթողիկոսին խնդրանքով բոլոր ներկաները սրահէն հեռացուց. եւ երբ երկուքը սուսնձին մնացին, Յովհան Օճնեցին իր շքեղ հանդերձներէն մերկանալով ամիրապետին ցոյց տուաւ այն շուրճը կամ խարաղը (ուղտի կամ այծի մաղէ հիւսուած ճղնաւորական հալոճաւ) զոր կը կրէր իր մարմինին վրայ: Ամիրապետը զայս տեսնելով հասկեցաւ թէ Կաթողիկոսը ի ներքուստ կը կրէր անձնուրացութիւն, պարզութիւն եւ կ'ապրէր սուրբ կեանք մը. ուստի աւելի պատուեց զայն ու խոստացաւ Հայաստանին շնորհել խաղաղութիւն եւ բարօրութիւն:

Յովհան Օճնեցի Հայրապետը իր վերջին երկու տարիները անցուց ճղնութեամբ եւ վախճանեցաւ 729 թուին՝ տասնութէկ տարուան դահակալութենէ մը վերջ:

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ի Թ Ի Ի Ն

1) Յովհան Օճնեցի Հայրապետը ապրեցաւ անճնուիրութեամբ եւ սրբութեամբ:

2) Ան իր անբասիր կեանքովը օրինակ եղաւ իր հօտին: Ի ներհուստ կ'ապրէր անճնուրացութեամբ եւ պարզութեամբ, առանց յայտնի ընելու ուրիշներուն:

3) Ան կը գուրգուրար իր հօտին վրայ ու ջանք կը քափէր անոր հոգեւոր եւ ֆիզիքական փրկութեան համար:

4) Իմաստութեամբ կը վարուէր բոլորին հետ, նամանաւնդ կը ջանար սիրաշահիլ տիրող արար իշխանութեան ղեկավարները,

որպէսզի կարեւար ապահովութիւնն ձեռք բերել իր ժողովուրդին համար:

5) Յովհան Օձնեցի Հայրապետին ամբաստի ու անձնուէր կեանքը օրինակ պէտք է ըլլայ մեր բոլորին, որպէսզի մենք ալ ջանամք ապրիլ սրբութեամբ եւ իմաստութեամբ:

Հ Ա Ր Յ Ո Ւ Մ Ն Ե Ր

- 1) Ինչպիսի՞ կեանք մը կ'ապրէր Յովհան Օձնեցի Հայրապետը:
- 2) Օձնեցի Հայրապետին օրով որո՞նք կը տիրէին Հայաստանի:
- 3) Ինչո՞ւ համար իմաստասէր կոչուած է Յովհան Օձնեցին:
- 4) Յովհան Օձնեցիին համբաւը մինչեւ ո՞ւր կը հասնի:
- 5) Ամիրապետը ինչպիսի՞ ընդունելութիւն մը ցոյց կու տայ Յովհան Օձնեցիին:
- 6) Ամիրապետը կաթողիկոսին շքեղ հանդերձները տեսնելով ի՞նչ կ'ըսէ:
- 7) Կաթողիկոսը ի՞նչ կը պատասխանէ ամիրապետին եւ ի՞նչ կը ցուցնէ անոր:
- 8) Ամիրապետը կաթողիկոսին ի ներքուստ ապրած պարզութիւնն ու անձնուրացութիւնը տեսնելով ի՞նչ կ'ընէ:
- 9) Ամիրապետը ի՞նչ կը խոստանայ Հայաստանին համար:



Ի. ԴԱՍ

ՍՈՒՐԲ ՎԱՀԱՆ ԳՈՂԹՆԱՑԻ

.....

Արարական տիրապետութեան շրջանին բազմաթիւ հայ իշխաններն ու անոնց զաւակներէն շատերը գերի տարուեցան Դամասկոս եւ սոսկալի նեղութիւններու մտանուեցան: Տարագրուող մանուկներուն մէջ կը գտնուէր Գողթնեաց Սոսրով իշխանի որդին՝ չորս տարեկան Վահանը, որ միւս փոքրիկներուն հետ միասին կըթուեցաւ իսլամական հաւատքի մէջ: Արարները Վահանի անունն ալ փոխելով կոչեցին Վահայ:

Վահանի ուշիմութիւնը ամենուն ուշադրութիւնը գրաւեց եւ մասնաւոր ինամքի առարկայ դարձաւ: Ան տիրացաւ արարական դրականութեան, մշակոյթին եւ իսլամական կրօնքի օրէնքներուն: Իր արտակարգ ընդունակութեան եւ հաւատարմութեան շնորհիւ հետզհետէ պաշտօնի բարձրացում ունեցաւ ու դարձաւ արքունի դիւանադպիր:

Վահան թէեւ իսլամական կրօնքին մէջ մեծցած էր, սակայն իմացած էր թէ ինք հայ իշխանի մը որդին էր:

Յովհան Օձնեցի կաթողիկոս իր Դամասկոս այցելութեան ընթացքին կրցած էր Օմար ամիրապետին համակրութիւնը շահիլ եւ հայրենիք վերադառնալու արտօնութիւն ձեռք բերել տարադրուած հայ նախարարներուն համար:

Երբ հայոց գերեզարձը սկսաւ, Վահան ուզեց վերադառնալ իր հայրենիքը ու իր այս փափաքը յայտնեց ամիրապետին: Վերջինը չուզեց իր հաւատարիմ պաշտօնեան ձեռքէ հանել. ուստի արգելք ըլլալու համար առարկեց թէ Վահան հայ քրիստոնեայ մը չէր: Սակայն Վահան նախապէս զինք ճանչցող հայ եւ տաճիկ վկաներու բերնով կրցաւ փաստել թէ ինք ծագումով հայ քրիստոնեայ մըն էր, եւ զինք իսլամացուցած էին երբ տակաւին իսլամաւորութիւնը մէջ չէր:

Ամիրապետը դարձեալ չյօժարեցաւ Վահանի մեկնումին եւ

դա՛յն քովը պահելու համար խոստացաւ աւելի բարձր պաշտօններու եւ պատիւներու արժանացնել: Սակայն ամիրապետին շրջուցիչ խոստումները չկրցան մարել Վահանի սրտին մէջ բռնկող սէրը՝ հանդէպ իր ազգին, կրօնքին ու հայրենիքին: Ուստի խնդրեց ամիրապետէն որ դռնէ իրեն թոյլատրէ երթալ իր հայրենի երկիրը տեսնելու եւ իր հօրենական կալուածները ժառանգելու: Նոյն ատեն խոստացաւ դանոնք կարգի դնելէ ետք մերապատնալ Դամասկոս:

Օմար ամիրապետը Վահանի թախանձանքին վրայ հաւանութիւն տուաւ եւ հրովարտակով մըն ալ հաստատեց անոր տանուածքութիւնը Գողթնեաց դաւառին վրայ:

Վահան իր հայրենի դաւառը հասնելէն քիչ ժամանակ ետք իմացաւ Օմար ամիրապետին մահը եւ Դամասկոս վերադառնալու իր տուած խոստումէն ազատ զգաց ինքզինքը: Ան որոշեց մնալ Հայաստան եւ ազատօրէն ապրիլ քրիստոնէական մաքուր կեանք մը:

Վահան ամուսնացաւ Սիւնեաց նախարար՝ Բարդէն իշխանի աղջկան հետ եւ վարեց տասը տարուան խաղաղ կեանք մը:

Վահանի քրիստոնեայ դառնալուն լուրը երբ Դամասկոս հասաւ, օրուան ամիրապետն ու իր շրջապատի մարդիկը յիցցուեցան: Անոնք լաւ աչքով չընդունին այս պարագան: Իրենց կրօնքին համար նախատինք սեպեցին Վահանի նման ուսեալ եւ իմաստուն իսլամի մը ետ քրիստոնեայ դառնալը, ու որոշեցին ձեռք անցընել զայն եւ դատել:

Վահան այս բանը իմանալով ուղեց քսան հեծեալներով փախչիլ Յունաց սահմանները. սակայն իր կի՛նն ու անոր պարագաները հակառակեցան: Ուստի ստիպուեցաւ իր կի՛նը ծնողքին քով ձգել եւ ինք անցնիլ Վրաստան, հան դանուող իր նախարարագուն ազգականներէն օգնութիւն գտնելու յոյսով: Սակայն իր ակնկալածը չգտնելով տարի մը ետք անցաւ Արապածոսն: Մատնուեցաւ թշուառ վիճակի մը եւ չկարենալով իր հետեւորդներուն ոռճիկը առլ՝ լքուեցաւ անոնցմէ: Արարներու հետապնդումներէն խուսափելու համար Արապածոսնի վանքերուն մէջ պատուարուելով ապրեցաւ ճգնողական կեանք մը: Զինք պատուարող վանականներն ալ սկսան վախճալ Արարներու հետապնդումէն եւ վրիժառութենէն: Ասոր վրայ Վահան աղքատի կերպարանքին տակ ծպտուած, մտաւ Էջմիածին եւ տեսնուեցաւ օրուան Դաւիթ Կաթողիկոսին հետ, բայց սեւէ մէկը չկրցաւ պաշտպանել զինք:

Վահան թախանեցաւ Հայաստանի դանազան կողմերը իր հետքը կորսնցնելու համար. բայց իզուր: Այլեւայլ վանքերու մէջ ժամանակ առ ժամանակ պատուարուելէ ետք հասաւ Սիւխան լեռան ստորոտը դանուող Երաշխաւորք վանքը, որուն առաքինի մեծաւորը՝ Հայր Արտաւազդ պատուարեց եւ քաջալերեց զինք:

Վահան իր անապահով թախառումներուն վերջ տալու եւ իր պատճառով զինք պատուարողներն ալ վտանդի չենթարկելու համար որոշեց երթալ ուղղակի Հեղամ ամիրապետին քով եւ անոր յայտնել թէ ինք քրիստոնեայ մըն է ծագումով ու իր կամքէն անկախ պատճառով իր փոքր տարիքին զինք իսլամ դարձուցած են: Իսկ ներկայիս ինք իր կամքին տէրն ըլլալով կը դաւանի զՔրիստոս եւ որոշած է քրիստոնեայ մնալ մինչեւ ի մահ:

Վահան շատ լաւ գիտէր թէ իսլամութենէն հրաժարող անձ մը մահուամբ կը պատժուէր, սակայն իր ծագումը քրիստոնեայ ըլլալուն եւ թէ իր մանկութեան ատեն զինք քրիստոնեայ դարձուցած ըլլալուն համար, փոքր յոյս մը ունէր որ ամիրապետը կրնար իրեն աղատութիւն շնորհել: Հակառակ պարագային աչք առած էր նահատակուել Քրիստոսի անուան համար:

Իր այս որոշումը դորձադրելու համար Վահան ճամբայ ելաւ: Հայր Արտաւազդ խրախուսեց զինք եւ իր միաբաններէն ուղեկիցներ տուաւ: Վահան նախ հանդիպեցաւ Եղեսիա եւ անկէ իր ճամբան շարունակելով հասաւ Ռուծափ քաղաքը որ ձմեռանոցն էր ամիրապետին: Հոն իր նախկին իսլամ պաշտօնակիցներուն միջոցաւ խնդրազիր տուաւ ամիրապետին եւ յայտնեց իր ինքնութիւնն ու նպատակը:

Ամիրապետը իր առջեւ բերել տուաւ Վահանը եւ մեծամեծ խոստումներով առաջարկեց անոր որ ետ դառնար իսլամութեան: Վահան մերժեց ամիրապետին առաջարկը՝ ոչինչ համարելով աշխարհային վայելքներն ու սին փառքերը: Ամիրապետը սպառնաց մահուան դատապարտել զինք: Վահան անդրդուելի մնաց իր հաւատքին վրայ եւ ինդրեց որ ճանչցուի իր քրիստոնէութիւնը: Ամիրապետը հրամայեց որ բանտ նետուի:

Վահան ութ օր կոճղի մէջ անցուց իր բանտարկութիւնը: Իսլամ կրօնականներ այցելեցին բանտ՝ զինք համոզելու՝ որ ետ դառնար իսլամութեան եւ ազատուէր մահապատիժէն: Վահան վիճեցաւ անոնց հետ եւ պապանձեցուց դանոնք իր խորունկ հաւատքովն ու գիտութեամբը:

737 Մարտ 18ին, Աւազ Երկուշաբթի օր Վահանը տարին քո-

զաքէն դուրս՝ կառավարման տեղը: Դահճապետը ամիրապետի հրահանգին համեմատ իր սուրբ շողացնելով թեթեւօրէն վիրաւորեց Վահանին վիզը՝ անոր կարմիր արիւնը ցայտեցնելով, ապա առաջարկեց որ ետ ընդունի խլամական կրօնքը եւ ազատուի մահապատիժէն: Վահան ամուր մնաց իր լոյս հաւատքին վրայ ու դիտատուեցաւ:

Յաջորդ օր Ռուծափի ջրիստոնեաները ժողովուեցան եւ նահատակ Վահանին մարմինը թաղեցին քաղաքին «Օտարաց գերեզմանատուն»ը: Ժամանակ մը վերջ Ռուծափի ասորի եպիսկոպոսը յատուկ վկայարան մը կանգնեց Վահանի գերեզմանին վրայ:

Վահանի նահատակութեան լուրը երբ Հայաստան հասաւ, Արտաւազը վարդապետը ուխտի եկաւ նահատակին գերեզմանին վրայ: Տեղւոյն վրայ մանրամասնօրէն ստուգեց Վահանի նահատակութեան պարագաները եւ զանոնք զրի առաւ:

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ի Թ Ի Ի Ն


1) Վահան Գոզթնացիին Դամասկոսի արարական արժունիքին մէջ իր ունեցած բարձր դիրքը եւ վայելած պատիւները ոչինչ համարեց Քրիստոսի սիրոյն համար: Ան կամաւորապէս գնաց ամիրապետին ինքն ամրացնելով՝ աչք առնելով նահատակութիւնը Քրիստոսի անուան համար:

2) Վահան Գոզթնացիին կեանքը սերտելով օրինակ առնելու եւնի անոր հաստատուն հաւատքին եւ անկուրն կամքին: Մենք ալ պէտք է վառուիմք Քրիստոսի սիրով եւ հետամուտ ըլլանք երկինքի արձայութիւնը ժողովուրդի: Մեր սուրբ կրօնքը ուրանալու չենք որեւէ ատեն: Աստուծոյ օրէնքներն ու պատուիրանները ձգելու չենք աշխարհային մեղսալից եւ սին հաճոյքներու, դրամի, հարստութեան եւ կամ բարձր դիրքերու հասնելու սիրոյն:

3) Հերոսներ են անոնք, որոնք իրենց սուրբ հաւատքին համար կը համբերեն նեղութիւններու, գրկանքներու եւ պէս-պէս ցաւերու: Երանելի են անոնք, որոնք իրենց արիւնը կը թափեն վասն Յիսուսի, քանի որ այդպիսիները մարտիրոսաց դասը անցնելով կը ժողովուրդին երկինքի արձայութիւնը:

Հ Ա Ր Ց Ո Ի Մ Ն Ե Ր

- 1) Որո՞ւ որդին էր Վահան Գոզթնացիին:
- 2) Վահան քանի՞ տարեկանին գերի տարուած էր Դամասկոս:
- 3) Վահան ի՞նչ տեսակ կրթութիւն ստացած էր:
- 4) Ի՞նչ էր Վահանին պաշտօնը Դամասկոսի արքունիքին մէջ:
- 5) Ո՞ր Կաթողիկոսին միջամտութիւնովը սկսաւ հայ նախարարներուն գերեզարձը:
- 6) Վահան իր հայ ըլլալը իմանալէ ետք ո՞ւր երթալ ուղեց:
- 7) Օմար ամիրապետը ինչո՞ւ համար չէր ուղեր Վահանը Հեռացնել իր քովէն:
- 8) Վահան Հայաստան մեկնելու ատեն ի՞նչ խոստացաւ ամիրապետին:
- 9) Վահան Օմար ամիրապետին մահը իմանալէ ետք ի՞նչ ըրաւ:
- 10) Նոր ամիրապետը Վահանին ջրիստոնեայ դառնալն իմանալով ի՞նչ ըրաւ:
- 11) Այնուհետեւ Վահան ինչպիսի՞ կեանք մը ունեցաւ:
- 12) Ի վերջոյ Վահան Հեղամ ամիրապետին ներկայանալով ի՞նչ խնդրեց:
- 13) Ամիրապետը ի՞նչ առաջարկեց Վահանին:
- 14) Ինչպէ՞ս տեղի ունեցաւ Վահանին նահատակութիւնը:



ԻԱ. ԴԱՍ

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ

.....

Հայաստանեայց եկեղեցւոյ պատմութեան մէջ եղակի դէմք մըն է Սուրբ Գրիգոր Նարեկացին: Ան իր ամբողջ կեանքը նուիրած է Քրիստոսի եւ Անոր եկեղեցւոյն:

Սուրբ Գրիգոր Նարեկացին ծնած է 951 թուականին, Նարեկ գիւղին մէջ: Ձաւակն է Պոսրով Անձեւացեաց Եպիսկոպոսին: Փոքր տարիքին կը կորսնցէ իր մայրը: Հայրը իր կնոջ մահէն ետք կը դառնայ կուսակրօն եւ սպա կը ձեռնադրուի Եպիսկոպոս, Անձեւացեաց գաւառին:

Պոսրով Եպիսկոպոս իր երեք դաւակներուն կրթութիւնը կը յանձնէ իրեն ազգական՝ Անանիա Նարեկացիին, որ վանահայրն էր Նարեկայ վանքին եւ հիմնադիրը՝ Նարեկայ դպրոցին:

Գրիգոր իր երկու եղբայրներուն՝ Սահակի եւ Յովհաննէսի հետ կը ստանայ քրիստոնէական մաքուր դաստիարակութիւն մը Անանիա Նարեկացիի շուշիկն տակ:

Քսանըհինգ տարեկանին Գրիգոր կը ձեռնադրուի կուսակրօն քահանայ եւ որպէս միաբան կը մնայ Նարեկայ վանքին մէջ մինչեւ իր կեանքին վերջը:

Սուրբ Գրիգոր կը դառնայ ուսուցիչ Նարեկայ վանքին մէջ եւ կը դաստիարակէ հայ աշակերտները Քրիստոսի լոյսով: Սուրբ Գրոց ուսման մէջ անոր ունեցած հմտութիւնը շատերուն ուշադրութիւնը կը դրուէ: Անձեւացեաց Գուրգէն Արժրունի թագաւորը Գրիգորին համբաւը լսելով կ'առաջարկէ անոր պատրաստել «Երգ Երգոց»ի մեկնութիւնը: Ս. Գրիգոր յանձն կ'առնէ եւ կը կատարէ թագաւորին խնդրանքը: «Երգ Երգոց»ի մեկնութիւնը կ'ըլլայ Գրիգոր Նարեկացիին արտադրած դարձերուն առաջինը, զոր գրած է պարզ եւ հասկընալի լեզուով, երբ տակաւին մէկ տարուան կուսակրօն քահանայ ձեռնադրուած էր: Հետզհետէ կը սկսի արտադրել եւ գրել տաղեր,



Ս. Գրիգոր Նարեկացի

ճառեր եւ ներբողական գործեր, որոնք իրենց բանաստեղծական թռիչքներով մեծ հիացում կը պատճառեն ընթերցողներուն:

Ս. Գրիգոր Նարեկացին իր օրերը կ'անցընէ ճգնութիւնով, աղօթքով, ուսուցչութեամբ ու գրական աշխատութիւններով, միշտ նպատակ ունենալով հոգիներու փրկութիւնը: Գիշեր-ցերեկ կը մտածէ Աստուծոյ օրէնքին մասին եւ Աստուծմէ իրեն շնորհուած տաղանդները ի սպաս կը դնէ Անոր փառքին համար:

Իժբախտաբար կը դառնուին եկեղեցական թէ՛ աշխարհական մարդիկ, որոնք կը նախանձին Գրիգոր Նարեկացիին եւ կ'ուզեն վարկաբեկել զինք: Անոնք զրպարտութիւններով կասկածի տակ կ'առնեն անոր դաւանութիւնը Հայաստանեայց Եկեղեցւոյ ուղղափառութեան հանդէպ: Անտեղի վերագրումներ կ'ընեն ամբասիր եկեղեցականին, յայտարարելով թէ ան թո՛նարակեցիներուն մուլար աղանդին յարող

Անոնք իրենց ամբաստանութիւնները կը հասցնեն մինչեւ կա-
կոսին ահանջը: Սակայն ամբաստանողները չեն կրնար հասնիլ
յ նպատակին, քանի որ կատարուած քննութիւններն ու ստու-
ները կը հաստատեն Գրիգոր Նարեկացիին ուղղափառութիւնը:

Գրիգոր Նարեկացին Յիսուսի պատուէրին համաձայն կը ներէ
սկառակորդներուն եւ կ'աղօթէ անոնց համար:

Սուրբ Գրիգոր Նարեկացին իր կեանքի ամբողջ տելոզութեան
պէքն եղաւ հոգևով ազգատ վանական մը: Հակառակ իր ունեցած
ստեղծական բացառիկ հանճարին, հմտութեան, դիտութեան ու
տուժեան, ինքզինքը միշտ աղքատ զգաց եւ Աստուծոյ ողորմու-
կարօտ անձ մը նկատեց: Քրիստոսի օրինակին հետեւելով եղաւ
ու խոնարհ:

Ան իր վանքի մութ խցիկին մէջ դարձաւ լուսատու ջահ մը եւ
տոսի Աւետարանին լոյսովը լուսաւորեց ոչ միայն իր դարաշրջը-
ն, այլ նաեւ հետագայ դարերու սերունդները:

Սուրբ Գրիգոր Նարեկացին վախճանած կը նկատուի 1010
վանին եւ թաղուած՝ Նարեկայ վանքին մէջ:

Նարեկացիին ամենէն նշանաւոր գործը «Մատեան Ողբերգու-
ն» աղօթագիրքն է, որ մեծ ընդունելութիւն գտած է հայ ժողո-
ղի ամէն խաւերուն կողմէ: Սոյն գիրքը հետագային կոչուած է
«Նարեկ» եւ մինչեւ այսօր այդ անունով կը ճանչցուի:

«Նարեկ» աղօթամատեանը գնահատուած է ոչ միայն հայ ժո-
ղրդին կողմէ, այլ նաեւ օտարներու, որոնք զմայլած են անոր
չունչ խօսքերուն, բանաստեղծական թռիչքներուն եւ պերճ-
ին:

Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցին «Նարեկ»էն գա-
ն աղօթքներ կը կարդայ Սուրբ Պատարագի եւ Ժամերգութեանց
մէջ:

Սուրբ Գրիգոր Նարեկացիին անունը կը յիշատակուի նաեւ
բ Պատարագի ընթացքին:


Ե Ձ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Ի Ի Ն

1) Սուրբ Գրիգոր Նարեկացին հայ ժողովուրդին ժառանգ թո-
իր աղօթամատեանովն ու այլ գրութիւններովը միշտ կը փար-
կը պատուիրէ մեզի որ զԱստուած պաշտենք հոգիով ու նշմար-
իւնով:

2) Նաեւ ան կը յորդորէ որ միշտ խոստովանինք մեր մեղքերը
ու թողութիւն խնդրենք Աստուծմէ զղջումով եւ ապաշխարութեամբ,
որպէսզի կարենանք ժառանգել երկինքի արքայութիւնը:

Հ Ա Ր Ց Ո Ւ Մ Ն Ե Ր

- 1) Որո՞ւ որդին էր Ս. Գրիգոր Նարեկացին:
- 2) Ո՞ր վանքին մէջ ուսում ստացաւ Գրիգոր Նարեկացին:
- 3) Գրիգոր Նարեկացին ինչպէ՞ս կ'անցընէր իր ժամանակը:
- 4) Որո՞ւ խնդրանքով Նարեկացին գրեց «Երգ Երգոց»ի մեկ-
նութիւնը:
- 5) Ո՞րն է Գրիգոր Նարեկացիին գլուխ գործոց գիրքը:
- 6) Կարդ մը չարամիտ մարդիկ ի՞նչ տեսակ ամբաստանութիւն
ըրին Նարեկացիի մասին:
- 7) Ամբաստանողները կըրցա՞ն յաջողիլ:
- 8) Ինչպիսի՞նչ նկարագիր մը ունէր Գրիգոր Նարեկացին: Թուէ
անոր նկարագրին զլիաւոր գիծերը:



ԻՐ. ԴԱՍ

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

.....

Հայաստանեայց Եկեղեցւոյ մեծանուն եւ Աստուծոյ շնորհովը օծուն հայրապետներէն մէկն էր Ս. Ներսէս Կլայեցի Կաթողիկոսը որ կոչուեցաւ Շնորհալի՝ իր վարած սրբակրօն կենցաղին եւ ասիրութեանց համար:

Ս. Ներսէս Շնորհալի հայրապետը ծնած է 1102 թուականին Իլիւոյ Մովք դղեակին մէջ: Իր հայրն էր Ապիրատ Պահլաւունի ամը որ մեաւ կռիւի ընթացքին, երբ կը սլաշապանէր Մովք լակը թշնամիին դէմ: Ապիրատ իշխանը ունէր չորս մանչ զաւակ՝ Վասիլ, Գրիգոր, Ներսէս եւ Շահան:

Գրիգոր եւ Ներսէս իրենց հօր մահէն ետք ուսանեցան Կիլիկի Կարմիր Վանքի դպրոցին մէջ, որ նշանաւոր էր իր ուսեալ ընդհանրութեամբով: Վանքին առաջնորդն էր Ստեփանոս Մանուկ իսկոպոսը որ իր ուշադրութեան առարկայ դարձուց երկու եղբայրները, որոնք աչքի կը զարնէին իրենց ուշիմութեամբ:

1113 թուականին Գրիգոր ընտրուեցաւ Կաթողիկոս՝ Կիլիկիոյ թոս իշխանին, կղերականութեան եւ հայ ժողովուրդին փափակ հաղիւ քսան տարեկան հասակին: Հակառակ իր երիտասարդ ըրջին, Գրիգոր Պահլաւունի հայրապետը կրցաւ ձեռնհասօրէն լել կաթողիկոսական սլաշտօնը, միշտ աշակից ունենալով իր եղբոր՝ Ներսէսը:

Գրիգոր Պահլաւունի իր ձեռքովը քահանայ ձեռնադրեց Ներսէսը եւ ժամանակ մը ետք կախիկոպոսական աստիճան շնորհեց:

Երկու եղբայրներ ձեռք ձեռքի տուած, սկսան աշխատիլ իր հօտին հողերը դաստիարակութեան եւ բարօրութեան համար:

Իրենց օրով հայ ժողովուրդին մեծ մասը Հայաստանի մէջ տղ քաղաքական անպաստ պայմաններու բերումով լքած էր իր բնի բնազաւանները եւ հաստատուած էր Կիլիկիա: 1070 թուականին Կիլիկիա հաստատուած հայ իշխանները Ռուբէն իշխանին ղե-



Ս. Ներսէս Շնորհալի

կա վարութեամբ հիմնած էին փոքր իշխանապետութիւն մը որ լաւ աչքով չէր դիտուեր Բիւզանդիոնի կայսեր կողմէ եւ հայեր յաճախ ընդհարումներ կ'ունենային յոյն զօրքերու հետ: Իսկ Թորոս իշխանին օրով Կիլիկիոյ հայ իշխանապետութիւնը զօրացած եւ ընդարձակուած էր:

Ս. Ներսէս Շնորհալի իր եղբոր արտօնութեամբ ձեռք զարկաւ Հայաստանեայց Եկեղեցւոյ բարեկարգութեան: Աստուծոյ կողմէ իրեն շնորհուած բանաստեղծական իր ձիրքերը ի սպաս դրաւ եւ դրեց բաղմամբիւ երգեր, շարականներ եւ հոգեշունչ աղօթքներ, որոնցմով ձոխացուց մեր Ս. Եկեղեցիին ժամադիրքը, Շարակնոցը, Մաշտոցն ու Աղօթամատոյցը:

Ս. Ներսէս եղած է շատ գթասիրտ ու ողորմած եկեղեցական մը: Յաճախ դրամական նուէրներ ղրկած ու զանոնք գաղտնաբար նետել տուած է աղքատ ու կարօտ սուներէն ներս: Ընդունող աղքատները չեն իմացած իրենց ստացած նուէրներուն ուրիշ զալը:

Ս. Ներսէս եղած է նաեւ հաշտարար եկեղեցական մը եւ մեծ որ կատարած է Կիլիկիոյ հայ իշխաններուն միջեւ հաշտութիւն եւ ոճակցութիւն յառաջ բերելու համար:

Այդ օրերուն Յունաց Կիւ Մանուէլ կայսրը քաղաքական հեղաշրջումներէ տարուելով ուզած է միութիւն ստեղծել Հայ եւ Յոյն եղեցիներու միջեւ եւ սկսած է բանակցել Գրիգոր Պահլավունի թողիկոսին հետ: Բանակցութիւնները վարած է Ս. Ներսէս Ծնորդի: Սակայն բանակցութիւնները դրական արդիւնք մը չեն տուած, նի որ Յոյները միաւթիւնը կ'ուզէին հասկնալ Հայ եկեղեցին ինչ եւ թափաքելով: մինչ հայերը միաւթիւնը ըսելով կը հասկնային լու եկեղեցիներու միջեւ փոխադարձ գործակցութիւն՝ եղբայրան սիրոյ եւ հաւասարութեան վրայ հաստատուած:

Գրիգոր Պահլավունի եւ Ներսէս Ծնորդի հայրապետները քարեթուփիւններ ունեցան նաեւ Լատին եկեղեցիին հետ: Երկու յրապետները Յոյներու եւ Լատիններու հետ իրենց յարաբերուելներուն ընթացքին միշտ պաշտպանած են Հայ եկեղեցւոյ անխուփիւնը եւ բացատրած են անոր ուղղափառ դաւանութիւնն ու բնութեանը՝ խօսքով եւ գրիչով:

Գրիգոր Պահլավունի հայրապետը իր յառաջացեալ տարիքին անձառով Ներսէսը Կաթողիկոս օժեց 1166ին, եւ նոյն տարին ալ խճանելով Թաղուեցաւ Հոռոմկլայի մէջ, 53 տարուան պաշտօնաբութեանէ մը ետք:

Ս. Ներսէս Ծնորդի երբ կաթողիկոսական գահը բարձրուել, գրեց իր նշանաւոր «Թուղթ Ընդհանրական»ը, որուն մէջ գեղեցիկ կերպով կը բացատրէ եկեղեցականներուն եւ ժողովուրդին քրտականութիւնները առ Աստուած, ու կը խրատէ բոլորը որ ապրի քրիստոնէական սուրբ կեանք մը:

Ս. Ներսէս Ծնորդի եօթը տարի մնաց կաթողիկոսական գահ վրայ եւ ի Տէր ննջեց 1173 թուականին՝ իր ետին ձգելով բազմութիւ գրական աշխատութիւններ:

Անոր հեղինակած գործերուն մէջ նշանաւոր են՝ «Թուղթ Ընդհանրական», «Յիսուս Արդի», «Ողբ Եղեսիոյ», եւ այլն: Իր գրած գմաթիւ շարականներուն, երգերուն եւ տաղերուն եղանակներն ինք յորինած է եւ սորվեցուցած ուրիշներուն: Ունի նաեւ մեկութիւններ, նամակներ, հանելուկներ եւ այլեւայլ բանաստեղծուելներ:

Մեր եկեղեցւոյ մէջ միշտ երգուող «Յիշխումք ի Գիշերի», «Աւուս Լուսոյ», «Արարչական», «Նարաստեղծեալ», «Նայեաց

Սիրով», «Նորահաշ Պատկաւոր» եւ այլ երգերն ու շարականները իր հեղինակութիւններն են:

Կըսուի թէ հայ գինուորներ նախապէս իրենց երգած աշխարհիկ երգերուն տեղ սկսած են երգել Ծնորդալի յորինած հոգեւոր երգերը:

Ս. Ներսէս Ծնորդալի գրած աղօթքներուն մէջ նշանաւոր է «Հաւատով հոստովանիմ»ը որ Մեծ Պահլավունի շրջանին, երեկոյեան հսկումներուն կը կարդացուի: Կ'արժէ որ իւրաքանչիւր հայ իր քովը ունենայ այս փոքրիկ աղօթամատեանէն եւ յաճախ կարդայ ու նաեւ զոց սորվի զայն:


Ե Ջ Ր Ա Կ Ա Յ Ո Ի Թ Ի Ի Ն

1) Ս. Ներսէս Ծնորդալի հայրապետը ապրեցաւ վասն Յիսուսի եւ վասն հայրենաց: Իր ամբողջ ունեցած ձիւքերը տրամադրեց Աստուծոյ փառքին եւ մարդոց բարիքին համար: Աշխատեցաւ, տփնեցաւ ու Աստուծմէ ստացած իր տաղանդները գործածելով արտադրեց բազմաթիւ երկեր եւ գանձեց ժառանգ թողուց ապագայ հայ սերունդներուն:

2) Իւրաքանչիւր հայ քրիստոնէայի պարտականութիւնն է սորվիլ ու երգել Ս. Ներսէս Ծնորդալի յորինած երգերը, համահաւանը կարդալ ու սորվիլ «Հաւատով Խոստովանիմ» աղօթքը:

Հ Ա Ր Ց Ո Ի Մ Ն Ե Ր

- 1) Ո՞ր կաթողիկոսին եղբայրն էր Ս. Ներսէս Ծնորդալի:
- 2) Երկու եղբայրները ո՞ւր ստացան իրենց կրթութիւնը:
- 3) Գրիգոր Պահլավունի հայրապետը քանի՞ տարեկանին կաթողիկոս ընտրուեցաւ:
- 4) Գրիգոր Պահլավունի հայրապետին ո՞վ կ'աջակցէր:
- 5) Ներսէս Ծնորդալին որո՞ւն ձեռքով կաթողիկոս օժուած է:
- 6) Ի՞նչ տեսակ գործեր կատարած է Ներսէս Ծնորդալին:
- 7) Քանի՞ տարի գահակալեց Ս. Ներսէս Ծնորդալին:
- 8) Ո՞ր երգերը կամ շարականները գրած է Ներսէս Ծնորդալին:
- 9) Ո՞րն է իր գրած նշանաւոր աղօթքը:



Տաթեւի վանքը

Յովհաննէս Արտանեցիի մահէն ետք Գրիգոր վարդապետ կը յաջորդէ իր մեծ ուսուցիչին եւ կը դառնայ Ապրակունեաց վանքին ուսուցչապետ: Երկու տարուան շրջան մը միայն կ'անցընէ հոն, քանի որ նիւթական միջոցներու նուազումին պատճառով աշակերտներուն թիւը կը պակսի: Սակայն այդ երկու տարուան պաշտօնավարութեան ընթացքին մեծ հռչակ կը հանէ իր ուսուցումներովն ու կատարած գործերովը: Ձինք կը կոչեն Վարդապետն ամենայն հայոց, Երկրորդ Լուսաւորիչ եւ աստուածարան:

1390 թուականին Գրիգոր վարդապետ կ'անցնի Տաթեւի վանքը եւ հոն Սմբատ Օրբէլեան իշխանի ձեռնառութեամբ կը զարգացնէ Տաթեւի դպրեմանքը եւ աշակերտներուն թիւը կը սկսի բարձրանալ ու հասնիլ ութսունի: Ամէն կողմէ հոն կը հասնին ուսման ծարաւի աշակերտներ, Գրիգոր վարդապետի շունչին տակ թրծուելու եւ դառնալու մշակներ Հայաստանեայց Եկեղեցոյ համար:

Գրիգոր վարդապետ քսան տարիներ մնաց Տաթեւի վանքին մէջ եւ այնուհետեւ կ'ընդունուի Տաթեւացի: Ան իր մանկավարժական տաղանդը ի սպաս դրաւ Տաթեւի դպրեմանքը բարձր մակարդակի մը հասցնելու համար: Պատարաստեց զանազան դասազիրքեր օրուան պահանջներուն համաձայն եւ զանոնք գործադրութեան դրաւ:

Յովհաննէս Արտանեցիի եւ Գրիգոր Տաթեւացիի օրերուն Լատին կրօնաւորներ մեծ քարոզչութեան մը ձեռնարկած էին Կիլիկիոյ եւ Հայաստանի զանազան շրջաններուն մէջ: Լատին քարոզիչնե-

ԻԳ. ԴԱՍ

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՅԻ

.....

Հայաստանեայց Եկեղեցոյ լուսատու ջահերուն գեղեցկաներէն մին եղաւ Սուրբ Գրիգոր Տաթեւացին, որուն լուսոյ ճապթները դարերու ընդմէջէն կը հասնին մինչեւ մեր օրերը:

Ան իր առաքինի, աղօթանուէր եւ աշխատունակ կեանքովը օւղ հանդիսացաւ բոլորին: Նախանձխնդիր եղաւ Աստուծոյ օններուն եւ իր մայրենի Եկեղեցոյն սուրբ աւանդութիւններուն: Ինձը ուրանալով յանձն առաւ հետեւիլ Քրիստոսի: Նուիրուեցաւ ժողովուրդի հոգեւոր ու մատուր վերադարձնումին եւ դէմ կիւ Հայ Եկեղեցոյ փարախէն ներս սպրդել ուղող օտար եւ վարձհովիւներուն:

Ս. Գրիգոր Տաթեւացին ծնած է 1346 թուականին Վայոց Ձորի իր աւազանի անունն է Խութլուշահ: Մանուկ հասակէն սկսած սյլի իր ուշիմութեամբն ու բարի վարքովը: Տասնըհինգ տարեան Տփղիսի մէջ կը հանդիպի Յովհաննէս Արտանեցի հռչակաւոր բապտիստին (հետագային եպիսկոպոս) եւ կը դառնայ անոր աշակերտ: Պատանի Խութլուշահ կը ստանայ բարձր ուսում Արտանեցիի ին տակ եւ կը դառնայ մեծ աստուածարան:

Յովհաննէս Արտանեցին իր հաւատարիմ աշակերտը կը ձեռնէ սարկուազ եւ ապա երբ անոր հետ Երուսաղէմ կ'երթայ, բ քաղաքին մէջ կը ձեռնադրէ կուսակրօն քահանայ 1373 թուան, եւ կը կոչէ Գրիգոր: Իսկ Երուսաղէմէ վերադարձին, Երզնէ մէջ Գրիգորին կը շնորհէ վարդապետական դաւազան:

Գրիգոր վարդապետ հաւատարմօրէն կը ծառայէ Հայաստան-Առաքելական Սուրբ Եկեղեցոյն եւ իր հմտութեամբը կը դառնայ դարաշրջանի մեծագոյն գիտնականներէն մին:

Յովհաննէս Արտանեցին իր վախճանումէն առաջ ծայրագուին կը շնորհէ Գրիգոր վարդապետին 1387ին:

րուն յարած էին կարգ մը հայեր եւ անոնց հետ կազմած էին միաբանութիւն մը Միարարներ կամ Ունիթոռներ անունով: Ունիթոռները իրենց քարոզութիւններովը կը ջանային հայ զանգուածները հեռացնել իրենց Մայրենի Եկեղեցիէն եւ զանոնք ենթարկել Հոռոմի պապի գերիշխանութեան, ու այս ձեւով պատճառ կը դառնային երկպառակութիւններու:

Հայաստանի վանքերուն վարդապետները, որոնք կը կոչուէին Արեւելեան Վարդապետներ, ծառայան Ունիթոռներու դէմ ու սկսան պայքարիլ եւ զըռչացնել իրենց հօտը: Սակայն Լատիններու եւ Ունիթոռներու դէմ ամենէն լաւ ծրարուած եւ կազմակերպուած պայքարը տարին Յովհաննէս Որոտնեցին եւ Գրիգոր Տաթևացին: Անոնք թէ խօսքով եւ թէ գրիչով մեծ պայքար մը շղթայակերծեցին Ունիթոռներու դէմ, եւ անոնց գործելակերպը իւրացնելով հրապարակ իջան՝ ամէն կողմ քարոզութիւններ կատարելով ու հայ ժողովուրդը լուսաւորելով Աւետարանի լոյսով: Անոնց անդու աշխատանքն ու եռանդուն գործունէութիւնը լաւ արդիւնք տուին եւ Ունիթոռներուն ծրագիրները ձախողեցան:

Գրիգոր Տաթևացին իր աշակերտները քրիստոնէական ուղղափառ հաւատքի մէջ դաստիարակելու մտօք գրեց իր հռչակաւոր «Հարցմանց Գիրք»ը, որ պատրաստած է Լատիններու գրած գիրքերուն մեթոտով, ուր հարցում-պատասխանով կը բացատրուին Հայաստանեայց Եկեղեցւոյ աստուածաբանութիւնն ու ուղղափառ վարդապետութիւնը:

1409 թուականին Գրիգոր Տաթևացին քաղաքական խառնակ անցուղարձերու պատճառով ստիպուեցաւ հեռանալ Տաթևի վանքէն եւ հաստատուիլ Արճէշի Մեծով վանքը ու տարի մը հոն մնալի ետք անցաւ Այրարատեան դաւառը՝ մնալով Սաղմոսավանքին մէջ:

Գրիգոր Տաթևացին ուր որ զնաց, աշակերտներ հաւաքուեցան շուրջը՝ իր ունեցած հմտութիւնէն եւ պաշարէն օգտուելու համար: Ի վերջոյ օրին մէկը իր յովնատանջ մարմինը չթոյլատրեց իրեն շարունակել իր ուսումնական գործը, ու հիւանդացաւ: Իր աշակերտները գինք վերստին տարին Տաթևի վանքը: Յոյնատանջ Սուրբը 1410 թուականին իր աչքերը փակեց՝ փոխադրուելու համար դէպի Հանդերձալ կեանք: Վախճանումէն ութ օր առաջ իր յառաջացած աշակերտներուն շարհած էր Մայրապոյն Վարդապետութեան դաւապան:

Սուրբին մարմինը ամփոփուեցաւ Տաթևի վանքին մէջ:

Ս. Գրիգոր Տաթևացին իր ետին ձգեց բաղմաթիւ զրական գործեր, որոնց մէջ նշանաւոր են «Հարցմանց Գիրք»ը, «Ամարան ու Զմեբան» քարոզագիրքերը, Պօղոս Առաքեալի տասնըջորս թուղթերուն մեկնութիւնը, «Լուծմունք Աւետարանի Մատթէոսի», եւայլն եւայլն:

Ս. Գրիգոր Տաթևացին հաստատած է վեղարի օրհնութեան եւ վարդապետական դաւապանի եւ ծայրագունութեան աստիճաններու տուչութեանց յատուկ կանոններ եւ այդ առիթներով գրած է նաեւ աստուածային ներշնչումով օժուկ աղօթքներ:

Ս. Գրիգոր Տաթևացիին անունը կը յիշատակուի Ս. Պատարագի ընթացքին Յովհաննէս Որոտնեցիէն կողմ:

Ե Ձ Ր Ա Կ Ա Յ Ո Ի Թ Ի Ի Ն

1) Սուրբ Գրիգոր Տաթևացին եղաւ առաքինի եկեղեցական, բազմախումբ վարդապետ, անձնուէր ուսուցիչ, բազմաշխատ մտաւորական, բարի հովիւ, բարեկարգիչ հայր, Հայաստանեայց Եկեղեցւոյ անկախութեան ջերմ պաշտպան եւ հայրենի աւանդութիւններու նախանձախնդիր հերոս:

2) Մինչեւ իր մահը մարտնչեցաւ օտար ոտնձգութիւններու դէմ, որոնք կը սպառնային քանդել Հայաստանեայց Եկեղեցւոյ դարաւոր աւանդութիւնները:

3) Գրիգոր Տաթևացին մտասերեռումն էր՝ հայ ժողովուրդը լուսաւորել Աւետարանի լոյսով ու թոյլ չտալ օտար վարձկաններուն որ ինքնակոչ հովիւ դառնալով յափշտակէին հայ հաւատացեալները իրենց մայրենի եկեղեցիի փառախէն:

4) Հայաստանեայց Եկեղեցւոյ գաւակները Ս. Գրիգոր Տաթևացիի օրինակին հետեւելով նախանձախնդիր ըլլալու են Աստուծոյ օրհնութեան եւ իրենց մայրենի եկեղեցւոյ սուրբ աւանդութիւններուն:

Հ Ա Ր Յ Ո Ի Մ Ն Ե Ր

1) Որո՞ւ շունչին տակ դաստիարակուեցաւ Ս. Գրիգոր Տաթևացին:

- 2) Գրիգոր Տաթևացին որո՞ւ ձեռքէն ստացաւ իր եկեղեցական եճանները :
- 3) Ո՞վ յաջորդեց Յովհաննէս Արտանեցիին :
- 4) Գրիգոր Տաթևացին քանի՞ տարի պաշտօնավարեց Ապրա-տաց վանքին մէջ :
- 5) Ապրակունեաց վանքէն ո՞ւր փոխադրուեցաւ :
- 6) Քանի՞ տարի պաշտօնավարեց Տաթևի վանքին մէջ :
- 7) Տաթևի վանքը ինչպիսի՞ մակարդակի մը հասցուց :
- 8) Այդ օրերուն լատին կրօնաւորները ի՞նչ կ'ընէին Կիլիկիոյ աշատանի մէջ :
- 9) Որո՞նք էին Ունիթոսները :
- 10) Յովհաննէս Արտանեցին եւ Գրիգոր Տաթևացին ի՞նչ ըրին թոռներու դէմ :
- 11) Ունիթոսներու դէմ մղուած պայքարը ի՞նչ արդիւնք տուաւ :
- 12) Ո՞ւր թաղուեցաւ Գրիգոր Տաթևացին :



ԻԴ՝ ԴԱՍ

ՂԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՆՈՒԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՒՆԵՐԸ

.....

I. — ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ


Հայաստանեայց Եկեղեցին հիմնուեցաւ թաղէոս եւ Բարթողիմէոս առաքեալներու ձեռքով եւ ուռճացաւ ու ծաղկեցաւ Ս. Գրիգոր Լուսաւորչի եւ անոր յաջորդող Հայրապետներուն ջանքերով : Ս. Գրիգոր Լուսաւորիչ իր Հայրապետական Աթոռը հաստատեց Ս. Էջմիածնի մէջ :

Հետագայ դարերու ընթացքին քաղաքական պայմաններու բերումով Հայոց Կաթողիկոսական Աթոռը փոխադրուեցաւ Դուին, Աղթամար, Արզինա, Անի, Ծամնդաւ, Հոռոկլայ, եւայլն : Իսկ Ռուբինեանց Թաղաւորութեան ժամանակ վերջնականապէս հաստատուեցաւ Սիս քաղաքին մէջ եւ հոն մնաց մինչեւ 1441 թուականը :

Ռուբինեանց Թաղաւորութեան անկումէն վերջ, պահակալող Հայրապետներէն ոմանք չկրցան հայ եկեղեցին կառավարել քրիստոնէական եւ աղգային ուղիով ու պատճառ դարձան անհաճոյ դէպքերու :

Այդ օրերուն Կիլիկիոյ հայութիւնը կ'ապրէր Եղիպտոսի սուլթաններու տիրապետութեան տակ : Ճրանչիսկեան եւ Դոմինիկեան կոչուած լատին միաբանութեանց կրօնաւորները մեծ քարոզութիւններու ձեռնարկած էին՝ Հայ Եկեղեցին Հռոմի պապերու դերիշխանութեան ենթարկելու համար : Օրուան կաթողիկոսները Հայ Եկեղեցոյ ուղղափառ վարդապետութիւնը պահելու եւ պահպանելու նախանձաւորութիւնը չունէին : Մէկ խօսքով հայ եկեղեցին վտանգի առջեւ կը դանուէր :

Անգին՝ Հայաստանի մէջ Յովհաննէս Արտանեցիի, Մաղաքիա Ղրիմեցիի եւ Գրիգոր Տաթևացիի ջանքերով յառաջ եկած էր Արեւելեան Վարդապետներու փաղանդ մը որ բուն պայքար կը մղէր Ունիթոսներու դէմ :



Ս. Էջմիածինի Մայր Տաճարը


Գրիգոր Տաթևացիի աշակերտներէն թովմաս Մեծոփեցի վարդապետը Արեւելեան Վարդապետները համոզեց որ Հայոց Կաթողիկոսական Աթոռը Սիւնի Էջմիածին փոխադրուի, որպէսզի ան զերծ ըլլայ Հատիններու կողմէ սպառնացող վտանգէն: Կիլիկիոյ մէջ պաշտօնավարող կարգ մը եպիսկոպոսներ ալ համամիտ դռնուեցան Աթոռի փոխադրութեան:

Օրուան Գրիգոր Մուսարէզեան Կաթողիկոսը չյօժարեցաւ Սիւնի Էջմիածին փոխադրուիլ, անգլուխ չձգելու համար Կիլիկիոյ հայութիւնը սակայն հաւանութիւն յայտնեց որ ուրիշ մէկը Կաթողիկոս ընտրուի Էջմիածինի մէջ:

1441 թուին արդալին մեծ ժողով մը դումարուեցաւ, որ պաշտօնապէս հաստատեց եւ հռչակեց Հայոց Կաթողիկոսական Աթոռին Էջմիածին փոխադրութիւնը եւ ընտրեց նոր կաթողիկոս մը՝ յանձին Կիրակոս Վիրապեցիի որ սրբակրօն վարդապետ մըն էր:

Կիրակոս Վիրապեցի Կաթողիկոսը իր անդրանիկ կոնզակովը սղջոյնի խօսք ուղղեց Սիսի Գրիգոր Կաթողիկոսին. իսկ Աղթամարի կաթողիկոսութիւնն ալ բանադրանքէ արձակեց:

Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը այդ թուականէն մինչեւ այսօր կը մնայ Էջմիածինի մէջ:



Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարը

2.— ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ

Գրիգոր Մուսարէզեան Կաթողիկոսի մահէն հինգ տարի վերջ, Կիլիկիոյ հայերը Էջմիածինի Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան մէջ պատահող իռովայոյղ զէպքերը պատճառ բռնելով, 1447ին իրենց համար ընտրեցին նոր կաթողիկոս մը՝ յանձին Կարապետ Եպիսկոպոս Եւզոկիացիի, որ վաւերացուեցաւ Եփեսոսի սուլթանին կողմէ:

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը Սիսի մէջ շարունակուեցաւ մինչեւ 1915 թուականը. իսկ Կիլիկիոյ տեղահանութենէն վերջ 1930ին հաստատուեցաւ Լիբանանի Անթիլիաս գիւղաքաղաքին մէջ:

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան գոյութիւնը օդատակար եղաւ հայ ժողովուրդին համար, թէ՛ անցեալ եւ թէ՛ ներկայ դարերու ընթացքին:



Աղթամարի Ս. Խաչ Եկեղեցին

3.— ԱՂԹԱՄԱՐԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ

1113ին երբ Գրիգոր Պահլավունի Հայրապետը, հազիւ քսան տակնին Կաթողիկոսական դահը բարձրացաւ, Աղթամարի Դաւիթ յոռնիկեան եպիսկոպոսը Գրիգորին անչափահաս տարիքը պատճառ ընելով, անոր դէմ դիմեց րոնեց եւ ինքզինքը կաթողիկոս հռչակեց 114ին:

Աղթամարի Կաթողիկոսութիւնը իր ծագման օրէն բանադրանքի տակ առնուեցաւ. սակայն հետագային Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան կողմէ ճանչցուեցաւ որպէս մամակի կաթողիկոսութիւն:

Աղթամարի կաթողիկոսութիւնը վերջ դտաւ 1895ին:

4.— ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՊԱՏՐԻԱՐԲՈՒԹԻՒՆ

Առաքելներու ժամանակ Երուսաղէմի Եկեղեցիին գլուխն էր ակորոս Տեառնեղբայր: Հետագային անոր յաջորդները կոչուեցան

Պատրիարք (հայրապետ) Երուսաղէմի: Մինչև Քաղկեդոնի ժողովը Երուսաղէմի բոլոր ջրիստոնեաները առանց ազգի ու ցեղի խարուքեան ենթակայ էին օրուան պատրիարքի հոգեւոր իշխանութեան:

Առաջին գորէն սկսեալ հայ ջրիստոնեաներ Երուսաղէմ դադարեալ եւ հոն հաստատուած են: Ժամանակի ընթացքին հայկական դադուք մը կազմուած է եւ հայերը ունեցած են վանքեր ու եկեղեցիներ: Սկիզբէն ի վեր հայոց ձեռքը եղած է Յակորոս Տեառնեղբայր տունը, ուր թաղուած էր Ձերեղիստի որդի՝ Յակորոս Առաքելին պուխը, զոր կորել տուած էր Հերովդէս Ագրիպպաս: Այլ վայրին վրայ մատուց մը շինել տուած էր Արգար Թաղաւորին մայրը՝ Հեղինէ թաղուհին:

Քաղկեդոնի ժողովին յաջորդող ժամանակաշրջաններուն օրուան յոյն պատրիարքները սկսած են ներդրելու տալ Հայ, Ասորի, Ղպտի եւ Եթէովպացի պապութներուն, որոնք չէին ընդուներ Քաղկեդոնի ժողովին սրշումները: Հայ դադուքը այս կացութեան առջև կը ստիպուի ձերբազատուիլ Յոյներէն եւ իրեն համար կ'ընտրէ նոր պատրիարք մը՝ յանձին Արրահամ եպիսկոպոսին: Հայոց կը միանան Ասորիներ, Ղպտիներ եւ Եթէովպացիներ:

Երբ Արարները Երուսաղէմի կը տիրեն, Օմար Սալիֆան կը ճանչնայ Հայոց իրաւունքները եւ պաշտօնական պիրով մը կը հաստատէ Հայոց Պատրիարքութիւնը:

5.— 4. ՊՈԼՍՈՅ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԲՈՒԹԻՒՆ

Հին ժամանակներէ ի վեր Պոլսոյ մէջ եղած է հայկական դադուք մը: Ճաթիհ Սուլթան Մէհմէտ 1453ին երբ Պոլիսը գրաւեց, ուզեց սիրաշահիլ հայերը. ուստի քաջալերեց զանոնք որ ամէն կողմերէ հոն հաւաքուին: Իսկ Պոլսոյ գրաւումէն ութ տարի ետք՝ 1461ին Պրուսայի հայոց առաջնորդ՝ Յովակիմ եպիսկոպոսին շնորհեց Պոլսոյ Պատրիարք տիտղոսը:

Մեծի Տանն Կիլիկիոյ եւ Աղթամարի կաթողիկոսութեանց սահմաններէն դուրս ապրող թուրքիոյ բոլոր հայերը, եւ նաեւ Պալքանեան երկիրներու մէջ բնակողները՝ Պոլսոյ հայոց պատրիարքութեան հոգեւոր իրաւասութեան ներքեւ կը գտնուէին: Իսկ Օսմանեան կայսրութեան մէջ ապրող բոլոր հայերը ենթակայ էին անոր վարչական իշխանութեան:

1915ի տեղահանութեան պատճառով Կոստանդնուպոլսոյ հա-

ց պատրիարքութիւնը կորսնցուցած է իր նախկին դերն ու հմայքը ներկայիս սահմանափակուած է միայն Պոլսոյ շրջանակին մէջ:

Ե Զ Ր Ա Կ Ա Յ Ո Ի Թ Ի Ի Ն

1) Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին իր նուիրատական չորս Աթոռներով կը կազմէ մէկ ամբողջութիւն:

2) Իրաւանչիւր հայուն պարտականութիւնն է աղօթել հայ եղեցոյ նուիրապետական Աթոռներու բարգաւաճումին համար, հայցել Աստուծմէ որ անոնց գահակալներուն շնորհէ ոյժ, կարողութիւն եւ իմաստութիւն, որպէսզի անոնք կարեւան աշխատիլ ինց հօտին հոգեւոր փրկութեան եւ բարօրութեան համար:

Հ Ա Ր Յ Ո Ի Մ Ն Ե Ր

1) Ո՞ր առաքեալներու միջոցաւ հիմնուեցաւ Հայաստանեայց Եկեղեցին:

2) Ս. Գրիգոր Լուսաւորիչ ո՞ւր հաստատեց իր Հայրապետան Աթոռը:

3) Ժամանակի ընթացքին ո՞ր վայրերու մէջ փոխադրուած է սոյն Հայրապետական Աթոռը:

4) Ռուբինեանց թողաւորութեան ատեն Հայրապետական Աթոռը վերջնականապէս ո՞ւր հաստատուեցաւ:

5) Ո՞ր թուականին Սիսէն էջմիածին փոխադրուեցաւ Հայոց Աթոռիկոսական Աթոռը:

6) Ինչպէ՞ս ծագում առաւ Մեծի Տանն Կիլիկոյ Կաթողիկոսութիւնը:

7) Ինչպէ՞ս սկսաւ Աղթամարի Կաթողիկոսութիւնը:

8) Ինչպէ՞ս ծագում առաւ Երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւնը:

9) Ինչպէ՞ս ծագում առաւ Կոստանդնուպոլսոյ Հայոց Ատրիարքութիւնը:

ԻԵ. ԴԱՍ

Ս. ՄՈՎՍԷՍ Գ. ՏԱԹԵԻԱՑԻ ԶԱՅՐԱՊԵՏ

.....

Հայոց Կաթողիկոսական Աթոռը Սիսէն Ս. էջմիածին փոխադրուելէ ետք, Հայաստանեայց Եկեղեցին ակնկալուած փայլուն շրջանը չբոլորեց:

Կարգ մը աթոռամուկ եկեղեցականներ սկսան իրարու ձեռքէ խլել Կաթողիկոսական Աթոռը՝ անադնիւ միջոցներու գիմելով: Ոտնակոխ եղան մեր սրբութիւնները տիրապետող այլազգի իշխաններու աչքին առջեւ: Ժողովուրդն ալ բարի հովիւներ չունենալուն ուժացաւ Աստուծոյ օրէնքներէն:

ԺԶ. դարուն վերջերը եւ ժէ. դարուն սկիզբները Հայաստանի ժողովուրդին կրօնաբարոյական անկումը իր պաղաթնակէտին հասած էր: Պրուան եկեղեցական դասուն մեծ մասը մոռցած էր ժողովուրդը հովուելու իր սրբազան պարտականութիւնը: Վանքերը ամայացած էին անպատասխանատու հովիւներու անհոգութեանց եւ շուայութեանց պատճառով: Գիւղերու մէջ ժամասացութիւնը գրեթէ դադարած էր: Նիւթապաշտութիւնը իր աւերները կը դորձեր հողիներէն ներս:

Այս բոլոր մեղքերուն պատճառով, հայոց աշխարհը հանգրտութիւն չունէր: Հին Իսրայէլի նման հայ ժողովուրդն ալ կը հեծէր այլազգիներու ծանր լուծին տակ: Մեր երկիրը պատերազմի թատերափայլ դարձած էր Պարսիկներու եւ Օսմանցիներու միջեւ: Սկսած էին Շահ Աբբասի արշաւանքները եւ հայ ժողովուրդը կ'ընկճուէր երկու թշնամի բանակներու ճնշումներուն տակ:

Այդ օրերուն, երբ մեր երկրին հօրիզոնները մթագնած կ'երեւէին, յանկարծ հայոց աշխարհի երկնակամարին վերեւ սկսան պլպլել լուսատու աստղեր՝ Աւետարանի լոյսով վերտաին ողողելու համար հայ հոգիները: Գոմուեցան խոնարհ ու հեղ եկեղեցականներ, որոնք զարձան լուսատու ջահեր իրենց անկիւններուն մէջ եւ լուսա-

րեցին իրենց շրջապատը ու արձարձեցին Քրիստոսի անէջ կրակը այ ժողովրդական խուերէն ներս :

Այս լուսատու աստղերու հոյին մէջ նշանաւոր հանդիսացաւ Մովսէս Գ. Տաթևացի Հայրապետը իր սրբակրօն, գոհարերուող ողորմած կեանքովն ու աշխատանքովը :

Ս. Մովսէս Տաթևացին ծնած է Սիւնեաց դաւառի Սոտանան իւղին մէջ : Նախնական կրթութիւնը ստացած է իր դաւառին մէջ : շակերտած է նաև Սրապիոն աթոռակից Կաթողիկոսին : Մանուկ ստակէն բոցաւիկ սէր ունեցած է եկեղեցւոյ հանդէպ եւ 15 տարեանին ձեռնադրուած է կուսակրօն քահանայ : Այցելած է Երուսաղէմ ժառանգած է Սրբոց Յակոբեանց վանքին մէջ : Հոն սորված է մեղամոմը սպիտակացնելու արհեստը : Ուսումնասիրած է Երուսաղէմի ոճաւորական վանքերը :

Վարդապետական դաւադան ստանալէ ետք սկսած է շրջապայել սնազան տեղեր եւ քարոզել, միշտ արժանանալով ժողովրդական աւերու համակրանքին :

Ի վերջոյ Մովսէս վարդապետ վերադարձաւ իր հայրենի գատար եւ հաստատուեցաւ Սիւնեաց Անապատը (Տաթևի վանք) որ լած էր կրթական մեծ օրրան մը Ս. Յովհան Որոտնեցիի եւ Ս. Գրիոր Տաթևացիի օրերուն :

Այդ օրերուն Սիւնեաց Անապատին մէջ նոր միաբանութեան մը կմը դրած էր Սարգիս եպիսկոպոս՝ Տէր Կիրակոսի ընկերակցութեամբ, նպատակ ունենալով՝ ուսեալ եւ սրբակրօն եկեղեցականներու ատրաստութիւնը :

Մովսէս վարդապետին ժամանումը եղաւ օրհնարեր Սիւնեաց նապատին համար : Ան դարձաւ Սարգիս եպիսկոպոսին աջ բաղուկը : հաստատեց վանական խոտակրօն նոր կեանք մը, յար եւ նման ուսաղէմի վանքերուն : Իր նպատակներէն մէկն էր շրջել Հայասանի դիւղերն ու քաղաքները եւ քարոզել Սուրբ Աւետարանը :

Արդէն իրմէ առաջ Սիւնեաց Անապատի միաբաններէն՝ սրբաւուն եւ քրձաղբեստ Մովսէս Պօղոս վարդապետը սկսած էր նման սրողութիւններու, եւ դանազան վայրերու մէջ հիմնած էր եկեղեցիներ ու դպրոցներ : Մովսէս վարդապետին քարոզութիւնները իրենց տխրեցը սկսան տալ : Հայ ժողովուրդը խանդավառուած էր այս փու առաջինի եկեղեցականներու խօսքերէն ու շատեր կը վարէին իստոնկավայել կեանք մը :

Սիւնեաց Անապատը սկսած էր ծաղկիլ ու փայլիլ : Ամէն կողմէ սման ծարաւի անձեր հոն կը փութային : Հայ ժողովուրդը ի տես

այս ուրախալի երեւոյթին չէր զլանար իր նիւթական օժանդակութիւնը եւ կը քաջալերէր :

Սիւնեաց Անապատին մէջ ուսում ստացող եկեղեցականներէն շատեր հետադային դանազան տեղերու մէջ հիմնեցին նոյնանման վանքեր եւ հասցուցին մշակներ հայ եկեղեցւոյ համար :

Գժբախտաբար Պօղոս եւ Մովսէս վարդապետները ունեցան իրենց հակառակորդները, սրոնց գլխաւորն էր օրուան Դաւիթ Հայրապետին Աթոռակից Մելքիսեղեկ Կաթողիկոսը :

Երկու վարդապետներուն քարոզութիւնները կեցնելու համար Մելքիսեղեկ ամէն միջոցի դիմեց, եւ երբ չյաջողեցաւ, պետական միջամտութիւնով արգելք եղաւ Պօղոս վարդապետին եւ բռնադատեց զայն որ չըջալարէր եւ մնար Սիւնեաց Անապատին մէջ : Սակայն Մելքիսեղեկ չկրցաւ լռեցնել Մովսէսը եւ չկարենալով ուղղակի արգելք ըլլալ անոր, սկսաւ զրպարտութիւններ ընել եւ նենդութիւններ մտածել :

Մովսէս վարդապետ Մելքիսեղեկի նենդութիւններէն զղուելով սրտեց Կարին երթալ եւ հոն աղատօրէն աշխատիլ ու քարոզել : Սակայն ճամբու ընթացքին երբ Երեւան հասաւ, տեղւոյն Ամիրզունա իշխանը համոզեց զինք որ չհեռանար եւ մնար Երեւանի մէջ՝ խոստանալով Մովսէսին տրամադրել քաղաքին Ս. Անանիա եկեղեցին սրպէսի հոն դործէր :

Մովսէս վարդապետ Ամիրզունա իշխանին բաղձանքին ընդառաջելով մնաց Երեւանի մէջ եւ սկսաւ շէնցնել ու պայծառացնել Ս. Անանիա եկեղեցին, այսպէս որ մարդիկ կը խուժէին հոն կատարուող գեղեցիկ արարողութիւններուն ներկայ ըլլալու եւ հոգեւորնչ քարոզներ մտիկ ընելու համար :

Մովսէս վարդապետ կազմակերպեց միաբանութիւնը եւ կարգի ու կանոնի մտցուց ամէն բան : Վանքին համբար տարածուեցաւ ամէն կողմ եւ հեռաւոր երկիրներէն եկող հայ վաճառականներ իրենց ճամբուն վրայ կ'այցելէին Ս. Անանիա վանքը ու կատարուած աշխատանքները տեսնելով նուէրներ կու տային անոր պայծառացման համար :

Մելքիսեղեկ Կաթողիկոս Մովսէսին յաջողութիւնը տեսնելով ուղեց օգտուել անոր ժողովրդականութենէն : Ուստի Ս. Անանիայի վանքը երթալով Մովսէսը եպիսկոպոս ձեռնադրեց եւ ապա անոր հետ միասին միւլտիօրհնէք կատարեց :

Ժամանակ մը ետք, Շահ Արբասի պալատականներէն Բայինդուր Բէկ երբ Ս. Անանիայի վանքը այցելեց, Մովսէս եպիսկոպոս

անոր նուիրեց իր շինած ճերմակ մոմերէն: Բայինդուր Բէկը հիացաւ մոմերուն սպիտակութեան վրայ, ու երբ Պարսկաստան դնաց, իր կարդին զանոնք նուիրեց Շահ Աբրասին: Շահն ալ զմայլեցաւ մոմերու սպիտակութեան վրայ, որ իրենց կողմերուն անծանօթ էր, ու երբ հասկցաւ թէ Մովսէս եպիսկոպոսին ձեռքէն ելած են անոնք, լայն Պարսկաստան հրաւիրեց, որովչսդի մեղրամոմը սպիտակացնելու արհեստը սորվեցնէր իր մարդոց:

Մովսէս եպիսկոպոս կատարեց Շահ Աբրասի փափաքը: Շահը Մովսէս եպիսկոպոսի ծառայութենէն շատ դո՛ւ մնալով ուզեց զայն վարձատրել եւ Պարսկաստանի ակունուոր հայերու թելադրութեամբ հրովարտակով մը անոր շնորհեց Ս. Էջմիածնի վանքին լուսարարապետութիւնը:

Մովսէս եպիսկոպոսի լուսարարապետութիւնով Ս. Էջմիածնի վանքին համար բացուեցաւ յառաջգիւմութեան նոր շրջան մը: Նախքան իր պաշտօնավարութիւնը Էջմիածնի վանքը կը ներկայացնէր տխուր պատկեր մը: Վանքը ամբողջութեամբ կողոպտուած էր. ոչ գիրքեր կային եւ ոչ ալ եկեղեցական սպասներ: Եկեղեցւոյ շէնքը քայքայուած էր եւ թռչուններու լոյն դարձած, ու ամէն կողմ անխընամ ձուռելով աղտոտութիւն կը տիրէր: Ոչ ժամասացութիւն կը կատարուէր եւ ոչ ալ պատարագ կը մատուցուէր:

Նոր լուսարարապետին առաջին գործը եղաւ մաքրել ամէն կողմ եւ կարգ կանոն դնել: Ժողովուրդը Մովսէս եպիսկոպոսին ետանդն ու աշխատանքը տեսնելով՝ սկսաւ օժանդակել անոր: Սակայն վանքը շատ ծանրաբեռնուած էր պարտքերով ու պարսից շահին տրուելիք մեծագումար հարկով: Մովսէս եպիսկոպոս Պարսկաստան դնաց, ներկայացաւ Շահ Աբրասի յաջորդ՝ Շահ Սէյֆիին, ու հայ մեծամեծները իրեն օգնական ունենալով արքայական հրովարտակով մը ջնջել տուաւ Էջմիածնի վանքին վրայ ծանրացող տարեկան մեծագումար հարկը:

Մովսէս եպիսկոպոսին անկեղծ նուիրումն ու ձեռնարկած բարեկարգութիւնները խանդավառեցին հայ մեծամեծները եւ անոր մէջ տեսան մեծ առաջնորդի մը յատկութիւնները: Ուստի Շահ Սէյֆիին դիմելով անկէ արտօնութիւն ստացան զայն Կաթողիկոս օծելու: 1629 Յունուար 13ին, տասներկու եպիսկոպոսներ զինք օծեցին Կաթողիկոս, ի մեծ ուրախութիւն համայն հայ ազգին:

Մովսէս Գ. Տաթևացի Հայրապետը արդէն իր լուսարարապետութեան օրերուն ձեռնարկած էր Ս. Էջմիածնի վանքին նիւթական եւ բարոյական նորոգութիւններուն: Հայրապետական դահը բարձ-

րանալէն ետքն ալ նոյն թափով շարունակեց ծառայել ի փառս Աստուծոյ եւ ի պայծառութիւն հայ եկեղեցւոյ: Ան կատարեց հետեւեալ գլխաւոր գործերը:

- 1) Ջնջել տուաւ Ս. Էջմիածնի վանքին վրայ ծանրացող տարեկան հարկն ու պարտքերը:
- 2) Նորոգել տուաւ Ս. Էջմիածնի տաճարը, շինել տուաւ վանքին պարիսպը, վեհարանը, հիւրանոցը, միաբանութեան սենեակները, եւայլն:
- 3) Վանքին պարտքերը վճարելով աղատեց պահ դրուած սպասները եւ նորեր ալ գնեց:
- 4) Կազմակերպեց եւ բարեկարգեց վանական կեանքը:
- 5) Ամէն կողմ հաստատեց վանքեր եւ դպրոցներ, ուր հայ աշակերտներ կը ստանային քրիստոնէական կրթութիւն, որոնցմէ շատեր հետագային դարձան ժիր մշակներ Հայաստանեայց Եկեղեցւոյ համար:

Ս. Մովսէս Տաթևացի Հայրապետին դահակալութեամբ վերջ դտան անցեալի ղեղձումներն ու անկարգութիւնները եւ լուսաւոր էջ մը բացուեցաւ հայ ժողովուրդի հոգեւոր վերելքին համար:

Ս. Մովսէս Տաթևացին երկար ատեն չմնաց Կաթողիկոսական Աթոռին վրայ: Երեքուկէս տարուան գահակալութենէ մը ետք փակեց իր մարմնաւոր աչքերը ու երկրէ երկինք փոխադրուեցաւ, խոր սուղի մաննելով համայն հայութիւնը:

Իրեն յաջորդեց իր աշակերտներէն Փիլիպպոս Աղրակեցին, որ նոյնպէս եղաւ փայլուն գէմք մը հայ եկեղեցւոյ պատմութեան մէջ:

Ս. Մովսէս Տաթևացիին համար վկայուած էր՝ մաքրակեցալ եւ սրբամուռն, երկայնամիտ եւ ողորմած, եւ թէ զօրաւոր էր ատուածաշնորհ՝ վարդապետութեամբ եւ քաղցր քարոզութեամբ, որով զիւէր հոգիներ շահիլ ուղղելով ի քանապարհս արդարութեան:

Ս. Մովսէս Տաթևացի Հայրապետին անունը կը յիշատակուի Ս. Պատարագի ընթացքին Ս. Գրիգոր Տաթևացիի անունին հետ:

Ե Զ Բ Ա Կ Ա Ց Ո Ի Թ Ի Ի Ն

1) Աստուած իր հաւատարիմ ծառաներուն կը շնորհէ իմաստութիւն եւ հանգար: Նոյն ատեն կ'օգնէ անոնց եւ միջոցներ կը ստեղծէ, որպէսզի անոնք գործադրեն իրենց բարի ծրագիրները:

2) Ս. Մովսէս Տաթևացիի եղաւ Աստուծոյ հաւատարիմ ծա-

յ մը՝ եւ իրեն համար իտեալ ընտրեց իր ազգին կրօնարարոյական ատիրակալութիւնն ու վերելքը: Աստուած անոր բարի տրամադրու-ւմները տեսնելով օգնեց իրեն եւ շնորհիք գտնել տուաւ հայ մեծա-ծներունի եւ Պարսկաստանի Շահին անջեւ:

3) Ս. Մովսէս Տաթևացին օգտուեցաւ իրեն շնորհուած ա-թերէին եւ գանձիք ի սպաս դրաւ իր ժողովուրդի բարօրութեան մար:

Հ Ա Ր Յ Ո Ւ Մ Ն Ե Ր

- 1) Ս. Մովսէս Տաթևացին քանի՞ տարեկանին ձեռնադրուած կուսակիցն քահանայ:
- 2) Մովսէս Տաթևացին Երուսաղէմի մէջ ի՞նչ սորվեցաւ:
- 3) Հայրենիք վերադարձին ո՞ր վանքը պնայ:
- 4) Մովսէս վարդապետին քարոզութիւնները ի՞նչ արդիւնք է տային:
- 5) Մովսէս Տաթևացին ինչո՞ւ համար կ'ուզէր Կարին երթալ:
- 6) Երեւանի ո՞ր եկեղեցիին մէջ հաստատուեցաւ Մովսէս:
- 7) Շահ Արքան ինչո՞ւ համար էջմիածնի լուսարարապետու-ւնը շնորհեց Մովսէս եպիսկոպոսին:
- 8) Մովսէս Տաթևացին լուսարարապետ կարգուելէ ետք ի՞նչ նի ձեռնարկեց:
- 9) Մովսէս Տաթևացիի լուսարարապետութենէն առաջ ի՞նչ հակի մէջ էր Ս. էջմիածնի վանքը:
- 10) Ի՞նչ դործեր կատարեց Ս. էջմիածնի վանքէն ներս:



ԻԶ. ԳԱՍ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԿՈՒՈՏ ԵՒ ԳՐԻԳՈՐ ՇՂԹԱՅԱԿԻՐ

.....

ՓԸ. դարու սկիզբը Երուսաղէմի հայոց պատրիարքութիւնը մատնուած էր նիւթական անձուկ վիճակի մը եւ կը կքէր պարտքերու տակ: Միաբանութիւնը կ'ապրէր յետին չքաւորութեան մէջ եւ պար-տապահանջները կը սպառնային դրուել հայոց սրբատեղիները:

Այդօրերուն Երուսաղէմի հայերը առանձին պատրիարք չունէին: Կոստանդնուպոլսոյ հայոց պատրիարքը իր վրան կը կքէր նաեւ Երուսաղէմի Պատրիարք տիտղոսը եւ իր կողմէ կարգուած տե-ղապահներով կը կառավարէր Երուսաղէմի պատրիարքութիւնը: Այս տեղապահները յաճախ եղած են աշխարհականներ կամ քահանաներ, որոնք կոչուած են նազըր:

Դժբախտարար Պուլէն եկող նազըրները օլտակար ըլլալու տեղ, աւելի վնաս հասցուցած են Սրբոց Յակոբեանց վանքին՝ կողոպ-տելով անոր հասոյթները, եւ այդ պատճառով Երուսաղէմի հայոց պատրիարքութիւնը ծանր պարտքերու տակ ինկած է:

1713 թուականին Կոստանդնուպոլսոյ կը հասնի Տարօնի Ս. Կա-րապետ վանքի միաբաններէն Յովհաննէս Կոլոտ վարդապետ՝ հան-դանակութիւն կատարելու համար իրենց վանքի նորոգութեան: Պու-սոյ հայոց երեւելիները Յովհաննէս վարդապետին առաջինի վարքը, պիւրաբարութիւնն ու եռանդուն դործունէութիւնը տեսնելով, աթո-ռակալութեան պաշտօնով զինք կը զրկեն Երուսաղէմ եւ դուժար մըն ալ կը յանձնեն իրեն՝ ի նպաստ Սրբոց Յակոբեանց Միաբանութեան:

Յովհաննէս Կոլոտ Երուսաղէմ հասնելով սիրով կը կապուի Ս. Աթոռին եւ կը ջանայ բարւոքել միաբանութեան սղբալի վիճակը: Սակայն պարտապահանջները շատ կը նեղեն զինք եւ միաբանութիւ-նը՝ իրենց դրամները դանձելու նպատակով: Յովհաննէս Կոլոտ դա-տարան ներկայանալով իր վրան կ'առնէ ամբողջ պարտքին երաշխա-ւորութիւնը եւ կը խոստանայ չորս տարուան ընթացքին մաս առ մաս վճարել:



Յովհաննէս Կոյտ Պատրիարք

Դատարանէն վերադարձին, Յովհաննէս Կոյտ միաբանութեան բոլոր անդամները ժողովի կը կանչէ եւ անոնց առջեւ կը խորտակէ վանքին հասարակաց կնիքը, որուն հետ նախկին նազըրները կը ստորագրէին վանքին անունով փոխ առնուած պարտամուրհակները՝ ծանր պարտքերու տակ ձգելով Ս. Աթոռը:

Այս դէպքէն քիչ ժամանակ ետք Յովհաննէս Կոյտ կ'ուղեւորի Կ. Պոլիս ու հայ մեծամեծներուն կը պարզէ Երուսաղէմի հայոց վանքին տխուր կացութիւնը: Նոյն ատեն անոնց կը յայտնէ թէ այդ ազնուալի կացութեան պատճառը երկու պատրիարքութիւններուն միացումն ու զրկուած նազըրներուն սանձարձակութիւններն են: Կը խնդրէ որ պատրիարքական երկու աթոռները ըստ առաջնոյն անջատուին ի շահ Սուրբ Եկեղեցւոյ եւ ազգին:

Ազգին երեւելիները կ'աջակցին Յովհաննէս Կոյտ վարդապետին եւ կը փութան գործադրել անոր թելադրութիւնը: Նախ զինքը կ'ընտրեն Կ. Պոլսոյ պատրիարք, ապա իր առաջարկով Երուսաղէմի



Գրիգոր Շղթայակիր Պատրիարք

պատրիարք կ'ընտրեն Ս. Կարապետ վանքի վանահայր՝ Գրիգոր Եպիսկոպոս Շիրուանցին:

Երուսաղէմի նորընտիր պատրիարքը Պոլիս գալով կը ձեռնարկէ հանգանակութեան՝ Երուսաղէմի Աթոռին պարտքերը գոցելու համար: Գրիգոր պատրիարք իր վրին կ'անցընէ երկաթէ ծանր շղթայ մը եւ կ'որոշէ զայն չհանել մինչեւ որ Երուսաղէմի հայոց վանքը իր պարտքերէն ազատէ: Աւ այսպէս ութ տարի կը կրէ երկաթէ շղթան՝ դիշեր ցերեկ զայն իր վրան պահելով, որուն համար կը կոչուի Շղթայակիր:

Յովհաննէս Կոյտ եւ Գրիգոր Շղթայակիր պատրիարքներու ջանքերը կ'արդիւնաւորուին: Այլըր ամէն կողմէ նուիրատուութիւններ կ'ընէ եւ մաս առ մաս կը գոցուին Երուսաղէմի հայոց վանքին պարտքերը: Իսկ աւելցած գումարով ալ կալուածներ կը գնուին ու նորոգութիւններ կը կատարուին:

Երկու պատրիարքները կը փայլեն իրենց սրբակրօն կենցաղովն ու շինարարութիւններովը: Յովհաննէս Կոյտ Պոլսոյ մէջ նորոգել կու տայ եկեղեցիներ եւ կը հաստատէ դպրանոց մը, ուր կ'ուսանին

աղմաթիւ աշակերտներ, որոնց մէջէն շատեր կը դառնան արժանա-
որ եկեղեցականներ :

Գրիգոր Շղթալակիր պատրիարքն ալ զիշեր ցերեկ կը տքնի
Երուսաղէմի Ս. Աթոռը բարեկարգելու համար : Վանքին նիւթախան
արիքները հողալով հանդերձ կը սահմանէ կարողապահական կանոն-
եր միարանութեան համար : Կը յորդորէ բոլորը որ ժիր-մշակներ ըլ-
ան Աստուծոյ եւ անձնուիրարար ծառայեն Ս. Եկեղեցիին :

1729 թուին, հայեր Ս. Չառիկի տօնը կը կատարեն Յոյներէն
արաթ մը ետք : Ծաբաթ երեկոյեան, Սուրբ Յարութեան տաճարին
էջ, ձրապալոյցի տօնախմբութիւնը կատարելու ատեն, Գրիգոր
Շղթալակիր պատրիարք արցունքոտ աչքերով աղօթքները կը կար-
այ եւ ապա Յիսուսի գերեզմանին կնքուած դուռը կը համբուրէ ու
ոմերը ձեռքին մէջ կը սպասէ : Երբ դրան վերակացուն կը քակէ
նիքը ու պատրիարքը ներս կը մտնէ, ահուդողով կը տեսնէ լոյսի մը
առաւելանքը Յիսուսի գերեզմանին վրայ : Ս. Պատրիարքը իր մօ-
երը կը վառէ ճառագայթող լոյսէն եւ իր կարգին կը լուսաւորէ Ա-
որիներու առաջնորդին եւ հայ եպիսկոպոսներուն կերօնները : Իսկ
վենէն զարմանալին այն կ'ըլլայ որ Սուրբ Յարութեան տաճարին
դուռը կանխեղները որ մարած էին, յանկարծ կը վառին բազմութեան
չքին առջեւ : Այս հրաշքին ականատես կ'ըլլան հոն գտնուող օտար
եկեղեցականներն ու այլադէի կառավարական պաշտօնեաները : Հա-
եր ի տես այս հրաշքին կ'ողբերուին եւ մեծ ուրախութեամբ կը տօ-
են Ս. Չառիկը :

Գծախաարար Երուսաղէմի եւ Պոլսոյ մէջ երկու սրբապետ
լատրիարքներուն ձեռք բերած յաջողութիւնները կը շարժեն Յոյն
եկեղեցականներուն նախանձը : Անոնք թուրք կառավարական պաշ-
տօնեաները կաշառելով, անոնց միջոցաւ կը դիմեն Սուլթանին եւ կը
անան Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց վանքը իւրացնել : Յոյները ի-
նց չար նպատակին հասնելու համար սուտ խօսքերով կ'աշխատին
ամօզել եւ հաւատացնել Սուլթանը թէ Սրբոց Յակոբեանց վանքը
ոյներուն կը պատկանի. սակայն ժամանակի ընթացքին հայեր
ննութեամբ ձեռք ձգած են դայն :

Գրիգոր Շղթալակիր այս լուրը առնելով Պոլիս կը փութայ եւ
ովհաննէս Կոլտ պատրիարքին հետ կը ջանայ ապացուցանել Յոյ-
երու ամբաստանադիրին անհիմն ըլլալը :

Հայեր Երուսաղէմի իրենց դիւանատունէն կը բերեն հին սուլ-
տաններու կողմէ ստորադրուած հրովարտակներն ու վաւերաթուղ-
երը եւ կը զրկեն Սուլթանին՝ առ ի քննութիւն : Սակայն Սուլթանը

այս խնդիրին քննութիւնը իր մեծ վէճիրին յանձնած ըլլալով, հայոց
զրկած թուղթերն ալ անոր քննութեան կը յանձնէ՝ առանց ինք կար-
դալու : Իսկ մեծ վէճիրը Յոյներու կողմէ կաշառուած ըլլալով ան-
նրկատ կը թողու Հայոց արդար իրաւունքը եւ կը տեղեկադրէ Սուլ-
թանին թէ Յոյներուն պահանջը իրաւացի է : Սուլթանը իր մեծ վէ-
ճիրին թելադրանքին վրայ կ'որոշէ հրովարտակով մը Յոյներուն
յանձնել Սրբոց Յակոբեանց վանքը :

Երկու պատրիարքները երբ այս լուրը կ'առնեն, զիշերով կ'եր-
թան Պոլսոյ Հայ երեւելի ազգայիններէն Յարութեան Ամիրային քով
որ բարեկամն էր թուրքերու կրօնապետ Ծէյիս Իւլ Իսլամին : Ամիրան
երբ եղելութիւնը կ'իմանայ, անմիջապէս կ'երթայ Ծէյիս Իւլ Իսլամին
քով եւ անոր միջնորդութիւնը կը խնդրէ թապաւորին մօտ՝ ի նպաստ
Հայոց :

Ծէյիս Իւլ Իսլամը խնդրին էութիւնը ստուգելով կը ներկայա-
նայ թապաւորին ու խօսակցութեան ընթացքին մէջտեղ կը բերէ Հա-
յոց եւ Յոյներուն խնդիրը : Սուլթանը Ծէյիս Իւլ Իսլամին կը յայտնէ
թէ Հայերը անիրաւութեամբ իւրացուցած են Յոյներուն պատկանող
Սրբոց Յակոբեանց վանքը եւ ինք որոշած է հրովարտակով մը ետ
զարձնել Յոյներուն : Նոյն ատեն կը ցուցնէ Հայոց բերած վաւերա-
թուղթերը :

Ծէյիս Իւլ Իսլամը թապաւորին հաճութեամբ կ'առնէ Հա-
յոց բերած վաւերաթուղթերն ու հրովարտակները եւ կարդալով
մէկիկ մէկիկ կը բացատրէ անոնց բովանդակութիւնը, ուր նշանակ-
ուած էին Հայոց սեփականութիւնները : Անոնց մէջ գրուած էին նաեւ
նղովքներ եւ արգելքներ իսլամական օրէնքին համաձայն, որպէսզի
ոեւէ մէկը չհամարձակէր Հայոց սեփականութիւնները իրենց ձեռքէն
առնելով ուրիշին տալու՝ եթէ չէր ուղեր իր վրայ հրաւիրել այդ
նղովքները :

Թապաւորը Հայոց վաւերաթուղթերուն պարունակութիւնը ի-
մանալով կը սոսկայ ու անմիջապէս զրիչ մը բերել տալով նոր հրօ-
վարտակ մը կը մակադրէ հետեւեալ բառերով, «Ես եւս Հայոց ազգին
տաւի վերադիմն» :

Ծէյիս Իւլ Իսլամը հրովարտակը առնելով կը զրկէ Յարութեան
Ամիրային, որ իր կարգին կը տանի իր տունը, ուր երկու պատրիարք-
ները բազկատարած Աստուծոյ կ'աղօթէին ի խնդիր իրենց արդար
գատին :

Յաջորդ առաւօտ Յոյները ամօթապարտ կը մնան իրենց վատ բարքին համար :

Այնուհետեւ երկու հայ պատրիարքները դարձեալ կը նուիր-ւին իրենց ազգայն ու եկեղեցաշէն գործերուն : Անոնք իրենց անդուլ լշխատանքովն ու սուրբ կեանքովը մեծ անուն կը ձգեն Հայաստան-այց եկեղեցւոյ պատմութեան մէջ :

Յովհաննէս Կոլոտ պատրիարք կը վախճանի 1741 թուականին՝ սանրահիւ պարի պաշտօնավարելէ ետք : Իսկ Գրիգոր Շղթայակիր պատրիարք կը վախճանի 1749 թուին :

Ե Ձ Ր Ա Կ Ա Ց Ո Ի Թ Ի Ի Ն

1) Աստուած կ'օրհնէ ու կ'արգիւնաւորէ մաքուր սրտով ու ան-եղծ նուիրումով աշխատող իր ծառայները :

2) Այս երկու սրբակրօն պատրիարքներուն եռամդն ու անդուլ լշխատանքը մեզի համար գեղեցիկ օրինակներ են : Մենք հետեւելու նմանք Սուրբ Հայրապետներու ընթացքին ու հաւատով եւ ջերմե-անդուքեամբ ծառայելու ենք մեր Ս. եկեղեցւոյն ու Ազգին :

Հ Ա Ր Ց Ո Ի Մ Ն Ե Ր

1) Ի՞նչ վիճակի մատնուած էր Երուսաղէմի Հայոց պատրիար-ութիւնը :

2) Յովհաննէս Կոլոտ վարդապետը ինչո՞ւ համար Պոլիս ե-ւած էր :

3) Յովհաննէս Կոլոտ ո՞ր Աթոռին պատրիարք ընտրուեցաւ :

4) Երուսաղէմի Աթոռին համար զո՞վ ընտրեցին :

5) Ինչո՞ւ համար շղթայակիր կոչեցին Գրիգոր պատրիարքը :

6) Զատկի ճրագարւոյցին ի՞նչ պատահեցաւ Ս. Յարութեան անձարին մէջ :

7) Յոյները ի՞նչ ընել ուզեցին Սրբոց Յակոբեանց վանքը :

8) Երկու պատրիարքները վիշերով ո՞ր աճիրաջին տունը դա-նին :

9) Յարութիւն Ամիրան թաղաւորին մօտ զո՞վ զրկեց :

10) Սուլթանը Հայոց բերած հրովարտարկներուն պարունա-ութիւնը մտիկ ընելէ ետք ի՞նչ ըրաւ :

ԻԷ. ԴԱՍ

ԿԻՐԱԿՈՍ Ա. ՄԵԾԱԳՈՐԾ ԿԱԹՈՂԻԿՈՍ

.....

Մեծի Տանն Կիլիկիոյ Հայրապետներուն մէջ նշանաւոր եղած է Կիրակոս Ա. Աջապահեան Կաթողիկոս, որ կոչուած է Մեծագործ :

Կիրակոս Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ Աթոռին զահակաւ օծուած է 1797 թուին՝ երբ տակաւին 24 տարեկան էր, սակայն կը փայլէր իր առաքինութիւնովն ու սրբակրօն կենցաղովը :

Կիրակոս Կաթողիկոս Սիսեցի Աջապահեան դերդաստանի զա-ւակն էր : Աջապահեաններ նշանաւոր դերդաստան մը եղած են Սիսի մէջ եւ Ս. Գրիգոր Լուսաւորչի, Ս. Նիկողայոսի եւ Ս. Սեղբաստրոսի աջերուն պահպանութիւնը իրենք յանձն առած ըլլալով՝ կոչուած են Աջապահեան : Սոյն դերդաստանէն ինք Կաթողիկոսներ յաջորդաբար նստած են Մեծի Տանն Կիլիկիոյ Աթոռին վրայ :

Կիրակոս Կաթողիկոս Ֆիղիքապէս եղած է բարձրահասակ եւ ներկայանալի անձնաւորութիւն մը, որուն միացուցած է անկեղծու-թիւն, ծառայասիրութիւն, պերճախօսութիւն եւ արիական համար-ձակութիւն : Եղած է հայր բոլորին եւ սիրուած ու յարգուած՝ նոյն-իսկ օտարներէն :

Գանրահիւ պարուն իր զահակալութեան ընթացքին եղած է գործունեայ, շինարար եւ վարչադէտ հայրապետ մը, ծաղկեցնելով Սիսի մայրավանքը :

Սիսի նշանաւոր բերդին ստորտուր կը շինէ եկեղեցի մը՝ օգտու-ղործելով հին աւերակներու քարերը : Նաեւ շինել կու տայ հոյակապ կաթողիկոսարան մը եւ պարիսպով մը կը շրջապատէ զայն ու կը նս-րողէ վանքին այլեւայլ մասերը :

Գժբախտաբար Կիրակոս Կաթողիկոսին կատարած շինարարու-կան աշխատանքները շար մարդոց համար միջոց կ'ըլլան իր մասին զրպարտութիւններ հիւսելու եւ զինք Օսմանեան կայսրութեան զէմ որպէս ապստամբ ցուցնելու :

Այդ օրերուն Զէյթունցիներ ըմբոստացած էին կառավարու-

Թեան դէմ եւ չէին ուզեր վճարել իրենց 60·000 դրուշ տուրքը: Կիրակոս Կաթողիկոսին թշնամիները զինք կ'ամբաստանեն եւ կ'ըսեն թէ ինք կը դործակցի Զէյթունցիներուն հետ եւ իր շինածը վանք մը չէ: Եւ այլ բերդ է, որպէսզի ապագային ըմբոստանայ Սուլթանին դէմ:

Սուլթանը երբ այս լուրը կ'առնէ, ինչպիսիք առանց քննելու, Մարաշի փաշային հրաման կը զրկէ որ Կաթողիկոսը բռնեն ու սպաննեն եւ Զէյթունն ալ քարուքանդ ընեն:

Կիրակոս Կաթողիկոս անցած դարձածէն անտեղեակ ըլլալով կը սկսի պտրտիլ իր թեմերը՝ դրամ հաւաքելու համար՝ ի նպաստ Աթոռին: Ուստի երբ Մարաշ կը հասնի, փաշան ձերբակալել կու տայ Կաթողիկոսը եւ կը վճռէ սպաննել զայն: Այս դէպքին վրայ Հայ ժողովուրդը մեծով ու սղոթիկով սարք կ'ելլէ եւ փաշային մեծապետար կաշառք տալով քառասուն օր յետաձգել կու տայ վճիռին գործադրութիւնը, որպէսզի կարելի ըլլայ Պոլիս՝ Սուլթանին դիմել եւ ապացուցանել Կաթողիկոսին անմեղութիւնը:

Քառասուն օրերու ընթացքին Կիրակոս Կաթողիկոս Պոլսոյ Պողոս պատրիարքին եւ հայ ամիրաներուն կը դրէ իր դժնդակ կացութեան մասին: Պողոս պատրիարքն ու ամիրաները այս լուրը ստանելով անմիջապէս դործի կ'անցնին եւ պետական բարձր պաշտօնեաներուն մօտ երթալով կը հերքեն Կաթողիկոսի մասին եղած անհիմն ամբաստանութիւնը:

Սուլթանին հրամանով Կիրակոս Կաթողիկոս Պոլիս կը բերուի ու կը հարցաքննուի: Անբասիր Հայրապետը կը յայտնէ թէ ինք արքունի հրովարտակով ձեռնարկած է եկեղեցւոյ ու վանքի շինութիւններուն եւ իր մասին եղած ամբաստանութիւնները զրգարաութիւններ են:

Թուրք մեծամեծները կը համոզուին Կաթողիկոսին անմեղ ըլլալուն եւ զինք պատրիարքարան կը զրկեն եւ կ'առաջարկեն իրեն որ առան մը սպասէ եւ Սուլթանին կողմէ տրուած ներողութեան թուղթով մը վերադառնայ իր Աթոռը:

Մի քանի օր յետոյ Կաթողիկոսը նորէն արքունի դուռը կը կանչուի եւ թաղաւորին հրամանով կը յարգորեն զինք որ Զէյթունցիներուն տարեկան 60·000 դրուշ հարկը ինք վճարէ:

Կաթողիկոսը կը պատասխանէ.

— Անոնք ապստամբ մարդիկ են, ոչ տէրութեան հրամանին կ'ենթարկուին եւ ոչ ալ ինծի: Անոնց համար որեւէ բան չեմ կրնար ընել ու վճարել:

— Գոնէ տարեկան 20·000 դրուշ վճարէ, կ'ըսեն նախարարները:
— Ես ամէն տարի կը վճարեմ իմ եւ իմ վիճակիս հարկը, սակայն այդ ապստամբներուն համար փող մը իսկ չեմ վճարեր:

Նախարարները Կաթողիկոսին խօսքերը իրաւացի գտնելով կը տեղեկագրեն Սուլթանին, որուն հրամանով ներողութեան հրովարտակը կը դրուի ու կը յանձնուի Կիրակոս Կաթողիկոսին, որպէսզի երթայ իր Աթոռը:

Պոլսոյ հայերը շատ կ'ուրախանան այս յաջողութեան համար եւ կը ինչդրեն Կաթողիկոսէն որ Պոլսոյ բոլոր եկեղեցիները այցելէ ու ժողովուրդը օրհնէ եւ ապա մեկնի իր Աթոռը:

Կիրակոս Կաթողիկոս երեք տարի մնաց Պոլսոյ մէջ եւ իր այցելութիւններովն ու քարոզներովը մեծապէս օգտակար եղաւ հաւատացեալ ժողովուրդին: Անոր Պոլիս դռնուած միջոցին հայութիւնը կը յուզուէր կաթողիկոսի վէճերով: Իմաստուն Հայրապետը իր հայրական յորդորները չլրացաւ սիրոյ միութիւն մը ստեղծելու համար, որպէսզի հայ կաթողիկոսները չհեռանային իրենց Մայրենի եկեղեցիէն: Սակայն մինչ կը կարծուէր թէ վէճերը դադարած են, յանկարծ խոզվարար տարրեր խանդարեցին գործը եւ ապարդիւն անցան թափուած ջանքերը:

Կիրակոս Կաթողիկոս վերադարձաւ Կիլիկիա ի մեծ ուրախութիւն իր ժողովուրդին: Սակայն դժբախտաբար երկար չտեսց իր կեանքը: Պոլսէ վերադարձէն երկու տարի վերջ, Ղօզանեան կոչուած թուրք բռնաւոր մը թումարգայի մօտ դիւզի մը մէջ թոյնով լեցուած սուրճի գաւաթ մը հրամցուց իրեն: Սուրճը խմելէն ետք, Հայրապետին մարմինը սկսաւ ուռիլ եւ երկու ժամ վերջ աւանդեց իր հողին:

Կաթողիկոսին մարմինը բերին Սիս եւ թաղեցին իր շինած եկեղեցիին մէջ:

Կիրակոս Կաթողիկոսի դէմ թուրք բռնաւորին սարքած դատաւարութեան պատճառ նկատուած է հայրապետին ազատատենչ ոգին: Անոր գահակալութեան շրջանին Կիլիկիոյ Հայութիւնը կը հեծէր Ղօզան Օղլու կոչուած թուրք աւատապետներու լուծին տակ, որոնք բռնութիւններ կ'ընէին սանձարձակօրէն: Հայրապետը ուղած էր ճողպրիլ Ղօզան Օղլուներու ազդեցութենէն: Բռնաւորը հասկնալով այս բանը վատաբար թուեաւորեց զայն:

Կիրակոս Կաթողիկոս իր անձը ի սպաս դրաւ իր սիրեցեալ հօտին հողեկան ու ֆիզիքական փրկութեան համար: Վարչական բացառիկ կարողութիւններով օժտուած ըլլալուն, ձեռնհասօրէն կառավարեց:

րեց իր հօտը եւ իր անխոնջ աշխատանքովն ու ձեռներէցութեամբը բարձրացուց Մեծի Տանն Կիլիկիոյ Աթոռին հմայքը: Անոր շինարարութիւնները հիացում պատճառած են Սիսի մայրավանքը այցելող մեծ անձնաւորութիւններուն, որոնց կարգին կը յիշուի Եգիպտոսի արար Իպրահիմ փաշան, որ երբ Կիլիկիա կ'արշաւէ, Սիսի մայրավանքը այցելած ատեն կը հիանայ Կիրակոս Կաթողիկոսի շինարարութիւններուն վրայ ու կը բացազանչէ, «Ասիւժ մարդ, դուն իմ ժամանակս ապրած ըլլալու էիր»:

Ե Ջ Ր Ա Կ Ա Ց Ո Ի Թ Ի Ի Ն

- 1) Կիրակոս մեծագործ կաթողիկոս եւ իր նմանները քրիստոնէութեան ջանք բարձր բռնեցին ու իրենց անձը գոհելով յամձն առին ամէն տեսակ նեղութիւններ ու գրկանքներ իրենց հօտին սիրոյն համար:
- 2) Մեր երանաշնորհ հայրապետներուն քաղցր յիշատակը վառ պահելով պէտք է ընթանանք անոնց շաւղներէն:

Հ Ա Ր Ց Ո Ի Մ Ն Ե Ր

- 1) Քանի՞ տարեկանին կաթողիկոս օծուեցաւ Կիրակոս Ա. Հայրապետը:
- 2) Ո՞ր Աթոռին Հայրապետն էր ան:
- 3) Կիրակոս կաթողիկոս ի՞նչ շինել տուաւ Սիսի մայրավանքէն ներս:
- 4) Չարամիտ մարդիկ ի՞նչ տեսակ ամբաստանութիւն ըրին իրեն դէմ:
- 5) Սուլթանը կաթողիկոսի մասին եղած ամբաստանութիւնը իմանալէ ետք ի՞նչ հրամայեց Մարաշի փաշային:
- 6) Այդ օրերուն Ձէյթունցիները ի՞նչ ըրած էին:
- 7) Պոլսոյ Հայոց պատրիարքն ու Հայ ամիրաները կաթողիկոսին անմեղութիւնը փաստելու համար ի՞նչ կ'ընէին:
- 8) Կառավարութիւնը կաթողիկոսը հարցաքննելէ ետք ի՞նչ եզրակացութեան կու գայ:
- 9) Կիրակոս կաթողիկոս քանի՞ տարի կը մնայ Պոլսոյ մէջ եւ ի՞նչ կ'ընէ հոն:
- 10) Ո՞վ կը թունաւորէ Կիրակոս կաթողիկոսը:

ԻԸ. ԴԱՍ

ՆԵՐՍԷՍ Ե. ԱՇՏԱՐԱԿԵՑԻ ՀԱՅՐԱՊԵՏ

.....

1842 թուին երբ Յովհաննէս Կարբեցի Կաթողիկոսը վախճանեցաւ, համայն հայութեան իղձն ու փափաքը եղաւ՝ տեսնել Ներսէս Արք. Աշտարակեցին՝ Ամենայն Հայոց Հայրապետական Աթոռին վրայ:

Ներսէս Աշտարակեցին ծնած է Հայաստանի Արագածոտն գաւառի Աշտարակ գիւղին մէջ 1770ին: Որդին էր Տէր Յարութիւն քահանայ Շահազիզեանի: Ներսէս իր պատանեկութենէն աշակերտեցաւ Էջմիածնի դպրանոցին, ուր սկսաւ աչքի զարնել իր ուշիմութեամբ:

Կուսակրօն քահանայ ձեռնադրուելէ ետք այլեւայլ պաշտօններով այցելեց Թուրքիոյ եւ Ռուսաստանի դանապան քաղաքները՝ վայելելով ժողովուրդին համակրութիւնը:

Եպիսկոպոս ձեռնադրուեցաւ 1808ին՝ Դանիէլ Սուրմառեցի Կաթողիկոսէն: Ընտրուեցաւ Էջմիածինի Սինոդի անդամ եւ ցուցաբերեց բեղուն դործունէութիւն:

1814ին սրանձնեց Թիֆլիսի Հայոց առաջնորդութիւնը, զոր վարեց ձեռնհասօրէն եւ կարգ կանոն մտցուց ամէն տեղ: Պայքարեցաւ կամայական անկարգութիւններու եւ զեղծումներու դէմ:

Ներսէս Աշտարակեցին գեղեցիկ դաղափարը ունեցաւ Թիֆլիսի թեմը օծտելու արդիական վարժարանով մը որպէսզի Հայ աշակերտները կարենային ստանալ բարձր ուսում: Նիւթական սրեւէ պատրաստ գումար չունէր Ներսէս Աշտարակեցին, երբ վարժարան մը հիմնելու ծրագիրները կը մշակէր:

Մոսկուայէն Լազարեան իշխանը Ներսէս Աշտարակեցիին ծրագիրը իմանալով, 5000 ուսբի նուէր դրկեց՝ Թիֆլիսի մէջ վարժարանի շինութեան համար: Ներսէս Աշտարակեցին այդ գումարով հիմը դրաւ շէնքին եւ լծուեցաւ գործի: Ժողովուրդը իր առաջնորդին ետանդն ու աշխատանքը տեսնելով ոգեւորուեցաւ եւ սկսաւ օժանդակել նիւթապէս ու բարոյապէս: Երեք տարուան մէջ աւարտեցաւ վարժարանի շէնքին շինութիւնը եւ այնուհետեւ դարձաւ կովկասահայութեան լուսաւորութեան գլխաւոր կեդրոնը:

Ներսէս Աշտարակեցիի առաջնորդութեան շրջանին ծագեցաւ



Ներսէս Ե. Աշտարակեցի Կաթողիկոս

Ռուս-պարսկական պատերազմը: Ներսէս Արքեպիսկոպոս յորդորեց եւ քաջալերեց հայ երիտասարդները որ կամաւոր արձանագրուին եւ ռուս բանակին օժանդակեն ու անոր կողքին կուռին հայկական հոգերու ազատագրութեան համար:

Անոր կոչը արձապանց գտաւ լոճէն կողմ եւ հազարաւոր հայեր կամաւոր արձանագրուեցան: Ներսէս Աշտարակեցին անձամբ գլուխ կանգնեցաւ հայ կամաւորական շարժումին: Ռուսական բանակը իրար ետեւէ գրաւեց Շուշին, Նախիջեւանը, Էջմիածինն ու Երեւանը, եւ ապա հասաւ մինչեւ Քաւրից: Ի վերջոյ պարսիկները խոնարհեցան յաղթական բանակին առջեւ ու ստորագրեցին Քիւրք-մէնչաշի դաշնագիրը 1828ին: Ներսէս Աշտարակեցիի ջանքերով 40.000 հայեր Պարսկաստանէն դաղթեցին եւ հաստատուեցան Նախիջեւանի եւ Երեւանի շրջանները:

Ռուս-պարսկական պատերազմէն ետք Ներսէս Աշտարակեցիին բուն հայրենասիրութիւնը ախորժելի չթուեցաւ ռուսական բանակի հրամանատար Պասքելիչին որ շատ բան կը պարտէր անոր իր յաղթական յառաջնապայքին մէջ: Հազիւ թէ պատերազմը վերջացաւ, Պասքելիչ հեռացնել ուզեց Ներսէսը Հայաստանէն ու Թիֆլիսէն, քանի որ ան կը փափաքէր կիսանկախութիւն ձեռք բերել Հայաստանի համար:

Պասքելիչ ստիպեց օրուան եփրեմ Կաթողիկոսը որ Ներսէս Արքեպիսկոպոսը զրկէ հեռաւոր Պետրապոլա քաղաքը, տեղւոյն առաջնորդութիւնը ստանձնելու համար: Ներսէս Աշտարակեցին ակամայ հոմակերպեցաւ այդ կարգադրութեան՝ բարբութիւններ չըստեղծելու համար: Հետագային եփրեմ Կաթողիկոս Ռուսիոյ Չարին գիմեց եւ իր ծերութիւնը պատճառ բռնելով ինչպէս Ներսէս Աշտարակեցիին էջմիածին վերադարձը: Սակայն ապարդիւն անցան հայցապետին ջանքերը:

Ներսէս Աշտարակեցին Պետրապոլա երթալով կազմակերպեց այդ փոքրիկ թեմը եւ պայծառացուց եկեղեցիները:

1843ին ազգին միահամուռ փափաքին վրայ ընտրուեցաւ Ամենայն Հայոց Կաթողիկոս եւ Բեղերսպուրի գնաց Ռուսիոյ Չարին ներկայանալու: Չարը սիրալիր վերաբերում ցոյց տուաւ նորընտիր կաթողիկոսին: Բեղերսպուրիէ վերադարձին Ներսէս Աշտարակեցին այցելեց Ռուսիոյ զանազան քաղաքները եւ խրախուսեց ու ոգևորեց հայ դպրութիւնները՝ թելադրելով անոնց փառել իրենց Ս. Եկեղեցիին ու դպրոցին: Ամէն կողմ արժանացաւ համազգային փառաւոր ընդունելութեան ու յարգանքի: Ի վերջոյ հասաւ Թիֆլիս: Հինգ ամիս մնաց հոն եւ եկեղեցական ու կրթական կարգադրութիւններ ընկէ ետք անցաւ Էջմիածին: Իր կաթողիկոսական օժուճը կատարուեցաւ մեծ շուքով, որուն մասնակցեցան 14 եպիսկոպոսներ:

Այնուհետեւ Ներսէս Կաթողիկոս լծուեցաւ բարեկարգութեանց եւ շինարարական աշխատանքներու: Էջմիածինի մէջ տնկել տուաւ անտառ մը, շինել տուաւ լիճ մը եւ դամանոց մը՝ ընտանի կենդանիներ պահելու համար: Հիմնեց մետաքսի գործարաններ եւ զանազան նորոգութիւններ կատարեց Էջմիածինի վանքէն ներս: Վանազան նորոգութիւններ կատարեց ինչպէս Վանքի վանքէն ներս: Վանազան նորոգութեան կենցաղը բարւոքեց եւ կարգապահութիւնը զօրացուց Գնահատեց լաւերը եւ պատժեց ու սանձահարեց անարժաններն ու զեղծարարները: Կազմակերպեց Թիֆլիսի Ներսէսեան վարժարանը որոյն լաւ տարբերու մատակարարութեան յանձնելով:

Ներսէս Աշտարակեցի հայրապետը դահակալեց 11 տարի ե

վարձանեցաւ Թիֆլիսի մէջ: 1857 Փետրուար 13ին, առաւօտեան մեռած գտնուեցաւ իր գրասեղանին առջեւ՝ դրիչ է ձեռին: Մարմինը փառաւոր հանդէսով փոխադրուեցաւ Ս. Էջմիածինի վանքը եւ մեծ շուքով կատարուեցաւ Թաղման արարողութիւնը:

Ներսէս Աշտարակեցիին եղաւ ժիր, պործունեայ, ողորմած, դժասիրտ եւ ներող հայրապետ մը, որ իր հօտին հոգեւոր փրկութեան եւ հայրենիքի ազատութեան համար որեւէ զոհողութեան առջեւ կանգ չառաւ: Իր սեղանը միշտ բաց եղաւ աղքատներուն առջեւ:

Ներսէս Աշտարակեցիին ունեցաւ նաեւ նախանձորդներ, բամբասողներ եւ իրեն դէմ խոչընդոտ հանդիսացող հակառակորդներ: Սակայն ինք ներեց անոնց եւ ոխ չպահեց ոեւէ մէկուն դէմ, մնալով միշտ վեհանձն:

Ե Ձ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Ի Ի Ն

1) Ներսէս Աշտարակեցի հայրապետը իր մէջ կը մարմնաւորէր եկեղեցասիրութեան ու հայրենասիրութեան տիպար մը: Իր իտէպը եղաւ ազգին դաստիարակութիւնն ու հայրենիքին ազատագրութիւնը:

2) Նորահաս հայ սերունդը պէտք է ներշնչուի Ներսէս Աշտարակեցի հայրապետին եկեղեցասիրական ու ազգասիրական գգաւմներէն եւ ընթացայ անոր ուղիէն:

Հ Ա Ր Ց Ո Ւ Մ Ն Ե Ր

- 1) Ո՞ւր ծնած է Ներսէս Աշտարակեցին:
- 2) Որո՞ւ գաւազն էր Ներսէս Աշտարակեցին:
- 3) Թիֆլիսի մէջ ի՞նչ շինել տուաւ:
- 4) Ռուս-պարսկական պատերազմի առեւն ի՞նչ ըրաւ:
- 5) Պատերիչ զօրավարը ինչո՞ւ համար կովկասէն հեռացնել տուաւ Ներսէս Աշտարակեցիին:
- 6) Պեսարապիոյ թեմը ի՞նչ վիճակ ստացաւ Աշտարակեցիի առաջնորդութեան առեւն:
- 7) Քանի՞ եպիսկոպոսներ ներկայ եղան Աշտարակեցիի օժման:
- 8) Կաթողիկոս օծուելէ ետք ի՞նչ գործեր կատարեց:
- 9) Ներսէս Աշտարակեցիին իր հակառակորդներուն հանդէպ ի՞նչ վերաբերում ունեցաւ:

ԻԹ. ԴԱՍ

Խ Ր Ի Մ Ե Ա Ն Հ Ա Յ Ր Ի Կ

.....


Սրբիմեան Հայրիկ ծնած է 1820ին Վանի մէջ: Պատանեկութեան կը մտնէ Վարապայ վանքը ուսանելու համար: Տասներութ տարեկանին որպէս պանդուխտ կ'երթայ Պոլիս եւ կ'ուզէ հետեւիլ բարձր ուսման: Սակայն իր այդ ծրագրին որեւէ միջոց կամ օգնական չունենալուն, կը ստիպուի դրազիլ կօշկակարութեամբ: Նոյն առեւն ինքնազարգացումի ետեւէ կ'ըլլայ եւ կ'ուզէ օւտակար ըլլալ իր արհեստակիցներուն՝ անոնց ուսում ջամբելով: Հետզհետէ բաւական թիւով արհեստակիցներ կը բոլորուին իր շուրջը ու դորձը ընդարձակուելով ինք կը ստանայ վարժապետի համբաւ, եւ օրին մէկին ալ Պասքէօյի վարժարանէն ներս կ'ընդունուի որպէս ուսուցիչ:

Մի քանի տարի ուսուցչութեամբ դրազելէ ետք կը վերադառնայ Վան, ու իր մօրը պնդումներուն վրայ կ'ամուսնանայ եւ կ'ունենայ աղջիկ մը: 1850ին նորէն կ'երթայ Պոլիս եւ նոյն տարին կը հրատարակէ իր «Հրաւիրակ Արարատեան» բանահիւսութիւնը: Ապա կ'ուղեւորի Երուսաղէմ եւ ետ Պոլիս դառնալով կը հրատարակէ իւ երկրորդ գործը՝ «Հրաւիրակ Երկրին Աւետեաց»: Ծուտով կը բարձրանայ Սրբիմեանին անունը եւ զինք կը շրջէն Կիլիկիա՝ Ղուկաս Ե պիսկոպոս Աջապահեանի հետ՝ կարեւոր պաշտօնով մը: Նոյն առեւն կը յանձնարարուի իրեն Կիլիկիոյ մէջ դպրոց բանալ:

1852ին Սրբիմեան կը վերադառնայ Վան ու կ'իմանայ իր կնո եւ աղջկան մահը, որուն վրայ կը մտնէ Վարապայ վանքը: 1854ին կ'ձեռնադրուի արեղայ՝ 34 տարեկանին, եւ ապա կը ստանայ վարժապետական գաւազան:

Մկրտիչ Սրբիմեան վարժապետ եկեղեցական աստիճան ստանալէ ետք այլեւս իր ուշադրութիւնը բոլորովին կը կեդրոնացնէ հստոյնովուրդի հոգեւոր - մտաւոր վերածնութեան եւ անտեսական վերակերտումին:

1855ին դարձեալ կ'երթայ Պոլիս եւ կը հրատարակէ «Արժ»



Խրիմեան Հայրիկ

«Հասպուրական» թերթը՝ նպատակ ունենալով Հայաստանի հայա-
 ւորնակ դաւաճումները ծանոթացնել Պոլսոյ Հայոց եւ անոնց ուշադրու-
 թեան յանձնել գաւառներուն ողբալի կացութիւնը:

Երկու տարի ետք նորէն կը վերադառնայ Վան, Վարազայ
 վանքի վանահայրութիւնը ստանձնելու համար, եւ իրեն հետ կը
 տանի սպաղրական պիտոյքներ:

Խրիմեան վարդապետ Վարազայ վանքը հասնելով կը լծուի
 շինարար աշխատանքի: Կարճ ժամանակամիջոցի մը մէջ վանքը
 կ'ազատէ իր պարտքերէն: Կը բանայ ժառանգաւորաց վարժարան մը
 30 դիշերօթիկ աշակերտներով: Անոր կողքին կը հաստատէ նաեւ
 երկրագործական բաժին մը: Վանքին կալուածները կ'օգտագործէ,
 յաճախ իր իսկ ձեռքով մշակելով դանոնք: Վանքը կը զարդարէ ծա-
 րաստաններով: Կը կատարէ նարդութիւններ: Կը հաւաքէ դրջադրե-

րը եւ կը դասաւորէ դանոնք: Կը հաւաքէ նաեւ հնութիւններ եւ իր
 համեստ միջոցներով թանգարանի մը հիմը կը դնէ: Կը բանայ տպա-
 րան ու «Արծիւ Վասպուրական» թերթը կը վերահրատարակէ Վա-
 րազայ վանքէն:

Խրիմեան վարդապետի գալէն առաջ Վարազայ վանքը գրեթէ
 աւերակ վիճակի մէջ էր: Կարդ մը մարդիկ ի շահ իրենց զբոյանին եւ
 ի վնաս ազդին, կը շահագործէին վանքին եկամուտները եւ ապա
 պարտքի տակ կը ձգէին զայն: Խրիմեան պաշտօնի անցնելով վերջ
 կու տայ այդ սանձարձակութիւններուն:

Առհասարակ բոլոր ժողովուրդը, նա մանաւանդ ուսմիկ եւ շի-
 նական դասակարգը որդեկան սիրով կը լողորուի Խրիմեան վար-
 դապետին հանդէպ եւ կը սկսի կոչել Հայրիկ ու այդ անունով ճանչ-
 նալ զինք: Սակայն վանքին նախկին պաշտօնէութեան մէջ գանուող
 զեղծարարները կը նախանձին իրեն ու կը սկսին թշնամանալ. եւ օր
 մըն ալ քիւրտ աւազակ մը կաշատելով կը զրկեն զայն սրպէսդի վերջ
 դնէ Խրիմեան Հայրիկի կեանքին:

Խրիմեան Հայրիկ ըստ իր սովորութեան, վանքէն դէպի Վան
 քաղելով երթալու տուն կը հանդէպի քիւրտին: Երբ Հայրիկը քիւր-
 տին երեսն ի վեր կը նայի, աւազակը կը շփոթի եւ կը սկսի դողալ ու
 շնորհալի եկեղեցականին առջեւ ծունկի դալով կ'ըսէ. «Կ'ուզէի քեզ
 սպաննել... սակայն Աստուած ձեռքս բռնեց... եւ խղճիս ձայնը ին-
 ծի ըսաւ որ Աստուծոյ օրհնելալին վրայ սուր չբարձրացնեմ»: Խրիմ-
 եան Հայրիկ քիւրտին ձեռքէն բռնելով վեր կը վերցնէ զայն եւ կը
 պատուիրէ որ եղած դէպքը ոեւէ մէկուն չյայտնէ: Սակայն քիւրտը
 ամէն տեղ կը պատմէ պատահածը՝ դաւազիրներուն անունները տա-
 ւով:

1862ին Խրիմեան Հայրիկ կը նշանուկուի Տարօնի առաջնորդ եւ
 Գլխայ Ս. Կարապետ վանքին վանահայր: Թրաշան Հայրիկը կ'ուզի
 այդ վանքն ալ բարեկարգել. սակայն տեղացի վարդապետներն ու ա-
 նոնց հետեւորդները մեծամեծ դժուարութիւններ կը յարուցանեն ե-
 քութիւններով ու ամէն կերպ դէշ արարքներու դիմելով արգել
 կ'ըլլան իրեն:

1868ին Խրիմեան վարդապետ էջմիածին երթալով եպիսկոպոս
 կը ձեռնադրուի Գէորդ Դ. Կաթողիկոսէն: Իսկ 1869ին կ'ընտրուի Կ
 Պոլսոյ Պատրիարք: Այդ առթիւ Օսմանեան կառավարութեան կը բռ-
 զոքէ հայկական դաւաճումներու մէջ պատահող քրտական բարբարոսու-

թիւներուն համար: Չորս տարուան պաշտօնավարութենէ ետք կը հրաժարի պատրիարքութենէ:

1878ին կը գլխաւորէ Պեւլիւնի վեհաժողովին ներկայացող հայկական պատուիրակութիւնը:

1879ին կ'ընտրուի վանի առաջնորդ, ուր մեծապէս օղտակար կ'ըլլայ իր ժողովուրդին՝ Ռուս-Թրքական պատերազմին պատճառով յառաջ եկած սովին ժամանակ:

1890ին Սուլթան Համիտի հրամանով Խրիմեան Հայրիկ կ'աքտորուի Երուսաղէմ:

1892ին կ'ընտրուի Ամենայն Հայոց Կաթողիկոս և Երուսաղէմէն ճամբայ կ'ելլէ: Նախ կը հանդիպի Եգիպտոս, ապա Թրիեստ, Վիեննա, Օտեսա, Պաթում, Թիֆլիս և անկէ ալ Երեւան և Էջմիածին: Ճամբու ընթացքին ամենուրեք կ'արժանանայ ժողովրդական յարգանքներու և պատիւներու:

Խրիմեան Հայրիկի կաթողիկոսութեան շրջանը շատ խաղաղութիւն չտեսաւ: 1895ին տեղի կ'ունենային թուրքիոյ Հայոց ջարդերը Սուլթան Համիտի հրամանով, որոնց դոյժը կը խոցոտէր Հայոց Հայրիկին սիրտը:

Ռուս կառավարութիւնը սկիզբէն ի վեր կը հետամտէր ուսուցընել Կովկասի հայութիւնը և այդ պատճառով ալ տարիներ առաջ փակած էր հայ վարժարանները, սակայն Մակար Կաթողիկոսի խընդրանքով արտօնած էր մաս մը վարժարաններու վերաբացումը՝ զանազան սեղմումներու ենթարկելով զանոնք:

Ռուս ձարական կառավարութիւնը հասկցած էր որ Հայաստանեայց Եկեղեցին հայապահպանման կարեւորագոյն բերդն էր և կարելի չէր հայութիւնը ուսուցնել՝ առանց անոր եկեղեցին իրեն ենթարկելու: Ուստի 1903 թուականին Չարը հրամանադիր մը հանեց և պահանջեց հայ եկեղեցիներու կալուածներուն և դոյքերուն յանձնումը ուս կառավարութեան. փոխարէնը կը խոստանար հայ եկեղեցականներուն նիւթականը ինք հողալ:

Խրիմեան Հայրիկ ընդդիմացաւ այս որոշման դէմ և բոյոր թեմերու առաջնորդներուն և պատասխանատու մարմիններուն հրահանգեց որեւէ բան չյանձնել:

Խրիմեան Հայրիկին կոչը անարձագանդ չմնաց: Ամէն կողմ կազմուեցան բողոքի ցոյցեր: Հայ ժողովուրդը մէկ մարդու պէս ծառայաւ ուս կառավարութեան ապօրինի որոշումին դէմ: Կաթողիկոսին թիկունք կեցան հայ քաղաքական կազմակերպութիւններն ու

արտասահմանի հայերը: Պայքարը տեւեց երկու տարի և ի վերջոյ ուս կառավարութիւնը տեղի տուաւ և վերադարձուց բոնի կերպով իր դրաւած հայոց եկեղեցական կալուածները:

Խրիմեան Հայրիկ 1907ին փակեց իր աչքերը՝ տասնըհինգ տարուան գահակալութենէ մը վերջ: Ան 87 տարի ապրեցաւ, ու աշխատեցաւ իր ազգին համար: Սիրեց իր ժողովուրդը, նամանաւանդ գիւղացի ու ռամիկ դասակարգը: Ուզեց զանոնք լուսաւորել Աւետարանի լոյսով: Ազգային գեղեցիկ աւանդութիւնները ժողովուրդին մէջ վառ պահելու և Աւետարանի շունչով հայը դաստիարակելու մտօք գրեց «Մարգարիտ Արքայութեան Երկնից», «Վերջին Երապճառ Խաչի», «Պապիկ և Թոռնիկ», «Սիրաք և Սամուէլ», «Իրախտի Ընտանիք» և այլ գիրքեր:

Ե Զ Ր Ա Կ Ա Յ Ո Ի Թ Ի Ի Ն

1) Խրիմեան Հայրիկ եղաւ քաջ հովուապետ մը և ժիր մշակ Ս. Աւետարանին: Բուռն հայրեմատէր էր և շատ կը սիրէր իր ազգը: որուն հոգեւոր ու մտաւոր վերագարք-նուսին և ֆիզիքական ապահովութեան համար նուիրեց իր ամբողջ էութիւնը:


2) Իր նկարագրի գլխաւոր գիծերն էին՝ անկեղծութիւն, խոնարհութիւն, հեզութիւն, ներդաժմանութիւն, ծառայասիրութիւն ողորմածութիւն, եւայլն:

3) Իւրաքանչիւր հայ իր սրտին մէջ պէտք է վառ պահէ Խրիմեան Հայրիկին անուռն ու յիշատակը և ջանայ նմանիլ անոր՝ ըլլալով եկեղեցաւոր, ազգաւոր ու հայրեմատէր:

Հ Ա Ր Յ Ո Ի Մ Ն Ե Ր

- 1) Ո՞ր ծնած է Խրիմեան Հայրիկ:
- 2) Ո՞ր վանքին մէջ ստացած է իր ուսումը:
- 3) Պոյսոյ մէջ իր արհեստակիցները շուրջը հաւաքելով ի՞նչ րբաւ:

- 4) Ի՞նչ էր իր պաշտօնը Վարադայ վանքին մէջ:
- 5) Իրմէ առաջ ի՞նչ վիճակի մէջ էր Վարադայ վանքը:
- 6) Ի՞նչ դարձեր տեսաւ Վարադայ վանքէն ներս:
- 7) Խրիմեան Հայրիկին թշնամիները ի՞նչ ըրին իրեն դէմ:
- 8) Քիւրտ աւաղակը ի՞նչ ըրաւ եւ ի՞նչ ըսաւ Հայրիկին:
- 9) Խրիմեան Հայրիկ ո՞ր Աթոռին պատրիարք ընտրուեցաւ:
- 10) Խրիմեան Հայրիկ ո՞ւր աքսորուեցաւ:
- 11) Ո՞ր թուականին Կաթողիկոս ընտրուեցաւ:
- 12) Ռուս կառավարութիւնը ի՞նչ հրամանագիր հանեց:
- 13) Չարը հայոց եկեղեցական կալուածները գրաւելով ի՞նչ նպատակ կը հետապնդէր:
- 14) Խրիմեան Հայրիկ ի՞նչ հրահանգեց բոլոր թեմերու առաջնորդներուն եւ պաշտօնէութեանց:
- 16) Ո՞ր թուականին վախճանեցաւ Խրիմեան Հայրիկ:



Լ. ԴԱՍ

ՍԱՀԱԿ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԽԱՊԱՅԵԱՆ

.....

Սահակ Կաթողիկոս Պապայեան ծնած է 1849ին Սարրերգի եղէգ գիւղին մէջ: Իր աւաղանի անունն է Գարրիէլ: Նախնական ուսումը կը ստանայ գիւղի դպրոցին մէջ եւ մանուկ հասակէն կը դասնայ եկեղեցատէր պատանի մը ու ամէն օր, առտու իրիկուն գիւղի եկեղեցիին մէջ շապիկ հագնելով կը մասնակցի ժամասացութեան:

17-18 տարեկանին իր ծնողքը զինք կը տանին Երուսաղէմ ու մեծ փափաքով կը յանձնեն ժառանգաւորաց վարժարան, որպէսզի իրենց զաւակը ապագային վարդապետ դառնայ:

Ժառանգաւորաց վարժարանին մէջ Գարրիէլին ուշիմութիւնն ու լրջութիւնը աչքի կը զարնէ եւ շուտով զինք կը ձեռնադրեն սարկաւազ, ու երկու ընկերներով կը դրկեն Պոլիս, ուր երկու տարի եւս ուսանելէ ետք երեքն ալ կը վերադառնան Երուսաղէմ՝ լծուելու համար ուսուցչութեան՝ ժառանգաւորաց վարժարանէն ներս:

1877ին Եսայի պատրիարքէն կը ձեռնադրուի կուսակրօն քահանայ՝ կոչուելով Սահակ Արեղայ, որմէ ետք կը ստանայ վարդապետական զաւաղան:

1877ին կ'այցելէ իր ծննդավայրը եւ տպա Պոլիս: Իր ճամբորդութեանց ընթացքին հանդիպած քաղաքներու եւ գիւղերու եկեղեցիներուն մէջ կը քարոյզ:

1881ին կ'երթայ Էջմիածին եւ ապա հինգ տարի կը մնայ Կովկասի մէջ՝ Նուիրակի պաշտօնով ու մօտաւորապէս 6000 օսմանեան ոսկի կը հանգանակէ Երուսաղէմի վանքին համար:

1885ին Երուսաղէմի միաբանական ժողովը զինք կ'ընտրէ լուսարարապետ: Երուսաղէմ վերադառնալէ առաջ Մակար Կաթողիկոսէն կը ձեռնադրուի Եպիսկոպոս:

Սահակ Եպիսկոպոս 17 տարիներ հաւատարմօրէն կատարեց Երուսաղէմի լուսարարապետութեան պատասխանատու պաշտօնը:



Սահակ Բ. Կաթողիկոս
Մեծի Տանն Կիլիկիոյ

Բարգեճ Ա. Աթոռակից Կաթ.
Մեծի Տանն Կիլիկիոյ

Հիացում պատճառելով բոլորին, միեւնոյն ատեն ալ ուսուցչութեան պաշտօն վարեց ժառանգաւորաց վարժարանէն ներս:

Ուսուցչական պաշտօնի ընթացքին պատրաստած է կրօնի, աշխարհադրութեան եւ պատմութեան դասագիրքեր, որոնք երկար ատեն գործածուած են ժառանգաւորաց վարժարանէն ներս եւ այլ վարժարաններու մէջ:

1902ին Սահակ եպիսկոպոս Կաթողիկոս ընտրուեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Աթոռին համար: 1903 Ապրիլ 30ին կատարուեցաւ իր օծումը՝ մեծ ուրախութիւն պատճառելով հայ ժողովուրդին:

Մկրտիչ Քէյֆսիզեան Կաթողիկոսի վախճանումէն ետք, Մեծի Տանն Կիլիկիոյ Աթոռը թափուր մնացած էր եօթը տարիներ, եւ Սիսի մայրավանքը մատնուած էր շատ խեղճ վիճակի մը: Սահակ Կաթողիկոս ջանաց վերակազմել ու բարեկարգել Աթոռը, սակայն նիւթականի պակասը կը դանդաղեցնէր իր դործը: Այցելեց իր թեմերը եւ խանդավառութիւն ստեղծեց ամէն կողմ: Ձեռնադրեց եպիսկոպոսներ եւ սկսաւ թեմերը կազմակերպել: 1906ին վերաբացաւ Սիսի մայրավանքի ժառանգաւորաց վարժարանը՝ նիւթական նեղ

պայմաններու տակ, եւ կը յուսար աւելի լաւ օրերու համնիլ: Սահայն 1909ին պատահեցաւ Կիլիկիոյ աղէտը եւ 30.000 հայեր ջարդու-ւեցան Ատանայի եւ անոր շրջակայքին մէջ:

Կիլիկիոյ աղէտը գլխիվայր դարձուց Սահակ Կաթողիկոսին յոյսերն ու ծրագիրները: Ջարդէն ետք տարաբախտ Հայրապետը ամէն կողմ պտրտեցաւ մխիթարելու համար իր հօտը եւ ամօքելու անոր ցաւերը:

Կիլիկիոյ աղէտէն հինգ վեց տարի ետք վրայ հասաւ առաջին համաշխարհային պատերազմը եւ սկսաւ Թուրքիոյ հայոց տարագրութիւնը: Սահակ Կաթողիկոսն ալ տարադրուեցաւ Երուսաղէմ եւ տառապեցաւ իր սիրեցեալ հօտին հետ:

Ձինադադարէն ետք գնաց Ատանա: Ամիս մը ետք վերադարձաւ Երուսաղէմ եւ անկէ անցաւ Եգիպտոս, վերապրող հայ բեկորներու համար՝ հանդանակութիւն կատարելու: 1919ին Ատանա վերադառնալով սկսաւ կազմակերպել իր թեմը՝ նոր յոյսերով: Ուղեւորեցաւ Եւրոպա ու գնաց Փարիզ: Տեսակցութիւններ ունեցաւ Ֆրանսայի նախագահին, վարչապետին եւ նախարարներուն հետ ու անոնց պարզեց Կիլիկիոյ վիճակը: Սակայն որեւէ օգուտ չունեցան իր դիմումները եւ Քրանսական բանակը սկսաւ պարպել Կիլիկիան: Հայ ժողովուրդն ալ ինքզինքը անապահով դգալով լքեց իր երկիրը ու գաղթեց Սիւրիա եւ Լիբանան:

Սահակ Կաթողիկոս իր ժողովուրդին հետ անցաւ Սիւրիա: Մեծի Տանն Կիլիկիոյ Աթոռին ապահովութեան եւ տեսականացումին համար անընդհատ աշխատեցաւ ու աքնեցաւ: Այցելեց իր օպլին բեկորները՝ մերթ ընդ մերթ երթալով Հալէպ, Դամասկոս, Պէյրութ, Կիպրոս եւ այլն: Իր ջանքերով ու կարգադրութիւններով նեղ պայմաններու տակ կազմուեցան Լիբանանի, Բերիոյ, Դամասկոսի, Անտիօքի եւ Կիպրոսի թեմերը: Սակայն տարաբախտ Հայրապետը չունէր հաստատուն կայան մը, ուր հաստատէր իր Աթոռը եւ վերջ տար իր Թափառական կեանքին:

Բարեբախտաբար 1930 թուին Մերձաւոր Արեւելքի նպաստամատոյց Ընկերութիւնը Անթիլիասի մէջ որբանոցի համար իր գնած կալուածը Սահակ Կաթողիկոսի տրամադրութեան տակ դրաւ՝ տարեկան մէկ տոլար անուանական վարձքով: Սահակ Կաթողիկոս անմիջապէս իր Աթոռը հաստատեց Անթիլիասի մէջ եւ Հոկտեմբերին բացուեցաւ Անթիլիասի դպրեվանքը 37 աշակերտներով:

Սահակ Կաթողիկոս իր յառաջացեալ տարիքը նկատի ունենա-

յով 1928ին առաջարկած էր Բարդէն Եպիսկոպոս Կիւլէսէրեանին Աթոռակից եւ յաջորդ ըլլալ իրեն: Բարդէն Եպիսկոպոս հանրածանօթ էր իր մտաւորական պաշարով եւ անցեալի բեզուէն գործունէութեամբ. իսկ այդ օրերուն կը վարէր Երուսաղէմի պատրիարքութեան «Մլտն» ամսագիրի խմբագրապետութիւնը:

Բարդէն Եպիսկոպոս Սահակ Կաթողիկոսի կոչին ընդառաջելով 1930ին Անթիլիաս եկաւ ու լծուեցաւ կաթողիկոսարանի վերակազմութեան եւ զպրեկանքի զարգացման՝ իրեն աջակից ունենալով զպրեկանքի վերատեսուէ Շահէ Մ. Վրդ. Գասպարեանը:

Հեազհեաէ կաթողիկոսարանը զարգացաւ եւ ունեցաւ իր սպարանն ու մատենադարանը:

1929ին, Լիբանանի քաղաքներէն Պատլպէքի մէջ գումարուեցաւ ժողով մը, ուր հաւաքուեցան Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան եւ Համաշխարհային Կիրակնօրեայ Դպրոցներու Ամերիկեան Ընկերութեան ներկայացուցիչները: Պատլպէքի ժողովը որոշեց կազմակերպել Կիրակնօրեայ Դպրոցներ, Հայաստանեայց Եկեղեցւոյ մանուկներուն եւ պատանիներուն կրօնարարութեան դաստիարակութիւն ջամբելու համար: Ժողովին ներկայ էր Բարդէն Եպիսկոպոս եւ կը ցանկար օր առաջ տեսնել Կիրակնօրեայ Դպրոցներ Հայ Եկեղեցիներու կողքին:

Սահակ Կաթողիկոս Պատլպէքի ժողովին հաղորդազրուութիւնը ստանալով, օրհնութեամբ սղջունեց եւ զայն վաւերացուց ու իր 1930 Յունիս 28 թուակիր կոնդակովը հաստատեց:

Այդ սրբատառ կոնդակով ծնունդ առին Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցները՝ վայելելով Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հովանաւորութիւնը:

Սահակ Կաթողիկոս Բարդէն Եպիսկոպոսին գործունէութիւնը դնահատելով Արքութիւն շնորհեց անոր եւ ապա Հալէպի մէջ Կիլիկեան թեմերու պատգամաւորական ժողովը գումարեց եւ հոն միաձայնութեամբ իրեն Աթոռակից Կաթողիկոս ընտրել տուաւ Բարդէն Արք. Կիւլէսէրեանը. իսկ 1931 Ապրիլ 26ին կատարեց անոր օծումը, ի մեծ ուրախութիւն հայ ժողովուրդին:

Բարդէն Կաթողիկոս Անթիլիաս գալէն ետք Եպիսկոպոս ձեռնադրեց զպրեկանքի վերատեսուէ Շահէ Մ. վարդապետը: 1932 Յունուար 1ին լոյս տեսաւ կաթողիկոսարանի «Հասկ» պաշտօնաթերթին առաջին թիւը՝ Աթոռակից Հայրապետին խմբագրապետութեամբ: Անթիլիասը սկսաւ հեազհեաէ ծաղկել եւ հասցնել շրջանաւարտներ,

որոնցմէ մի քանիներ ձեռնադրուեցան կուսակրօն քահանայ եւ շատեր ալ որպէս ուսուցիչ եւ դպրապետ պաշտօնավարեցին Սիւրիոյ եւ Լիբանանի թեմերէն ներս: 1936ին Անթիլիասի մէջ Բարդէն Կաթողիկոս մեծ հանդիսութեամբ կատարեց միառնորհնէք:

Ուրախ էր Սահակ Հայրապետը որ իր ծերութեան ատեն կըրցած էր ապահովել իրեն արժանի աթոռակից եւ յաջորդ Կաթողիկոս մը որ սրտովին նուիրուած էր Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռին: Սակայն 1936 Յունիս 9ին Բարդէն Աթոռակից Կաթողիկոս կը վախճանէր, խոր սուզի մատնելով համայն հայութիւնը:

Սահակ Կաթողիկոս դարձեալ կը մնար տառնձին իր խոր ծերութեան մէջ: Մերունազարդ Հայրապետը Կաթողիկոսական ընդհանուր փոխանորդ նշանակեց Կիպրոսի թեմի առաջնորդ՝ Պետրոս Արք. Սարաճեանը:

Սահակ Կաթողիկոսի վերջին տարիներուն Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյց Ընկերութիւնը ծախու հանեց իր կալուածը: Սարաճեան Սրբազան Գայրզճեան ընտանիքին նուիրատուութեամբ դնեց զայն եւ կաթողիկոսարանը դարձաւ ազդին սեփականութիւն: Ապա այլեւայլ նուիրատուութիւններով սկսան Մայր Տաճարի եւ զպրեկանքի շինութիւնները:

Սահակ Կաթողիկոս վախճանեցաւ 1939 Նոյեմբեր 8ին խոր ծերութեան մէջ: Իր աչքերը չփակած հաստատ հիմերու վրայ դրուած տեսաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Աթոռը:

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ի Թ Ի Ի Ն

1) Երանաշնորհ Սահակ Կաթողիկոս միշտ սիրեց իր հօտը եւ ամէն ջանք քափեց անոր հոգեւոր, մտաւոր ու ֆիզիքական բարօրութեան համար: Տառապեցաւ իր ժողովուրդին հետ: Նեղ օրերու ե պայմաններու տակ հպստտտ պանեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Աթոռը: Մտածեց ու աշխատեցաւ անոր յարատեւումի համար եւ ամուր հիմերու վրայ դնել էտք փակեց իր աչքերը:

2) Իր գուրգուրանքին առարկայ դարձուց Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցները, որոնք ծագում առին իր սրբա տառ կոնդակով եւ վայելեցին ու մինչեւ այսօր կը վայելեն Մեծ Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հովանաւորութիւնը:

3) Հայ ժողովուրդը եւ նամանաւանդ Կիրակնօրեայ Դպրոցի աշակերտները իրենց սրտերուն մէջ վառ պահելու են Սահակ Կաթողիկոսին յիշատակը :

4) Զանաւե նմանիլ մեր երանաշնորհ հայրապետներու բարի օրինակին եւ ըլլանք տիպար հայ քրիստոնեաներ՝ պատիւ բերելով մեր Սուրբ Եկեղեցիին ու ազգին :

Հ Ա Ր Յ Ո Ւ Մ Ն Ե Ր

1) Ո՞ւր ծնած է Սահակ Կաթողիկոս :

2) Քանի՞ տարի վարած է Երուսաղէմի լուսարարապետութիւնը :

3) Ո՞ր Աթոռին Կաթողիկոս ընտրուած է :

4) Տարագրութեան ատեն ո՞ւր աքսորուեցաւ :

5) Կիլիկիոյ պարպումէն ետք ո՞ւր վնաց եւ վերջապէս ո՞ւր հաստատեց իր Աթոռը :

6) Ո՞վ ընտրուեցաւ իրեն Աթոռակից եւ յաջորդ :

7) Ո՞ր թուականին վախճանեցաւ Բարզէն Կաթողիկոս :

8) Որո՞ւ կոնդակով ծնունդ առին Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցները :

9) Բարզէն Կաթողիկոսի մահէն ետք ո՞վ նշանակուեցաւ կաթողիկոսական ընդհանուր փոխանորդ :

10) Ե՞րբ վախճանեցաւ Սահակ Կաթողիկոս :



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

- Ա. Հայոց Առաջին Լուսաւորիչները — Ս. Թադէոս Առաքեալ
- Բ. Հայոց Առաջին Լուսաւորիչները — Ս. Բարթողիմէոս Առաքեալ
- Գ. Ոսկեանք եւ Սուփասեանք
- Դ. Սուրբ Թէոդորոս Սպառնոնի
- Ե. Սուրբ Գրիգոր եւ Մեծն Տրդատ
- Զ. Հռիփսիմեանք եւ Գայիանեանք
- Է. Հայաստանի Ամբողջական Դարձը
- Ը. Ս. Գրիգոր Լուսաւորչի Յաջորդները
- Թ. Մեծն Ներսէս Հայրապետ
- Ժ. Հայ Գիրքերու Գիւտը
- ԺԱ. Արշակունեաց Թագաւորութեան Անկումը
- ԺԲ. Վարդանանց Պատերազմը
- ԺԳ. Դեմպետ Իշխանին Դարձը
- ԺԴ. Սրբուհի Շուշան Վարդենի
- ԺԵ. Գիւտ եւ Յովհան Մանդակունի Հայրապետներ
ու Վահանեանց Ապստամբութիւնը
- ԺԶ. Բարզէն Կաթողիկոս եւ Դուրմի ժողովը
- ԺԷ. Կոմիտաս Կաթողիկոս
- ԺԸ. Սահակ Գ. Զորափորեցի Կաթողիկոս
- ԺԹ. Յովհան Օճնեցի Հայրապետ
 - Ի. Սուրբ Վահան Գողթնացի
 - ԻԱ. Սուրբ Գրիգոր Նարեկացի
 - ԻԲ. Սուրբ Ներսէս Շնորհալի
 - ԻԳ. Սուրբ Գրիգոր Տաթեւացի
 - ԻԴ. Հայաստանեայց Եկեղեցւոյ Նաիրապետական Աթոռները
 - ԻԵ. Ս. Մովսէս Տաթեւացի Հայրապետ
 - ԻԶ. Յովհաննէս Կոլոս եւ Գրիգոր Շքաբայկի
 - ԻԷ. Կիրակոս Ա. Մեծագործ Կաթողիկոս
 - ԻԸ. Ներսէս Ե. Աշտարակեցի Հայրապետ
 - ԻԹ. Խրիմեան Հայրիկ
 - Լ. Սահակ Բ. Կաթողիկոս Խապայեան